1897

ԹԻՒ Ը· ՕԳՈՍՏՈՍ

ԲՐԵՍՆԵՒ-ՄԷԿԵԲՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՎԻ Ի.Ա. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ՈՒՐՔԵՐՈՐԴ | ՕԳՈՍՏՈՍ 1897 Թ.

ՀՐԱՄԱՆԱՒԵՍ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
1897

Дозволено цензурою 4 сентября 1897 г. Тифлисъ.

ՀԻՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ.

(Շարունակութիւն) *

Գ.

Եկեղեցական հնութիւնների կարգում ս. Դաստատակից և Տիրամօր պատկերից յետոյ գրկեմ առաջին տեղն է գրաւում վերևը նկարագրուած ս. Ամենափրկիչը: Թէ ո՞ւր, երբ և ո՞վ է քանդակել այդ պատկերը, մեզ յայտնի չէ. գիտենք միայն, որ Հայաստան բերուած է նա Ք. գարում և այն ժամանակից մինչև օրս պահուել է Հայոց վանքերում:

Ք. գարու պատմիչ Ղևոնդ վարդապետը, խօսելով Աշոտ Պատրիկ իշխանի վերայ, յայտնում է, որ նա իւր ոստանի մէջ մի եկեղեցի շինեց և նորա մէջ ամփոփեց «զկենդանարար. պատկերը մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մոմից արուեստ»· այս իսկ պատկերն է ս. Ամենափրկիչը,[1] որ իրեն անցեալի հետ միասին հանդէս է բերում պատմութեան մէջ և Աշոտ Պատրիկին: Ք. դարի վերջերում, ինչպէս յայտնի է, հիւսիսից Հայաստան արշաւեցին Խազերները և ասպատակ սփռեցին երկրի մէջ: Ժամանակի իշխանը՝ Գրիգոր Պատրիկ Մամիկոնեան՝ զօրքով ելաւ նոցա հալածելու և պատերազմի մէջ սպանուեցաւ 683 թուին: Անցուկս մնացած երկրի առաջնորդութիւնն անցաւ Բագրատունի Աշոտ Պատրիկ իշխանին.[2] ինչպէս նկարագրում է Ղևոնդ պատմիչը, Աշոտ էր «այր երևելի և նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց, ճոխ և պերճ յիշխանութեանն, յամենայն վարս երկրային զգաստ և առաքինասէր, և ամենուրեան քան զամենեսեան, և ծանօթ երկիւղին Աստուծոյ, և հոգարարձու ամենայն բարեգործութեան, և փոյթ յուսումնասիրու-

* Տես. Արարատ 1897, թ. Ի. եր. 289.

1. Ղևոնդ Պատմ. գլ. Ե.. 2. Ցուխ. կամ. գնում է Գրիգ. Մամիկոնեանից յետոյ «ըՍմբատ Բագրատունի որդի Սմբատայ» եր. 53 (Մոսկ.).

թեան»: Այսպիսի ընտիր յատկութիւնների շնորհիւ նախամեծար էր Աշոտ ոչ միայն Հայոց նախարարների, այլև բիւզանդական կայսերութեան աւագանու մէջ. պատրիկ տիտղոսը, որով ծանօթ է նա պատմութեան մէջ, տրուում էր միայն Բիւզանդիոյ առաջնակարգ իշխաններին:[1]

Չորս տարի խաղաղ առաջնորդեց Հայոց երկրին Պատրիկն Աշոտ. «զարդարեր զեկեղեցիս Աստուծոյ վարդապետական արուեստիւք և պաշտօնէից համբաւորութեամբ, ասում է Ղևոնդ, պատուէր և երևելի սպասուք յիւրոց գանձուց»: Ինչպէս ընտանեկան կեանքի մէջ խաղաղ էր և աշխարհաշէն, այնպէս էլ ապէտների և ամբոխումների ժամանակ քաջասիրտ էր և անձնուէր: 688 թուին, երբ արաբացի զնդերն յարձակուեցան Հայոց վերայ և սկսեցին ասպատակել Ջուղայի կողմերն Երասխի հովտում, Աշոտ անձամբ առաջնորդեց իւր զնդերին ասպատակութեան առաջն առնելու. յարձակուողների մասին վկայում է Ղևոնդ, թէ «էին որդիք յանցանաց և զաւակք անօրէնութեան, զորս հարկապահանջութեամբ խոշտանգէին և զկանայսն զաղարից պղծութեամբ խորհէին խայտառակել»: Սակայն Աշոտի զնդերը «հարին զամենեսեան սատակմամբ սրոյ, և զմնացորդսն փախստա-

1. Բիւզանդական կայսերութեան իշխանների ամենաբարձր պատուանուններն են մագիստրոս և պատրիկ. տերութեան գլխաւոր պաշտօնեներն յանձնուում էին այդպիսի իշխաններին. Հանդիսանների ժամանակ արքայազուններից յետոյ նոքա առաջին տեղն էին գրաւում. հրաւէրների ժամանակ, երբ ձայնում էին իշխաններին կայսեր առաջ գնալու, նախ մտնում էին պատրիկները, որոնք կըրում էին ծիրանի թիկնոց և գայիսոն, այն ինչ բոլոր միւս պաշտօնեաները կայսեր գահի առաջ պետք է աջ ծունկը խոնարհեցնէին և հեռանային, պատրիկներն ունէին արտօնութիւնն մտնելու կայսեր անձին և համբուրելու նորա լանջը աջ կողմից, իսկ կայսրներն այդ ժամանակ համբուրում էին նոցա գլուխը: Մի ժամանակ կար, որ այդ առաջնակարգ տիտղոս կրողների թիւը 12 հոգուց աւելի լինելու չէր.

կան առնէին»։ Արաբացւոց զօրավարն, իւր գնդի այդպիսի պարտութիւնը տեսնելով, զիմեց խորամանկութեան։ Նա հրամայեց իւր ժողոված ոսկին ու արծաթը շաղ տալ դաշտի մէջ Հայոց զօրքի առջև։ փայլուն մետաղը տեսնելով, Հայերն «անխորհրդաբար» ընկան աւարի վերայ և մոռացան իրենց պարտքը Թշնամուն հալածելու։ այն ժամանակ Աշոտ Պատրիկ «սակաւ արամբք» ընկնում է Թշնամու յետևից և հալածում։ սակայն Թշնամիք զօրանում են և յարձակուում Աշոտեան խմբի վերայ։ կռուի մէջ Աշոտ ծանր վերք է առնում, որն և ստիպում է Հայերին խելքի գալ և յարձակուելով Թշնամու վերայ, լուծել Աշոտի վրէժը։ Ծանր հարուածից չազատուեցաւ Աշոտ։ զօրավարները բերին նորան իւր տոհմական կալուածքը Կոգովիտ, ուր նա «ի նոյն մահիճս վախճանեցաւ փառաւորապէս և թաղեցաւ ի կայս հանգստեան իւրոյ ի գիւղն Դարիւնս»։ [1]

Թէև Հայոց հեղինակների կաճառի մէջ Աշոտ Պատրիկ յայտնի չէ իբրև նշանաւոր մատենագիր, սակայն աւանդութիւնից մենք գիտենք, որ նա երգել է Զորս ըստ պատկերին շարականը։ այդ տեղեկութիւնը մեզ հաղորդում է ԺԳ. դարու պատմիչը մեծն Վարդան։ նա ասում է, որ «Աշոտի շինեաց զԴարբիւնից եկեղեցին յանուն Փրկչական պատկերին, զոր երբէք որպէ նորա (Սմբատ) յարևմըտից մասամբ, և ի նաւակատիքն երգեաց (այլ օր. զրեաց) Զորս ըստ պատկերին»։ [2] այս տեղեկութիւնը չենք գտնում մեւս յիշատակարանների մէջ Վարդանից յառաջ և յետոյ, սակայն նորա յիշում են Աշոտ Պատրիկի ուսումնասէր լինելը։ [3] «վասն յուսումնասիրութեան, ասում է Ղևոնդ, «զարգարեր զեկեղեցիս ...վարդապետական արուեստիւք»։ այսպիսի ակնարկներից կարելի է մակաբերել, որ Աշոտ գրասէր էր և գրագիտութեան արդասիքներ թողած ապագաներին. նորա շարականը մի բարեպաշտական երգ է՝ նուիրուած այն եկեղեցուն, որ ինքը շինեց Դարոյնքում և այն պատկերին, որն ամփոփեց այն եկեղեցու մէջ։

Դարոյնք (Դարբիւնք, Դարօնք) աւանը կագովիտ գաւառի ոստանն է և գտնուում էր արդի Հին Բայազիտի մօտերը։ այժմ էս այնտեղ նկատելի է Աշոտ պատրիկի կանգնած եկեղեցու աւերակը, որ տեղական ժողովուրդն անուանում է Ամենափրկիչ։ [1] նորա հիւսիսային և հարաւային պատերի վերայ արձանագիր կայ, թէև եղծուած. այն մի քանի տողերից, որ կարդացուում են, կարելի է տեսնել, որ արձանագրի լիմասն համեմատ է Ղևոնդ պատմագրի խօսքերին։ հիւսիսային որմի վերայ կարդացուում է. «ի պատրկութեան .... իշխան Հայոց ազգի ....» իսկ հարաւային որմի վերայ «ի ծագաց մտից արեւու ածեալ պարգևել մեզ Հաճեցար, որ յամենայնի ...»։ Այս հատուկտոր խօսքերը կարող են գաղափար տալ մեզ արձանագրի ամբողջութեան մասին, որ ծանօթ պէտք է լինէր Ղևոնդ պատմագրին և որից, ինչպէս երևում է, օգտուել է նա. «Ու շինէր զեկեղեցին Դարբինից յիւրում ոստանին, ասում է Ղևոնդ Աշոտի համար, և զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արեւու մեծասքանչ զօրութեամբ հանդուգնեցեր ի նմա, և նորա անուամբ զեկեղեցին անուանեցաց»։ Պատմչի այս տեղեկութիւնների աղբիւրն, անշուշտ, յիշեալ արձանագիրն է, որի խօսքերից «ի ծագաց մտից արեւու ածեալ» գրեթէ բառացի կրկնում է Ղևոնդ։ Մարդեղութեան պատկերի անուանով կնքուած եկեղեցին ԺԳ. դարում էր ս. Փրկիչ անունով, ինչպէս և պատկերն էլ կոչուում էր Փրկչական։ [2] իսկ թէ նոյն դարում այդ պատկերն իւր առաջին տեղումն էր, այդ մասին ժամանակի պատմիչները չեն խօսում։

Ժամանակի ընթացքում Դարոյնքի եկեղեցին անշքացաւ, դուրս այլ կողմնակի պատճառներ նպաստեցին նորա անկմանը, բայց գլխաւորն այն է, որ ս. պատկերը փոխադրե-

1. Ղևոնդ Պատմ. գլ. Ե. (Ս.Պբրգ.)։
2. Վարդան Պատմ. եր. 71 (Վենետ.)։
3. Ասողիկ Բ. կ. (Ս.Պբրգ.)։

1. Շահխաթունեան Ց. եպ. ստորագրութիւն ևլն.

2. Մխիթ. Այրիվանեցի, տես՝ 696 թուակ. Վարդան, եր. 71։

բուեցաւ Հաւուց Թառայ վանքը։ Հայոց հին վանքերից մէկն է եղել Հաւուց Թառ կամ Հայոց Թառ կոչուած մենաստանը, որ Երևանայ կողմերում Գեղարդայ վանքի մօտն է և կոչուում է նաև Ամենափրկչի վանք։ ԺԱ. դարում Գրիգոր Մագիստրոս նորոգում է այդ վանքն և ընծայում է նորան Փրկչական ս. պատկերը, ինչպէս երևում է նոյն վանքի արձանագրից։ Գրիգոր Մագիստրոս խօսելով ս. պատկերի մասին, յայտնում է, որ նա անձեռագործ է, յօրինուած է փայտի վերայ Տիրամօր հրամանով և ս. Յովհաննէս աւետարանչի ցանկութեամբ (ինդրելին Յոհաննու)։ Արդէն վերևը պարզուեցաւ, որ ս. Յովհաննէս աւետարանիչը փայտի վերայ յօրինեց Տիրամօր պատկերը, որ գրուեցաւ Հոգեաց վանքում։ Գրիգոր Մագիստրոսի խօսքերից այժմ իմանում ենք, որ նոյն առաքեալը նոյնպէս փայտի վերայ յօրինած է եղել և մարդեղութեան կամ Փրկչական պատկերը, որ յայտնի չէ, թէ երբ և ինչ ճանապարհով Բագրատունեաց տոհմից անցել էր Պահլաւունիներին և դառել էր վերջիններիս հայրենիք, այսինքն հայրենական, ժառանգական սեփականութիւն։ Որ Գրիգոր Մագիստրոսի յիշած ս. պատկերը Դարոյնքի ս. Փրկչինն է, այդ երևում է արձանագրի այն խօսքերից, որոնք առնուած են Աշոտ պատրիկի շարականից. «և նորոգեալ վերստին հաստատեցաք զսուրբ ուխտս, ասում է Մագիստրոս, վերջինս քան զառաջինն. աստ եղաք զվէմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ»։ Այս խօսքերը, որ վերաբերում են թէ վանքին և թէ պատկերին, գրեթէ նոյնութեամբ կան Զորս ըստ պատկերին շարականի մէջ։ Ահա շարականի ամբողջութիւնը.

«Զորս ըստ պատկերի քում ստեղծեր,
Նորոգելով Քեզ տաճարացուցեր,
Զնորոգեալս ի մէնջ զտաճարս
Ընկալ քեզ ի բնակութիւն։
Որ շնորհես մեզ, կենաց տուող,
Զկենդանագիրդ քո ծառայական կերպի,
Բերելով զողորմից վերբերողդ,
Ի փառս սուրբ երրորդութեանդ։
Կեցո՛ զորդի ծառայի քո,
Զոր ի հոռվմայ զահիցն վերապատուեցեր,
Ո՞ւր եղեն գլէնտ հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ։
Որ զվերջինս զայս հրաշազարդեցեր,
Քեզ հատի բնակցութեամբ հիմնափայլեցեր,
Զանծալի եւ զփայլեալ փառս տանս
Այս վերջինս զան պահեալին»։

Այս շարականն ուղիղ հասկանալու համար առաջարկում ենք հետևեալ աւելի պարզ և պիւրամատչելի ձևն արձակ ոճով. եթէ սոյն շարականն եղծուած կամ կրճատուած չէ, մենք Աշոտ Պատրիկի խօսքերը կարդում և հասկանում ենք այսպէս.

«Ծուա՛ղդ կենաց, որ ի փառս սուրբ Երրորդութեանդ շնորհես մեզ զկենդանագիրդ քո ծառայական կերպի, որ բերէ (յինքեան) զվերբերողդ բոլորից՝ ընկալ քեզ ի բնակութիւն զտաճարս (զայս), զնորոգեալս ի մէնջ, զորս (զմեզ) ստեղծեր ըստ պատկերի քում և նորոգելով տաճարացուցեր քեզ»։

---

1. Արձանագրի խօսքերն այս են. «ՆԿԲ. (1013 Թուին)՝ ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեան տէր Սարգսի ես Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցին յիշատակ ինձ և ծնողացն իմոց, նաև ի տէրանցն աշխարհիս գանձադին արարի զվայրս սորա լերամբն և գաշտամբն և ամենայն կազմութեամբն, որ ի սմա, քառապէմբ, ջրոս անկեամբ յաջամբ և ահեկամբ, ի դիմաց և ի թիկանց. և տուաք յիշատակ անջնջելի արձանագրով և աշխարհակալ թագաւորի թղթովն և կայսերական կնքովն. հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն. եւ ի նուագասիս տամարիս, զոր շինեցաք, ընծայեցաք զհայրենիս մեր ս. եկեղեցւոյս, որ է Հայոց Թառ, հանգստարան եւ օթարան անմեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին, խնդրելին Յոհաննու ս. աւետարանչին հրամանաւ Մօր Տեառն մերոյ ս. Աստուածածնին. եւ նորոգեալ հաստատեցաք վերստին ս. ուխտս վերջինս զան զառաջինն. աստ եդաք զվէմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ։ Գրիգոր Վահրամ պատանին»։ Այս արձանագիրն յետոյ խախտուել է. 1721 Թուին նորա տակն այսպէս է գրուած. «վերոյգրեալ արձանս գրեալ կայր ի վերայ ս. Ամենափրկչին արքայաշէն դարպասին գուրս կոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէ խախտեալ կայր. ՌՃՀ (1721) Թուին Աստուածատուր կաթուղիկոսն կամեցաւ վերստին նորոգել. ի քակելն ես Փուրդ Յովհաննէս իմ ձեռամբս վեր առի զարձանս և գրեցի (գրեցի՞) աստ»։ Շահխաթունեան, տող. 575։

«(Դու), որ զվերջինս զայս (տուն) հրաշազարդեցեր, և քեզ չափ բնակցութեամբ հիմնափայլեցեր զպանծալի և զփայլեալ փառս տանըս՝ այս վերջինս քան զառաջինն, զորդի ծառայի քո, զոր վերապատուեցեր ի գահիցն Հռովմայ, կեցո՛ (աստ, ի տանս), ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ»։

Որպիսի՛ վեմ բարեպաշտական զգացմունք։ Իւր որդու բերած ս. պատկերի համար կանդնելով Դարոյնքի եկեղեցին, որ թերևս մինչ ցայն մի անշուք մատուռ էր, Աշոտ Պատրիկ նորա նաւակատեաց հանդէսը կատարելու ժամանակ հոգւով վերանում է կենաց Տուողի աշխարհ աթոռի առաջ. նախ՝ մտաբերում է, որ ինքն ստեղծուած է իբրև նոյն կենաց Տուողի պատկեր, և Փրկչի կենարար արիւնով նորոգուած է մի և նոյն ժամանակ իբրև տաճար և բնակարան Աստուծոյ. մատուցանելով անկարօտ Արարչին իւր նորոգած տաճարը, խնդրում է ընդունել այն իբրև օթևան այն ս. պատկերի, որ շնորհուած է իբրև կենաց Տուողի ծառայական (մարդկային) կերպի կենդանագիր, և իւր վերայ կրում է «բոլորից վերաբերողի» նմանութիւնը։ Ապա Աշոտ Պատրիկ հոգևկան բերկրութեամբ զուարճանում է, տեսնելով, որ իւր կառուցած եկեղեցին աւելի փառաւորուած, հրաշազարդուած, հիմնափայլած է Փրկչի ներկայութեամբ («քեզ չափ բնակցութեամբ»), և ոգի է առնում, ճանաչելով, որ նոյն իսկ այդ բնակցութեան պատճառով իւր կանդնած տաճարի այս վերջին փառքն աւելի մեծ է առաջինից. Թէպետև ինքը կայսրներից («ի Հռովմայ գահիցն») փառաւորուած է պատիւներով, սակայն իրեն ամենից մեծ պարգև է համարում այդ ս. պատկերը, ուստի ինքն իրեն համար (ըստ ոմանց իւր համան) խնդրում է, որ կենաց Տուողը փրկութիւն տայ, կեցուցանէ իրեն այն տեղ, ուր ամփոփուած է ս. պատկերն իբրև «վէմ հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ»։ Բնական և արդար խնդրուածք։ Նա փափագում է իւր հոգևոր կենդանութիւնը տեսնել այն տեղ, ուր եկեղեցու հաստատութեան վէմն է. նա, դիտենալով, որ նիւթական ամբոյ շինուածները անդամ եղծանելի են, կամեցել է իւր զգացումներով, իւր դաղափարներով միշտ կենդանի մնալ և նոյն իսկ իւր անցաւոր կեանքից յետոյ էս ապրել այն տեղ, ուր անխափան կը կատարուի եկեղեցու նաւակատեաց հանդէսը և կերգուի իւր շարականը միշտ կրկնելու համար նորա հոգու փրկութեան խնդրուածքը։ Պատկերամարտութեան դարերում Աստուծոյ անեղծանելի պատկեր հանդիսացող բարեպաշտ քրիստոնեայ իշխանի բերանից ս. պատկերի համար յայտնած այդպիսի ջերմ ոգևորութիւնն և հաւատն արդարև միշտ անմոռանալի յիշատակ կը մնայ ապագայ սերունդի համար, քանի կայ ս. եկեղեցու հաւատոյ հաստատութեան վէմը։

Աշոտի շարականի մէջ տարօրինակ մեկնութեան առարկայ է եղել սակայն այն հատուածը, որտեղ յիշուում է Հռովմայ անունն և «վէմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ»։ Դեռ ԺԲ. դարում Ներսէս Լամբրոնացին Յուսիկ ճգնաւորին գրած թղթի մէջ ասում է. «Զոր լուծանեն մեկնիչք ընդարձակ բանիւ ի վերայ Թադաւորական քաղաքին, ուր եղաւ վէմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ ըստ ումեմն ի մեր վարդապետաց»։ իսկ Լևոն արքային գրում է, թէ Որպէս ասի յերդ մի, ուր առ մեզ եղանակի կեցո՛ զորդի ծառայի քո, զոր ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր և այլն։ Այդ յիշելով, Ն. Լամբրոնացին ուզում է ասել, որ Ղ. Պօլսի կամ Նոր Հռովմայ եկեղեցին է հաւատոյ հիմքը։ Ուրիշներն աւելի հեռու են գնում և Նոր Հռովմայ փոխարէն հին Հռովմն են ուզում ճանաչել. մինչև անգամ մեր ժամանակներում Մատթէոս Կաթուղիկոսը, կամենալով ապացուցանել Դաշանց թղթի սուտ լինելը, Աշոտ Պատրիկի շարականի նոյն խօսքերը գնում է, իբրև այլոց, իբրև փաստ։ Այն ինչ այսպիսի մեկնութիւնը բոլորովին համեմատ չէ ո՛չ գրուածքի մտքին և ո՛չ էլ աւանդութեանը։ Աշոտ Պատրիկ իւր երդն յօրինելու ժամանակ, անշուշտ, աչքի առաջ է ունեցել սաղմոսերգուի խօսքերը, «Ցո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քո և այլն»։ և նոցա համեմատ հիւսել է խնդրուածք իւր կամ իւր որդու կենդանութեան մասին. նորան չեն շրջացուցել աշխարհային փառքերն ու պատիւ-

ները, որ Հռովմայ գահերից ունեցել է, այլ նա երազում է մի այնպիսի մխիթարութեան կամ երջանկութեան մասին, որն անանցանելի է, այն է կենալ, ապրել անդ, ուր դրուեցաւ սուրբ եկեղեցու Հաւատի Հաստատութեան վէմը, որի դէմ չարաչար մաքառում էին մոլեռանդ մահմետականութեան ներկայացուցիչ արաբացիները։ Աշոտ Պատրիկի նոյն այդ միաքն այդպէս հասկացել և այդպէս կրկնել է Գրիգոր Մագիստրոս, որ ս. պատկերի համար Հաւուց Թառայ արձանագրում նոյն բառերով ասում է, թէ «ասա եղաք զվէմն Հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ»։ Մագիստրոսի այս խօսքերից, որ վերաբերում են ս. պատկերին, ոչ ոք, յոյս ունինք, չպիտի եզրակացնէ, թէ Հաւուց Թառայ վանքը Կ. Պօլիսն է կամ Հռովմը, և Հաւատացնէ ուրիշներին թէ բոլոր միւս եկեղեցիների Հաստատութեան հիմքը դրուած է այն վանքում։ Գրիգոր Մագիստրոս Աշոտ պատրիկի շարականից այդ խօսքերը կրկնելով, ուղեցել է միայն նոյն դաղափարն արծարծել մինչ որ իւր նախորդը՝ այն է «բոլորից վերբերոյն ծառայական կերպի կենդանագիրն» յիշեցնում է մեզ մեր Հաւատոյ վէմին, Յիսուս Քրիստոսին, որ եկեղեցու Հաստատութեան հիմն ու խարիսխն է. այս անելով, Գրիգոր Մագիստրոս արձանագրի միջոցով Հաստատում է, որ շարականի բովանդակութիւնը վերաբերում է թէ եկեղեցուն և թէ ս. պատկերին, որոնք երկուսն էլ ԺԱ. դարում Հայոց յիշողութեան համար կարելի է ասել կրկնակի վերանորոգուեցան։ Դարոյնքի եկեղեցու փոխարէն Հաստատուեցաւ Հաւուց Թառայ ուխտը, որ աւելի փառաւոր էր քան առաջինը։ «Հաստատեցուք վերստին ս. ուխտս վերջինս քան զառաջինն», ասում է Մագիստրոս, կրկնելով Աշոտի շարականից մի հատուած։ Այնուհետ վերահաստատելով, ս. պատկերն ևս նորոգուեցաւ ամենի յիշողութեան մէջ և նորոգեց այն ամենը, որ այնպիսի բարեպաշտական ջերմեռանդութեամբ Ի. դարում Հանդէս բերեց Աշոտ Պատրիկ։

Կ. Կ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Լևոն ԺԳ. պապը մի նոր վէպ է հրատարակել՝ Ֆրանկների մկրտութիւնը նիւթ առնելով, այս դէպքի 1400 ամեակի առթիւ, որ մօտերումս լրացաւ։ Այդ վէպի մէջ պապը գովաբանում է Ֆրանսիական թագաւորներին և փառաբանում է Ֆրանսիայում բողոքականութեան հալածուիլը, որով կաթոլիկ եկեղեցին իւր ծոցում պահեց Ֆրանսիական ազգը։

— Պետրոս Կանոզիայի, որին կաթոլիկ եկեղեցին սրբոց շարքն է դասել, 300 ամեայ յորելեանին Պապը մի կոնդակ է ուղղել Վերմանիոյ, Աւստրիոյ և Զուիցերիոյ եպիսկոպոսներին դպրոցական խնդրի մասին։ Կոնդակը Կանոզիայի յիշատակը յարգելով յայտնում է, որ նա առաջինն եղաւ, որ պաշտպանեց եկեղեցւոյ գործը, երբ Լուտերը պարզեց ապստամբութեան դրոշակը։ Եթէ եղել է մի ժամանակ, ասում է կոնդակը, երբ կաթոլիկ եկեղեցին պէտք է իւր գործի պաշտպանութեան համար զինուի գիտութեան բոլոր արդասիքներով, այդ ներկայ ժամանակս է, որովհետև դէպի յառաջադիմութիւն ձգտող միտքը երբէմն կրօնի թշնամիներին առիթ է տալիս հաւատոյ դէմ յարձակուելու։ Այդ պատճառով պապը իւր «յարգելի եղբարց» համողում է աշխատել, որ դպրոցներում պահպանեն հաւատոյ մաքրութիւնը։ Նոյնպէս յորդորում է, որ կաթոլիկ ծնողները և եկեղեցին աշխատեն, որ իւրեանց դաստիարակութեան գործում անխախտ պահպանուին։ Սորա համար ձգտելու է, որ նախ կաթոլիկները իւրեանց առանձին ուսումնարանները ունենան և չրաւականան խառն դպրոցներով, և երկրորդ՝ կրօնի համար ոչ միայն առանձին դասաւանդութեան ժամեր նշանակուին, այլ և ամբողջ կրթութիւնը քրիստոնէական բարեպաշտութեան ոգով ներշնչուած լինի։ Եւ այս ոչ միայն տարրական դպրոցներում, այլ և համալսարաններում աստուածաբանութիւնը յայտնի տեղ է բռնելու։ Որպէս զի այս խրատները հնարաւոր լինի կատարել, կոնդակը ստիպագին խորհուրդ է տալիս եպիսկոպոսներին համերաշխ լինել և միացած ոյժով մի նպատակի դիմել։

— Պապն ընդունելով Ֆրանսիացի բանուոր դասակարգի ներկայացուցիչներին՝ մի ճառ ասաց, որի մէջ յայտնելով իւր մշտական և առանձին համակրութիւնը դէպի ազնիւ Ֆրանսիան, յիշեցրեց նոցա հաւատարութեան սկզբունքները, որոնց հիման վերայ միայն կարող է լուծուիլ ընկերվարական խնդիրը։ «Հաստատուն մնացէք, ասաց Պապը, ձեր բարի գործերի մէջ, շարունակեցէք սիրել կը-

րոնը, որ անսպառ աղբիւր է մխիթարութեան և արիութեան կեանքի կռուի և փորձութեանց դէմ։ Զգուշացէք վնասակար մարդոց հետ յարաբերութիւն ունենալուց, որոնք կարծում են, թէ ընկերվարական խնդիրը կըլուծուի սեփականութեան, ընտանիքի և ամբողջ մարդկութեան դոյութիւնը ապահովող օրէնքներով։ Աշխարհի մարդիկ երկպառակութիւն կը յարուցանեն միայն և կըվատթարացնեն բանուորների վիճակը»։

Արարատի անցեալ համարներից մէկում յիշատակութիւն էր կաթոլիկ քահանայ Սերաստեան Կնայպի մահը, աւելորդ չի լինիլ մի քանի խօսք ասել այդ նշանաւոր ջրաբուժի կեանքի և բժշկութեան եղանակի մասին։

Դարիս վերջին կիսում Եւրոպայի մէջ շատ քչերը արժանացել են այն ժողովրդականութեան և հռչակին, որ վայելում էր մի համեստ ծուխի քահանայ՝ Սերաստեան Կնայպը։

Բեռիսգոֆենում տասն ու հինգ տարի շարունակ աշխարհիս ամէն կողմերից թափուում էին հազարաւոր ցաւագարներ, ամեն հասակից ու դասակարգից, այնպէս որ եկողները տեղ չգտնելով այդ փոքրիկ քաղաքում, գիշերը անց էին կացնում երկաթուղու վագոնների մէջ։ Այստեղ կարելի էր տեսնել աղքատի և հասարակ գիւղացու կողքին իշխաններ և իշխանուհիներ, բարձրաստիճան հոգևորականներ ու զինուորականներ, որոնք բոլորն էլ հաւատում էին մի համեստ հոգևորականի գերբնական կարողութեան. ամբողջ Գերմանիան նորան համարում էր մի հրաշագործ մարդ, թէև ոչ մի գերբնական և հրաշալի բան չկար Կնայպի բժշկութեան մէջ։ Բժշկում էր սառը ջրով, միայն աշխատում էր այդ հասարակ և պարզ բժշկական եղանակին մի առանձին խորհուրդ տալ։ Օդի յաճախ փոփոխութիւն, իսկոյն շրջել ցօղաղարդ մարգագետինների մէջ, սարերի վերայ, լողանալ սառը ջրում, ահա այն միջոցները, որով շատերը առողջանում էին։

Բայց մի բան որ նորա բնատուր և անկասելի ձիրքն էր, այդ նորա հաւատն էր և հաստատուն համոզումը. նա այդ հաւատը ներշնչում էր և իրեն դիմող ամեն մի հիւանդին։ Այդ համոզումը, հաւատը նմ ձեռք էր բերել անձնական փորձով, երբ երիտասարդական հասակում իւր թոքախտը բժշկել էր հէնց միևնոյն եղանակով, յետագայ փորձերը միայն աւելի խորը նստեցրին նորա մէջ իւր հաւատը։

Սերաստեան Կնայպը ծնուել է 1821-ին Բաւարիայում։ Մատաղ հասակից սաստիկ հակումն էր ցոյց տալիս հոգևոր կոչման. բայց հայրը ոստայնանկ էր և որդուն էլ նոյն արհեստը սովորեցնելով, ստիպեց իւր հետ աշխատել։ Բայց մի քահանայ նկատելով մանկան ձգտումները, նախ դիմնազիոնի, ապա համալսարանական կրթութեան տուեց և աստուածաբան Կնայպը 1852-ին արդէն քահանայ ձեռնադրուեցաւ. 1855-ին նշանակուեց Վեռիսգոֆում ծխատէր քահանայ և մինչև մահը շարունակ մնաց այդ փոքրիկ քաղաքում և տարէ տարի նորա համբաւը աւելի և աւելի տարածուեցաւ Գերմ. ամեն կողմերը։

Ինչպէս պատուական քահանայ, նա իւր օրուայ մեծ մասը նուիրել էր իւր հօտի հոգևոր կարիքներին, միւս կողմից անխոնջ աշխատում էր հիւանդներ բժշկելով։ Նորա հռչակը շուտով տարածուեցաւ, և մեծ քանակութեամբ հիւանդներ աշխարհի ամեն կողմերից սկսեցին դիմել Վեռիսգոֆ։

Կնայպին դիմողների որքանութեան մասին գաղափար տալու համար բաւական է մէջ բերել մարտից մինչև օգոստոս բժշկուողների թիւը, որ հասնում է 19,718 հոգու։

Բայց Կնայպի անխոնջ աշխատանքը միայն այդ չէր, նա միևնոյն ժամանակ գրում էր և գրեց շատ բան, նորա շարադրութեանց մէջ նշանաւոր է նորա „Meine Wassercur“ խորագրով գիրքը, որի մէջ բացատրուած են իւր բժշկութեան եղանակը և հիմքերը։ Ցիշեալ գիրքը 60 անգամ տպագրուել է. պէտք է այն ևս ասել, որ Կնայպի շարադրութիւնները Գերմանիայում խիստ շատ ընթերցողներ ունին։ Իսկ Կնայպի բժշկութեան, անձի և շարադրութեանց համար թէր և դէմ գրուածքները մի պատկառելի գրականութիւն են կազմում։ Ոմանք Կնայպին համարում են ագահ կաթոլիկ եկեղեցական, որ անձնական շահի համար աչքակապութեան ու խաբեբայութեան միջոցներին է դիմել. այլք պաշտպանում են նորան, և համարում են գերբնական զօրութեան տէր մի անձն։ Երևի մի քանի դարերից յետոյ «հաւատոյ գործակալները» կամ «գէմ փաստաբանները» կորոշեն, այն էլ ոսկու ուժով, որ նա սուրբ է եղել, և նորա բժշկութիւնները հրաշագործութեանց կարգը կանցնեն։

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ։

Ի նպաստ Ռուսաց եկեղեցական—ծխական դպրոցների Բարձրագոյն որոշուած 3 ½ միլիոն ռուբլուն նոր 1 ½ միլիոն է յատկացրած պետական գանձարանից։ Բացի սորանից այդ դպրոցներին արքունի հողերից բաժիններ կըհանուին և ձրիաբար փայտ կըմատակարարուի արքունի անտառներից, որպէս զի կարելի լինի գործնական գիւղատնտեսական դասեր աւանդել ծխական դպրոցների մէջ։

—Քրիստոնէութիւն տարածող Ռուսաց քարոզիչներին արգելք է լինում այն հանգամանքը, որ շատ անգամ հեթանոսները քաղաքակիրթ և շինական տանուտէրների պաշտօններ են ստանում և իւրեանց ազգեցութեամբ դիմադրում են քարոզիչների գործունէութեանը։ Նոյնը նկատուում է նաև

աղանդաւորների համայնքների մէջ։ Սոքա հալածում են քրիստոնեայ դարձածներին և այդ հալածանքները անպատիժ են մնում, որովհետև ինքեանք Ռուսները միանգամայն անտարբեր դիրք բռնելով այսպիսի խնդիրներում կատարեալ ազատութիւն են տալիս հակառակորդներին իւրեանց նպատակներին հասնելու համար։

— Նկատուած երևոյթ է, որ աղանդաւորները ճիշտ մոլեռանդութեամբ պաշտպանում են իւրեանց աղանդը և յաճախաբար են վերարերուում առ օրթոդոքս եկեղեցին։ Վերջին աշխարհագրի ժամանակ մի աղանդաւոր ընտանիք իւրեանց գաւառապետը այսպէս է արձանագրել տուել՝ «ճշմարիտ օրթոդոքս քրիստոնեայ, որ չի պատկանում մեծ Ռուսաց եկեղեցուն, քահանայութիւն ընդունողներից չէ»։ Շատ բնական է այս, քանի որ աղանդաւորները ոչ դպրոցում և ոչ էլ այլուր քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան մասին ոչինչ չեն լսել և մնում են տգիտութեան խաւարի մէջ։ Աղանդաւորների դէմ պատերազմելու միակ միջոցը դպրոցն է, որի համար Ռուսաց հոգևորականութիւնը խոշոր գումարներ է ստանում այժմ պետական գանձարանից։

— Յուլիսի 26-ին Վերմանացւոց կայսր Վիլհելմ Բ. և կայսրուհի Աւգուստան եկան Ռուսաստան Թագաւոր Կայսեր և Կայսրուհւոյն փոխայցելութիւն։ 26-ից մինչև 30-ը Օգոստափառ Հիւրերը ամենասրտագին հիւրասիրութեամբ սիրաշահուեցան, որով երկու Մեծ գրացի Պետութեանց մէջ հաստատուեցաւ և ամրապնդուեցաւ այն սիրոյ կապը, որ ի վաղուց հետե եղել է երկու Արքայական Տան և նոցա հպատակների մէջ։ Ամբողջ Ռուսաստանը և քաղաքակիրթ աշխարհը ջերմ սիրով ողջունում է այն համակրանաց և փոխադարձ սիրոյ արտայայտութիւնները, որ տեղի ունեցան երկու Մեծ Կայսերաց կողմից։ Կարելի է հաւատալ լինել, որ այսպիսի մտերմական յարաբերութեանց արդիւնքը Եւրոպայի ընդհանուր խաղաղութեան ապահովութիւնը կը լինի, որ ամեն մի ազգի և անհատի համար ներկայումս միակ իղձն ու փափագն է։ Ի նշան մեծ յարգանաց Թագաւոր Կայսրը Ռուսաց նաւատորմիղի ծովապետի կոչումն շնորհեց Վերմանական կայսրին։ Հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ երկու Կայսերաց փոխադարձ կենաց բաժակները խաղաղութեան պահպանութեանն էին նուիրուած, ուստի և կարելի է սպասել, որ երկու ազգաց յառաջադիմութեան գործը իր կանոնաւոր ընթացքով առաջ կըգնայ, ապահով լինելով, որ խաղաղութեանն ոչ մի կողմից խանգարող հանգամանք չի սպառնալ։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

— Լոնդոնում Քէնտերբերիի արքեպիսկոպոսի Լամբետեան կոչուած պալատում, նոր տումարով, Յուլիսի 1-ին բացուեցան Լամբետեան եկեղեցական համաժողովի նիստերը։ Ինչպէս յայտնի է Աբարատի ընթերցողներին այդ համաժողովին մասնակցում են անգլիկան եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսները։ Համաժողովը գումարուում է 10 տարին մի անգամ, իսկ այս տարուայ ժողովը մի տարի սովորականից առաջ գումարուեցաւ ի պատիւ Անգլիացւոց Վիկտորիա Թագուհւոյ 60 ամեայ յոբելեանի։ Համաժողովին այս տարի մասնակցում են աւելի քան 200 եպիսկոպոսներ, որոնք ժողովել են աշխարհիս ամեն կողմերից։ Համաժողովի բացման նախընթաց օրը վեստմինիստրի վանքում հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ, որի ժամանակ Եօրքի արքեպիսկոպոս Մակլագանը մի հրաշալի քարոզ խօսեց։ Իւր քարոզի մէջ նա ասաց թէ ներկայ ժամանակս կանոնաւոր յառաջադիմութեան համար պէտք ունի ս. Հոգւոյ ղեկավարութեան, որ ամեն ինչ սրբագործում է և դէպի լաւին է ուղղում։ Միայն ս. Հոգին կարող է մեզ միութեան հասցնել, որ ճշմարիտ քրիստոնէից համար մի ցանկալի և անհրաժեշտութիւն է։

— Բրիտանական Աստուածաշնչի ընկերութիւնը 1804 թուից 151 միլիոն օրինակ Աստուածաշունչ և Աւետարան է տարածել։ Վերջին ժամանակ նոր կտակարանը թարգմանել է 2ինաց բարբառներից մէկով և 2որս աւետարանիչները նոր Հրատարակութեամբ լոյս է ընծայել Էսկիմոների համար։

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Հունգարիայում բնակուող Սերբ ազգութիւնը ի վաղուց հետե եկեղեցական—դպրոցական մի ինքնավարութիւն ունի և այդ խնդիրներին վերաբերեալ գործերը կառավարելու համար պարբերաբար գումարուում է եկեղեցական համաժողով։ Այս տարուայ ընտրութեանց միջոցին այդ համաժողովի անդամներ ընտրուեցան մեծ մասամբ սերբիական ազգային կուսակցութեան ներկայացուցիչներ։ Այս հանգամանքը Հունգարական կառավարութեան ցանկալի չէր, ուստի և համաժողովի հենց առաջին նիստերին կառավարութեան ներկայացուցիչն առաջարկեց անմիջապէս ձեռնամուխ լինել նոր կազմած կանոնադրութեան քննութեանը, որ Հունգարական հոգւով էր մշակուած։ Համաժողովը մերժեց այդ առաջարկը և նախարարապետ Բանֆին հարկադրուեցաւ ղեկուցանել կայսեր այդ միջադէպի մասին, խնդրելով փակել նիստերը և ցրուել համաժողովը։ Վրանց—Յուլիսի կայսրը այլ կերպ նայեց գործին, ուստի և հրամայեց յետաձգել համաժողովի նիստերը և հրաւիրեց կառավարութեան ներկայացուցչին իւր մօտ բացատրութիւն տալու։ Կարծուում է, որ այդ պաշտօնեան հաշիւ կարողանայ արդարանալ, քանի որ ըստ օրինի նա իրաւունք չունի

ոչ մի ձնշումն գործ դնել համաժողովի վերայ, այլ միայն ներկայ է լինում նիստերին և պարտաւոր է հետևել, որ ժողովը օրէնքից չշեղուի։

— *Տիեզերական պատրիարքութիւն*· Կ. Պոլսոյ Ցունաց պատրիարքը աքսորել է տուել Ուսկիւբի մետրոպոլիտի նախկին փոխանորդ Սիկիփոր եպիսկոպոսին, որ ազգով Սերբ էր, Պատմում կղզին, Սերբիացիք շատ դժգոհ են մնացել ս. Պատրիարքի այս վարմունքից· պարզ է, որ Կ. Պոլսոյ Ցունաց պատրիարքարանը ամենևին մտադրութիւն չունի բաւականութիւն տալ սերբիացւոց պահանջներին, եթէ թոյլ է տալիս այդպէս վարուել մի եպիսկոպոսի հետ, որին ամբողջ սերբիական ազգաբնակութիւնը իւր մեծարանքը ցոյց տալու համար անցեալները ընտրել էր ամբողջ Թեմի մետրոպոլիտ։ Ցունաց պատրիարքարանը չբաւականացաւ թոյլ չտալով այդ ազգասէր եկեղեցականին իւր հօտի ընտրութեամբ նորա հոգևոր առաջնորդութիւնը ստանձնելու, այլ և հարկ համարեց աքսորելու նորան, որպէս զի կարող լինի, Սերբերի արդար պահանջները անտես առնելով, Ցունաց շահերը առաջ տանել։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿԵՆՂԱՑԻ·

« Քրիստոնէական Արևելք » (der Christliche Orient) ամսագրի և նորա խմբագիր Յովհաննէս Լէպսիուսի մասին Արարատի անցեալ համարում արդէն բաւական տեղեկութիւն տուինք։ Այժմ պէտք է յաւելացնենք, որ այդ ամսագիրը երբեմն և պատկերներ է տպում, այսպէս օրինակ փետրուարի համարում կար Ազգիս Վէհափառ Հայրապետի յաջող կենդանագիրը, իսկ մեր ստացած մայիս—յունիսի համարում մի լուսանկար «Հայ որբերը Սալմաստում» և «Ամերիկացւոց միսիոնի տունը Ուրֆայում», ուր ցարդ որբեր էին ընդունւում։—

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ·

Прав. Вѣст.-ից տեղեկանում ենք, որ Բարձրագոյն հրամանով Զինաստան գնացած Ռուսաց արտակարգ դեսպանութիւնը իշխան Ուխտոմսկու առաջնորդութեամբ մեծ պատուով է ընդունուել Բողդիխանից· իշխանին յանձնարարուած էր Թանկագին ընծաներ տանել Բողդիխանին Թագաւոր—Կայսեր կողմից և մի նամակ Մայր Թագուհուց առ Զինաց Մայր Թագուհին Ս. Եկատերինէի շքանշանի հետ ի միասին։ Հանդիսաւոր ընդունելութեանը բացի արտակարգ դեսպանութեան անդամներից ներկայ են եղել նաև Ռուսաց դեսպանը Զինաստանում իւր բոլոր գործակիցներով։ Ինքը Բողդիխանը արևելեան մեծ պետութեան ինքնակալին վայել փառահեղութեամբ շրջապատուած շատ սիրալիր պատասխան է տուել իշխան Ուխտոմսկու ողջոյնի խօսքերին· յետոյ իւր առանձին ուշադրութիւնը առ Թագաւոր Կայսրը ցոյց տալու համար հրամայել է իշխան Գուշնուին առնել գահի մօտ դրած սեղանի վերայից Ս. Նախակոչ Անդրէի շքանշանը և մօտենալով իշխան Ուխտոմսկուն արտայայտել իւր կողմից այն խորին երախտագիտական զգացմունքները, որ նա տածում է առ նորին Մեծութիւնը այն բարեհաճութեան համար, որով իւրեան անցեալ տարի շնորհուել է այս ամենաթանկագին պարգևը, որ նա շատ բարձր է գնահատում։ Երկրորդ ունկնդրութեանը իշխան Ուխտոմսկին ներկայացրել է Մայր Թագուհւոյ նամակը և շքանշանը, որ Բողդիխանը ընդունել է իշխան Գուշնուի ձեռքից։ Ունկնդրութեան ժամանակ Բողդիխանը կանգնած էր ի նշան առանձին յարգանաց առ Թագաւոր Կայսրը և Մայր Թագուհին։ Այս տեսակ պատուի դեռ չէր արժանացել ոչ մի օտար պետութեան դեսպանութիւն։ Առհասարակ, թէ Բողդիխանի կրկնակի ընդունելութիւնը և թէ յիշեալ արտակարգ դեսպանութեանը ամեն կողմից ցոյց տուած սիրալիր յարգանքները ապացոյց էին, որ Զինաց կառավարութիւնը ցանկանում էր ըստ արժանւոյն պատուել Թագաւոր Կայսեր դեսպանին, որ այցելել էր իւր երկիրը արտակարգ յանձնարարութեամբ։ Պաշտօնական Թերթը՝ Հաղորդելով այս մասին, աւելացնում է, որ այդ ամենը աւելի սերտ և մտերիմ յարաբերութեանց հաստատուելուն նպաստաւոր կըլինի ապագայում այդ երկու պետութեանց մէջ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ·

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ·

ՀԱՅԵՐԷՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՆՐԻՒ ՀԻՒԲՇՄԱՆԻ.*

«Այն բազմաթիւ ազգերից, որոնք հնումն առաջաւոր Ասիոյ հիւսիսային արևմտեան մասումն էին բնակուում, համարեա միայն հայերն են, որոնք իրենց ազգութիւնը և իրենց լեզուն մինչև այսօրուան օրս պահպանել են, ոչ իրրութեամբ և անհոգ խաղաղ ապրելով, այլ յարատև ներքին և արտաքին կռիւներ մղելով և չնայելով՝ այն բազմաթիւ հալածանքներին, որոնք յաճախ աւելի արիւնահեղ և սոսկալի էին, քան այն հալածանքները, որոնց

* Armenische grammatik von H. Hübschmann· Leipzig 1897·

հանդիսատես է եղել Եւրոպան վերջին տարինե-րում։ Կուզեն Թող տեղական յատկութեանց վերա-գրեն, կուզեն աշխարհագրական, պատմական և կրօնական հանգամանքներին, որ Հայերը չնայելով ճակատագրի դառն հարուածներին իրենց պահել են, հաւատի է, որ մի այսպիսի հին, աննկուն, ազգային հպարտութիւն և կրօնական հաւատարմու-թիւն ունեցող քաղաքակիրթ ժողովուրդ իրաւունք ունի գիտութեան և կրթեալ աշխարհի ուշքն իր վերայ գրաւելու, մանաւանդ, որ այդ ազգն իրրև մի ոստ հնգկագերմանական բունի իր ծագմամբ և իրրև քրիստոնեայ հաւատով մեզ մօտ է» (Ցառա-ջարան էջ V. Բ. մասին)։

Քաղցր է յուսահատ հային համակրութեան և ճշմարտութեան այս խօսքը լսել գերմանացի և առաջին հայագէտի հռչակ վայելող գրքից հեղի-նակի բերանից։ Սակայն այստեղ, ինչպէս Հիւ-բշմանն ասում է, հայ ժողովրդի լեզուն է, որ մեզ շահագրգռում է։ Հայոց լեզուն այնչափ հին է, որչափ ինքը ազգը։ Դարերի ընթացքում նա չփուել է, ընդհարուել է, ուրիշ ազգերի հետ, պարտել և պարտուել է դրացիներից և երկար ժա-մանակ հաղորդակցութիւն է ունեցել, խառն բնա-կել է անթիւ և անհամար բարբարոս և քաղաքա-կիրթ ազգերի հետ։ Եւ ինչպէս այսօր մեր աշխար-հիկ գրականութիւնը, մանաւանդ խօսակցական լե-զուն, լի է օտար բառերով, այնպէս էլ հնում է եղել։ Ժամանակ անցնելուց յետոյ այն ազգերից շատերը չքացել և անյայտացել են և կամ այսօր արդէն մեզանից շատ հեռու են ապրում, բայց թողել են իրենց հետքերը աշխարհագրական, պատ-մական յատուկ անուանց և լեզուի մէջ։ Այնպէս որ եթէ այսօր մենք պատմութիւն էլ չունենայինք, լեզուի և անուանց շնորհիւ գիտութիւնը կարող էր որոշել թէ հայերս ինչ ազգերի հետ յարաբերու-թիւն ենք ունեցել և ջոկելով, զտելով բուն հա-կականը կարող է որոշել հայի քաղաքակրթութեան աստիճանը։ Ցայտնի է, որ մի ազգի պատմութիւ-նը, մանաւանդ լեզուի և քաղաքակրթութեանը, կա-րելի է նոյն լեզուի բառերից և անուններից գրել։

Հ. Հիւբշմանը իւր «Հայոց քերականութեան» Բ. մասի յառաջաբանում համառօտ ակնարկ է ձը-գում հայոց ծագման, գրականութեան վերայ մին-չև մեր ժամանակները, բայց իւր նիւթը մարդկանց այն յատուկ անուններն և լեզուի այն բառերը, որոնք գտնուում են մեր գրականութեան մէջ։ Իւր քերա-կանութիւնը բաժանել է երկու մասի։ Առաջին մա-սում, որ մեր ձեռքը չէ հասել, բայց ինչպէս Բ. մասի բովանդակութեան ցանկից երևում է, նա խօսել է (էջ 9—280) պարսկական անունների և հին պարսկերէն բառերի, այլ և նոր—պարսկերէն և արաբերէն այն բառերի մասին, որոնք հայերը փոխ են առել այդ ազգերից։ Պարսկերէնը հին ժամա-նակից այնչափ տարածուած էր հայոց մէջ, որ Քսենոփոնը Կիւնաքսայի ճակատամարտից յետոյ 401-ին Ն. Ք. աշնանը արևմտեան Հայաստանով անցնելիս նկատում է, որ հայ գիւղացիք պարսկա-կան տարազ ունէին, և յոյների հետ պարսկերէն էին խօսում թարգմանի միջոցով։ Այդչափ հին է ուրեմն պարսկական ազդեցութիւնը, բայց աւելի ևս ինչպէս չառնենք Երուանդ Սակաւակեացի և իւր որդի Տիգրան Հայկազունու յարաբերութիւնը պարսից հետ Աքեմենեան հարստութեան հիմնա-դիր Կիւրոսի ժամանակ։ Արաբական ազդեցութիւնն աւելի նորագոյն ժամանակի է, սկսուում է Ի. դարից։

Քերականութեան Բ. գիրքը բովանդակում է Ասորական անուններ և ասորերէն բառեր, յունա-կան անուններ և յունարէն բառեր, ֆրանսերէն բառեր, որոնք գտնուում են հայոց գրականու-թեան մէջ, ապա հայերէն փոխառեալ բառեր, ո-րոնց ծագումն անհաւասար է և վերջապէս իսկա-կան հայերէն բառեր։

Ասորական ազդեցութիւնը, նորանից փոխա-ռեալ անուններն ու բառերը քրիստոնէութեան ժամանակին են վերաբերում։ «Ինչպէս որ այսօր էլ հայերը, ասում է Հիւբշմանը, քրիստոնէու-թեան ամենահաւատարիմ հետևողների շարքում կա-րող են հաշուել, այնպէս էլ կարող են պարծենալ, որ առաջին ազգն են, որ քրիստոնէութիւնն իրրև պետական կրօն ընդունեցին»։ Այսպիսով սակայն շուտով կապուեցան յոյների հետ, բայց շուտով Պապ Թագաւորի (367—374) ժամանակ իրենց անկախ հրատարակեցին, իսկ երբ 387-ին Հա-յաստանը բաժանուեցաւ Յոյների և Պարսիկների մէջ, յունարէնը միայն Յունաց Հայաստանում մնաց, այն ինչ Հայաստանի համարեա $^4/_5$ մասում, որ պար-սիկներին մնաց, ասորերէնը տարածուեցաւ։ Դեռ Լուսաւորչի ժամանակից էլ ասորի քարոզիչներ ան-պակաս էին մանաւանդ Հարաւային Հայաստա-նում, բայց այս ազդեցութիւնն աւելացաւ Հայաս-տանի բաժանմունքից յետոյ, և Սասանեանները Հա-յերին յոյներից բոլորովին կտրելու համար՝ ամեն կերպ աշխատում էին ասորւոց ազդեցութիւնը զօ-րացնել Հայոց վերայ։ Ցայտնի է, որ Մեհրուժանը Դ. դարում Պարսկահայաստանում այրել տուեց յունարէն գրքերը, պարսիկ կառավարիչները ոչ ոքի չէին թողնում յունարէն ուսանել, այլ ասորերէն, իսկ Ե. դարում արքայից արքան մինչև իսկ ասորի կաթուղիկոսներ բարձրացուց Հայոց Հայրապետական գահը։ Պարսից այս ձգտման դէմ էր, որ զինուե-ցան Հայոց հանճարները ս. Սահակ Մեսրովբ և սե-փական այբուբեն և նոր գրականութիւն ստեղծե-լով, իրենց ազգն ազատեցին ասորական ազդեցու-թիւնից (Փարպեցի)։ Ցովհաննէս Մամիկոնեանը իւր Տարօնոյ պատմութեան մէջ գրում է, որ Հայոց քե-

րիստոնէական (ինչպէս և հեթանոսական) մեծ սըրբավայրը՝ ս· Կարապետի վանքը մինչև Ի· դարը դեռ ասորիների ձեռքն էր։

Յոյների ազդեցութիւնը թէպէտև Տիգրան Մեծ Արշակունու ժամանակից է սկսում, բայց Տիգրանի ժամանակակից այնչափ ինամուած հելլենականութիւնը լեզուի վերայ ազդեցութիւն չէ թողել։ Այստեղ էլ սկսուում է քրիստոնէութիւնից և ամեն մի փոքր ի շատե ազգային պատմութեան տեղեակ Հայի, յայտնի է Հայոց յոյների հետ ունեցած յարաբերութիւնը և առաջինների ազդեցութիւնը Հայոց վերայ։ Մեր դասական գրականութեան թարգմանութեանց համարեա բոլորը յունարէնից է և մեր դասական հեղինակները յոյն կրթութիւն են ստացել, կարելի է ասել, որ մեր քերականութիւնը, մանաւանդ համաձայնութիւնը, յունարէնի վերայ է ձեւուած։ Ընդելով այդ հանգամանքին՝ մեր գրականութիւնը հաւատի հետ ի միասին մի կողմից կապել է մեզ յոյների հետ, բայց միւս կողմից պատուար է եղել Հայաստանի և Բիւզանդիոնի, ինչպէս Հայաստանի ու Պարսկաստանի միջև, և Ա· ինքնուրոյն և ազգային ոգի ու հայրենասիրութիւն ներշնչող գրուածքներով չէ թողել որ ժողովուրդն ու լեզուն հելլենանան, այլ ընդհակառակը մեծաւ մասամբ նպաստել է այս ազգի յատկութիւնները պաշտպանելու և պահպանելու (էջ 323·)։ Ուստի ու չնայելով, որ Հիւբշմանն մօտ 500 յունարէն բառ է մեր գրականութիւնից յառաջ բերում, բայց ասում է, որ դոցանից հազիւ 50 քաղաքացութեան իրաւունք ստացած լինին։ Եղիշէն որ յունասէր է և պարսկատեաց հոգևորական, այնու ամենայնիւ իւր Վարդանանց բովանդակ պատմութեան մէջ միայն մօտ 20 յունարէն փոխառեալ բառեր (չհաշուելով ածանցները) է գործածում, այն ինչ պարսկերէն փոխառեալ բառեր, որոնք վաղուց հայացել են, վիսում են նոյն գրուածքում։ Լատիներէն բառեր, ինչպէս և երբայերէնը, Հայերը փոխ են առել յունարէնի միջնորդութեամբ, թէպէտև կան սակաւ լատիներէն բառեր էլ, որոնք Հայերը Ունիթոռների ժամանակ (ԺԲ·—ԺԵ· դար) ուղղակի լատիներէնից են փոխ առել, ինչպէս և մի քանի բառեր էլ ֆրանսերէնից Կիլիկեցւոց ժամանակ (1198—1375)։

Մի տասնի չափ բառեր կան, որոնց ծագումը թէ Հայերն որ ազգերից են փոխ առել, անհաստատ է, ինչպէս և այն 30-ի չափ բառերը, որոնք Ցօմաշէկն ու Բուգգէն կովկասեան ազգերից փոխ առած են համարում, Հիւբշմանը չէ ընդունում, և նոյն իսկ իւր յիշածներից ոմանք ասում է կարող են իսկական Հայերէն լինել։ Ջօշափելով կովկասեան ազգերից փոխ առնուած բառերի խնդիրը, Հիւբշմանն ասում է թէ թէպէտև Հայերէնն կովկասեան ազդեցութեան աչքի ընկնող հետքեր ուներ կարծես, մանաւանդ իւր հնչական օրէնքներում, որ համարեա թէ նոյն է վրացերէնի հետ, սակայն ասում է Հ·, ցարդ եղած ջանքերը Հայերէնում կովկասեան փոխառեալ բառեր որոնելու անյաջող են անցել և աւելի հաւաստում են այն կարծիքը, որ եթէ Հայերէնում կովկասեան բառեր կան շատ քիչ են, «և որ առհասարակ աւելի ընդունակ և քաղաքակիրթ Հայերը, Վրաց, Աղուանքների և այլոց վերաբերութեամբ առաւել տուող են եղել քան առնող, ինչպէս որ առհասարակ վրացերէնը բաղմաթիւ Հայերէն փոխառեալ բառեր ունի» և վերջացնում է այդ մասին իւր խօսքը հնչելով, «Այսպէս ուրեմն ինձ թուում է, թէ այն ենթադրութիւնը, որ Հայերէնը կովկասեան լեզուներից բաւականաչափ բառեր է փոխ առել, ցարդ գոհացուցիչ կերպով չէ ապացուցուած թէ հիմնաւոր է»։ (էջ 398)

Գալով վերջին «իսկական Հայերէն բառերին» մենք յառաջ ենք բերում այդ մասին նուիրուած յառաջաբանը ամբողջովին, որ միևնոյն ժամանակ թէ Հայերէնի անցեալ պատմութիւնն է և թէ մեր ազգային նախնական ժամանակի պատմութեան հանգուցագիծ է։

«Հայոց լեզուն հնդկագերմանական լեզուի բունի մի անկախ ճիւղն է, ձայնականութեան համաձայն է Եւրոպական լեզուներին, կոկորդային (guttural) շարքի զարգացմամբ հնդկա—երանական նին, սլաւո—լետտերէնի և ալբանականի, բայց մի կողմից բոլորովին ազատ է հնդկագերմանական լեզուների ընորոշ յատկութիւններից։ Այս լեզուն խօսողները ըստ այսմ պէտք է համարուին ի բնէ հնդկագերմաններ, միևնոյն է թէ նոքա հնդկագերմանների հետ ապրելուց յետոյ և պատմութեան աստարէզ մտնելուց առաջ, ինչպէս կարծելու է, առաւել կամ նուազ խառնուել են ուրիշ նոյն կամ տարբեր ծագումն ունեցող ցեղերի հետ։ Բայց թէ արդեօք որ տեղ են նոքա հաղարաւոր տարիներ առաջ բնակուել, որ ճանապարհներով այդ տեղերից Հայաստան եկել և որ ժողովուրդների հետ այդ ժամանակ սերտ յարաբերութիւններ ունեցել, յարաբերութիւններ, որոնցով նոցա ցեղը կամ լեզուն կարող էր ազդեցութիւն կրել, դժուար թէ երբէք հաւաստի կերպով պնդել կարելի է։ Ըստ Կրէտշմերի Հայերը, երբեմն մի ճիւղ Փռիւգացւոց, որ փռիւգերէնի ազգակից լեզուով էին խօսում, դարեր առաջ նստած էին Թէսալիոյ հիւսիսում և, երբ երրորդ հազարամեակին Թրակո—Փռիւգեան ցեղերն շարժուեցան, սոցա հետ գաղթեցին Փոքր Ասիա, Բիւթանիայով և հիւսիսային երկրներով հասեցին դէպի Փոքր Հայք, որպէս զի յետոյ այնտեղից բուն Հայաստան յառաջանան։ Այստեղ ըստ Ի· Մայերի Վանայ ծովի

և Արաքսի միջև ինչպես և Արաքսի հովտում մի ժողովուրդ էր բնակուում, որին ասորեստանցիք Ուրարտու, Հերոդոտը Ալարոդիի է անուանում, որի անուանով երկիրը Երրայեցիք կոչում են Արարատ, Հայերը Այրարատ (Սասանեանց ժամանակ Հայաստանի կենդրոնական նահանգ), Այս Ալարոդացւոց մի ցեղը, որին Բէլկն ու Լէհմանը խալդ են անուանում, մի պետութիւն էր հիմնել Տոսպ (այսօրուայ Վանը) մայրաքաղաքով, որ Թ. դարում մեծ զօրութիւն և նշանակութիւն էր ձեռք բերել։ Ի զուր Ք. դարում Ասորեստանի Սաղմանասար III (782—772) ուժ անգամ արշաւեց այս պետութեան դէմ, որ այն բովանդակ հայկական բարձրաւանդակ Եփրատի և Արաքսի ակունքից մինչև Ուրմիոյ լճի միւս կողմն էր բռնում, միայն Տգլաթ Պալասար II. յաջողեցաւ 743-ին Ուրարտուի Սարգուրի II թագաւորի և նորա աւատական (Մելիգէնի, Կումմախի, Գանգումի և այլն) իշխանների վերայ յաղթանակ տանել և պետութիւնն իւր հին սահմանների մէջ սեմել, ուր դեռ հարիւր տարուց աւելի մնաց, մինչև որ Հերոդոտի յիշատակած Կեմմերացւոց և Սկիւթացւոց (Շակ) յարձակումները տեղի ունեցան, որով ոչ միայն Ասորեստանի զօրութիւնը յօգուտ Մարաց (Մեղացւոց) թուլացաւ, այլ և առհասարակ Առաջաւոր Ասիոյ ժողովուրդների յարաբերութիւնները հիմնովին փոխուեցան։ Հէնց որ նորից մի ակնարկ ձգենք այս երկրների հանգամանքների վերայ, կը տեսնենք որ հզօր Ուրարտու պետութիւնը չքացել է, Մոսկերն ու Տիբարացիք յետ են մղուել մինչև Պոնտոսի ափերը։ Նոցա տեղ մեզ ամենից առաջ հանդիպում է Կապպադովկացւոց անունը։ Ալարոդները թէև բոլորովին չեն անյայտացել, բայց նոցա քովէքով հանդիպում ենք Հայերին վերին Եփրատից մինչև Տիգրիսի ակունքը։ Սոքա հնդկագերմանական Հայերն են, որոնց Ե. դարում Հերոդոտն armenioi, Զ. դարու վերջը Ագաթանգեղոսի (325—485) արձանագրութեանց մէջ arminiya են կոչում, որոնք երկիրը (armenia, հին պարսկերէն Armina և Armaniya) ըստ Հերոդոտի ակնարկների Հալիւսէի ակունքներից և Կիլիկիոյ ու Հայաստանի միջև սահմանները կազմող Եփրատի ու Տիգրիսի ականց կողմերն էր տարածուում։ Արդեօք Սկիւթացւոց արշաւանքը, որ Ուրարտուի պետութեանը այնպէս արագ կործանումն պատրաստեց և այնպիսի մեծ իրարանցման պատճառ դարձաւ, չպէտք է կապ ունենայ Զ. դարուց առաջ չյիշատակուած Հայոց երևան գալու հետ, Ճիրաւի նորերս Ի. Մաիերը իւր հին պատմութեան մէջ կարծիք է յայտնում, որ Հայաւորեն Կապպադովկացիք և Հայերը իրենց պատմական բնակավայրերը հասել են միայն յետոյ, Ի. դարում, զուցէ Կեմմերացւոց արշաւանքի հետ կամ գոնեա այդ ժամանակ աւելի ևս տարածուել են. և այս կարծիքը պէտք է որ զգուշաբար կերպով ըմբռնելը ընդունելի երևայ։ Այս ընդունում են Բէլկն ու Լէհմանը իւրեանց խալդիական հետազօտութեանց մէջ, բայց առաւել յառաջ են գնում և պնդում են, որ եկուոր Հայերին ենթարկուած և նորանից յետ մղուած հին ժողովրդի մի մնացորդը կազմում են յետոյ Փոքր Հայքի հիւսիսային կողմն կեցող խալդները (Հայերէն խաղտիք, խաղդեաց աշխարհ, յունարէն խալդի, Քսենոփոնը խալդէի), որոնք իսկզբանէ Վանայ ծովից հարաւ էին կենում և ծովի շրջապատ երկրներում առնուազն մինչև Ե. դարի վերջը Ն. Ք. մնացել էին, Որ Խալդերը յիրաւի Ալարոդների (կամ Ուրարտացւոց) գլխաւոր ցեղն էին, կամ Խալդ անունը հէնց այս Աշարօդների իրենց տուած անունը պէտք է համարել, հետևեցնում են այն հանգամանքից, որ Վանայ թագաւորների արձանագրութեանց մէջ նոցա գլխաւոր աստուածուհին կոչուում է Խալդի, որ Խալդի կոչուում է արձանագրութեանց մէջ և ժողովուրդը, և որ Խալդերի երկիրը երբեմն տարածուած պէտք է լինի մինչև Վանայ ծովից հարաւ»։

«Հայերը շուտով արևմտեան Հայաստան մտնելուց յետոյ ընկան Մարաց, ապա Պարսից իշխանութեան ներքոյ, որոնց իշխանութեան տակ նոքա իրենց ազգութիւնը տարածեցին դէպի հիւսիս, արևելք, Վերին և Միջին Արաքսի ընթացքի երկրներում։ Նոցա անունն այնուհետև անցաւ Ուրարտու երկրին։ Այն սատրապութիւնը, ուր ըստ Հերոդոտի Աշարօդներն էին բնակուում, Քսենոփոնը կոչում է արևելեան Հայաստան։ Այսպէս էլ Աքեմենեան արձանագրութեանց մէջ այն երկիրը, որ պարսկերէն Armina (չօշերէն Harminijap) է կոչուում, բարիւլոներէն Ուրաշդու (Ուրարտուի մի երկրորդական ձևը) է յորջորջուում։ Սակայն Աշարօդների երկիրը քաղաքականապէս միայն հելլենականութեան ժամանակ 189-ի Ն. Ք. Հայոց Արտաշիսս թագաւորի (կուսակալ) ձեռքով միացաւ արևմտեան երկրների հետ և դարձաւ Հայոց մի մեծ պետութիւն, և այնուհետև Ալարօդների ազգայնութիւնը բոլորովին անյայտանում է։ Այս Արտաշիսի յաջորդներից մինը Տիգրան (Արշակունի) գահից զրկեց Ծոփքի Զարեհ (Զարիադրէս) թագաւորի վերջին յաջորդին և այս երկիրը իւր պետութեան հետ միացնելով՝ երկար ժամանակով վերահաստատեց Հայոց պետութեան միութիւնը, որ տակաւին Մալխաս Խորենացու աշխարհագրութեամբ 15 նահանգի է բաժանուում»։

Այնուհետև յարգելի գիտնականը յառաջ է բերում այդ նահանգների և նոցա այն գաւառների անունները, որոնք յիշում են յոյն Հռովմայեցի հեղինակները. անուններ, որոնք համարեա բոլորն մի մի ժողովուրդի, ազգի կամ ցեղի անուններ են։

«Բայց թէ որչափ Հայերը յաջողեցան Պար-

թևաց և Սասանեանց իշխանութեանց ժամանակի ընթացքում այս Մեծ Հայաստան կոչուած բուռն դակ պետութեան մէջ ապրող ժողովուրդներին հայացնել, գեռ բաւականաչափ չէ հետախուզուած։ Սակայն Կիպերտը իւր աշխարհագրութեան (էջ 79—83) մէջ գիտում է, որ Տիգրիսի արևմտեան տափաստանում և Եփրատի հովտում հնուն և գեռ միջին դարում—ըստ Հայոց և Ասորւոց հեղինակների պարզ վկայութեանց և վայրերի անունների լեզուին նայելով, արամէական (ասորական) բնակչութիւնը, արևելեանը բարձրաւանդակների վերայ (Կորդուայց և Մոկաց աշխարհները) քրդականը տիրող տարրն է, և որ հիւսիսային դաւառներում, մինչ Փասեան դաւառը իշխող Հայ ժողովուրդը փոքրամասնութիւն է կազմում, բնիկ օտար ցեղերի հետ համեմատած, և մեծ մասը Վիրք են (վրացիք) այսօր ինչպէս և հնում։ Ես էլ, շարունակում է Հ.-ը, Ինճիճեանի հատաքած վայրերի անունից հիմամբ կարծել եմ, որ Հայերը մի ստուար բազմութիւն կազմում են միայն Բարձր Հայքում, Արարատում, Տուրուբերանում և Վասպուրականում։ Նորերս Տոմաշէկը համոզեցուցիչ փաստերով ապացուցեց, որ Սասունում (Աղձնիքում) և Խոյթում (Տուրուբերանում) գեռ ԺԴ. դարում կար մի ոչ—Հայ ժողովուրդ որ խօսում էր ոչ—Հայերէն լեզուով։ Սակայն Հայոց ալգագրութեան պարագաները տակաւին սպասում են ապագայ քննութեանց, ինչպէս այս մասին ճշդիւ նկատում է ինքը Հիւբշմանը։

«Ընդունելով, որ այստեղ Հայոց թափառման մասին արտայայտուած վարկածները ըստ էականին ճիշդ են, այն ժամանակ կը հետևէր, որ Հայերէնը Թրակեան Փռիւգիան լեզուներին, բայց մանաւանդ Փռիւգերէնին մօտ է, և որ աննախնական ժամանակներում կարելի է որ փոքրասիական լեզուներից, բայց նա մանաւանդ խալդերէնից (աշարօգերէնից) լեզուի վերաբերեալ շատ բան ընդունել է։ Բայց որովհետև վերոյիշեալ լեզուները մասամբ բոլորովին անծանօթ են, մասամբ միայն մեզ յայտնի են հազուագիւտ բառերով, անուններով կամ այնպիսի արձանագրութիւններով, որոնք գոհացուցիչ կերպով պարզաբանուած չեն, ուստի այս հետևանքից Հայերէնը բացատրելու համար, այժմ ոչինչ չենք շահում։ Ոչ Հայի բառաքննութիւնն է լուսաբանուում փռիւգերէնով, ոչ էլ կարելի է հին փոխառեալ բառերը այսպիսով ճանաչել և որոշել և ոչ իսկ սորանով բացատրուում է այն իրողութիւնը, որ Հայերէնի հնչական սիստեմը կովկասեանի բնորոշ կողմերն ունի։ Ուստի մենք պէտք է առայժմ գոհանանք Հայոց լեզուն մեզ հասած հնդկագերմանական լեզուների հետ համեմատելով բառաքննօրէն պարզել և քերականօրէն բացատրել, որ ժամանակ լեզուի բոլոր նիւթը, որ մենք չենք ցոյց տուել իբրև փոխառեալ կամ օրինաւոր հիմունքներով կարող ենք կասկածելի կացուցանել թէ փոխառեալ չէ, իբրև իսկական հնդկագերմանական նկատել կարող ենք։ Ամենևին հոգս չունենալով թէ ապագայ հետազննութիւններից կարող է երևալ որ մենք սխալուած ենք եղել և մի խալդերէն կամ մի այլ փոխառեալ բառ հնդկագերմանական ենք համարել»։

«Ես նշանակում եմ ուրեմն (այս մասում) Հայոց բառագիտութեան ցարդ եղած արգասիքը, ցարդ ձեռք բերած հայերեն—հնդկագերմանական համեմատութիւնները, թացի նորանից, որոնք ես սխալ եմ համարում, և որոնց մասին կարծում եմ որ կարող եմ ընդունել որ այդպիսիները դիտմամբ եմ հիմունքներով ուրիշների կողմից էլ սխալ կը համարուեն։ Տարակուսական դէպքերում բառագիտութեանց հետ ի միասին ես ցոյց եմ տուել այն հիմունքները, թէ ինչու ես չեմ ընդունում և կամ տարակուսում եմ»։

Հիւբշմանի վերջին խօսքը, որ վերաբերում է բուն Հայերէն բառերին բնորոշ է նորա ամբողջ գործի համար էլ։

Այսօր Հ. լոյս աշխարհ է հանում թէ իւր Հայոց լեզուի մասին ցարդ գրածները և թէ Հայերէնի մասին սկզբից, այսինքն անցեալ դարից սկսած մինչև մեր օրերն, եղած բոլոր հետախուզութիւնները, քննութիւնները, ուսումնասիրելով, որոնցից ջոկել է և ընտրել պէտքականները, հաւաստին, որչափ այսօր լեզուագիտութիւնը ցոյց տալ կարող է։

Հիւբշմանից առաջ Պաւուլ դը Լագարդն արել է մի այդպիսի փորձ, ժողովելով Հայոց լեզուի քննուած բառերը և այրուբենական կարգով դասաւորելով. բայց Հ. այդպէս չէ արել, նա բաժանել է բառերի ծագման նայելով, այսինքն թէ որ աղգից Հայն ինչ անուն կամ բառ է փոխառել, և միայն այդտեղ դիւրութեան համար պահպանել է այրուբենական կարգը։ Առ հասարակ ուսուցչապետ Հիւբշմանն ընդունակ է և գիտէ անմշակ և խառն լեզուական նիւթերի մէջ կարդ որոնել, գտնել և ինչպէս ասում են պատճառն վերածել։ Կարելի է որ յարգելի դիտնականի այս կամ այն բառաքննութիւնը ժամանակին, նոյն իսկ այսօր էլ, ճիշդ չհամարուին, և դուցէ մասամբ իսկ տակաւին պակասաւոր է, լիակատար չէ գործը, բայց անուրանալի է, որ մեծ է այն ծառայութիւնը, որ յարգելի ուսուցչապետը մատուցել է Հայերէնին և նորա գիտական մշակման։ Եւ թէպետ նա համեստութեամբ իւր հայագիտութիւնը liebhaberei է անուանում, մենք կարող ենք ցանկանալ միայն որ այդ liebhaberei-ի պտուղներն աւելի շուտ շուտ և շատ տեսնենք։ Այս յուսով կնքում ենք մեր խօսքը, սպասելով որ շուտով բոլոր կունենանք և իսկական քերականութիւնը տեսնել, որին, ինչպէս և այս գրքին, վաղուց ի վեր սրտատրոփ սպասում

է գիտական աշխարհը։ Աւելորդ է ասել որ այս գիրքն ամեն մի փոքր ի շատէ հայերէնով զբաղուողի անհրաժեշտ է ունենալ և միանգամ ընդ միշտ ապատուել Զամչեան և Մսերեան շրջանների լեզուաբանական ծակ բացատրութիւններից։

Ս. Կ.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ·

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՅԵՐԻ.

(Շարունակութիւն) *

Հիմնական փոփոխութիւն առաջ բերեց Հին Հռովմի նոր պապը, Լեւոն Մեծը (442—454)· սա էլ իրրև աստուածաբան մեծ չէր, բայց առաջնակարգ եկեղեցական քաղաքագէտ էր։ Նա հասկացաւ նորից ուղղել իւր նախորդի անընդունելի սխալը։ Աղէքսանդրիան աստուածաբանութեան հետևողներից մէկը, Կոստանդնուպօլսի Եւտիքէս վարդապետը, իւր վարդապետական խոի մէջ նուիրուած լինելով բնազանցական մտածողութեան, ընկել էր կատարեալ հերձուածի մէջ· այդ բանը մայրաքաղաքի Փլաբիան պատրիարքին, որը արդէն զղուել էր Ալէքսանդրեան լուծից, ամենայանկալի առիթ տուաւ նրան եկեղեցական պատժի ենթարկելու։ Լեւոն պապը մի դաւանութեան թուղթ—epistola dogmatica—ուղարկեց Փլաբիանին և հաւանութիւն ցոյց տուեց Նոր Հռովմի իւր պաշտօնակցի արածներին։ Կիւրեղի յաջորդ Դիոսկորոսը հեշտութեամբ չատաւ այդ հարուածը, կայսեր ամենակարող Քրիսաֆիոս մինիստրը նրա գործիքն էր։ Եփեսոսում՝ եգիպտական յաղթանակի տեղում տիեզերական նոր ժողով գումարեցին (449 թ· աւազակային ժողով կոչուած)· այդ սուրբ համարուած ժողովում իշխում էր բռնի ոյժը, բայց իսկապէս ասած՝ ոչ աւելի քան այն ժողովներում որ ընդունում է եկեղեցին։ Չնայած Հռովմի բողոքին, Եգիպտոսը միանգամ էլ ամեն կերպ յաղթող դուրս եկաւ, և այն ուսմունքը, որ յետոյ—Monophysitismus—*մի բնութեան* դաւանութիւն էր կոչուում, կարծես թէ բոլոր արևելցիների ընդունած հաւատն էր դարձել, երբ յանկարծ մեռաւ Թէոդոսը 450 թ· յուլիսի 20-ին։ Քաղաքագէտ Պուլքերիա կոյսը իւր ձեռքը առաջարկեց Ծեր սենատոր Մարկիանոսին և բարձրացրեց նրան կայսերական գահ։ Սա առաջի կայսրն էր, որ օծուեց մայրաքաղաքի պատրիարքի ձեռքով։ Իշխանութեան փոփոխութիւնով նշան տրուեց կառավարչական հիմնական նոր ուղղութեան։ Աղէքսանդրիայի պատրիարքը Եփեսոսի երկու յաղթութիւնով կանդնած էր ամենալաւ ճանապարհի վերայ, թէ տէրութեան մէջ առաջին ոյժը լինելու և թէ Արևելահռովմը դարձնելու մի եկեղեցական պետութիւն։ Ահա այդ պատճառաւ կեանքի և մահու հարց էր բիւզանդական կառավարութեան համար եգիպտական պատրիարքի անկումը։ Բիւզանդիոնը խելացի կերպով հասկացաւ դրաւել և լաւ դաշնակիցներ դարձընել արևմտահռովմէական կառավարութիւնը և Հին Հռովմի պատրիարքին։ Քաղկեդոնում 451 թ· ժողով գումարուեց, որտեղ սոխպեցին արևելքի չափազանց ինքնակամ պատրիարքներին ընդունել հաւատոյ այն դաւանութիւնը, որ նախապէս կազմուած էր Հռովմի գիտութեամբ, դիմելով նոյն իսկ սաստիկ ազդող միջոցների· կայսերական գլխաւոր ներկայացուցիչները գործում էին միանգամայն պապի գեսպանի համաձայնութեամբ։ Դիոսկորոսին պաշտօնից զրկեցին և աքսորեցին, ինչպէս երբեմն Նեստորին։ Վերջինիս ամենահաւատարիմ կողմնակիցները՝ Թէոդորիտոս Կիւրոսացին և Իբաս Եդեսացին վերահաստատուեցին իրենց աթոռներում։ Արևելահռովմէական տէրութիւնը եկեղեցական գործերում էլ յաղթանակելով, նորից ամրացրեց իւր դերիշխանութիւնը։

Արտաքին գործերից յիշուելու է այն, որ Մարկիանոսը վերջ տուաւ Հոներին հարկ վճարելը։ Ատտիլան զբաղուած լինելով արևմուտքում, չկարողացաւ զօրեղ կերպով Բիւզանդիոնի դէմ գործել։ Նրա արագ անկումը

* Տես Արարատ 1897 թ. եր. 309։

ապատեց ընդմիշտ արևելեան տէրութիւնը այդ վտանգից։

Թուում էր թէ արևելցիները իրենց ստրկական բնաւորութեամբ անկամ և լուռ համակերպուել են և ընդունել Քաղկեդոնի որոշումները։ Բայց այդպէս միայն թուում էր։ Աղէքսանդրիան ուսումը, որով առանձնապէս շնչաւորում էր Քրիստոսի Աստուածութիւնը, իսկ նրա մարդկութիւնը ընդհակառակը համարեա թէ անհետանում էր, արևելեան բարեպաշտ ժողովրդի հաւատն էր։ Փոքր Ասիայում, Ասորիքում և մանաւանդ Եղիպտոսում շարժուեցին Կիւրեղի և Դիոսկորոսի ուսմանհետևողները, որոնք միայն սպասում էին բայց չէին յուսահատուել։ Արևելահռոմէական տէրութեան համար Քաղկեդոնի որոշումը, քաղաքական տեսակէտից նայած, դուցէ նրա ամենամեծ դժբախտութիւնն էր։ Յանկացել էին ղղրել Աղէքսանդրիայի տիեզերական պապին, բայց դրա փոխարէն ստեղծել էին ներքին կրօնական պատերազմներ ամբողջ տէրութեան մէջ։ Այն գարաշրջանում, երբ որ և է քաղաքական մտածողութիւն սկսում էր եկեղեցական դիտակցութիւնից, ասորական և եղիպտական ազգային դիտակցութիւնը, որ հակայունական էր, սկսեց ամուր կպչել հակաքաղկեդոնեան վարդապետութեանը։ Ու այդ հանգամանքը արդէն Մարկիանոսի յաջորդ Լևոն Ա (457—474) ղդայ շատ որոշակի։

Լևոն, մեծ մականուանեալ, օրթոդոքս Ծոյն էր՝ ծագումով Թրակիայից։ Նա իւր գահակալութեամբ պարտական էր արևելեան զօրաց հրամանատար—magister militum per orientem—ամենազդեցիկ Ասպար Ալանին։ արիւոսեան հաւատը սրան իրեն արգելք եղաւ գահ բարձրանալու, բայց Լևոնի իշխանութեան առաջի շրջանի ամբողջ ընթացքում կառավարութեան ղեկը կենդրոնացած էր նրա ձեռում։ Լևոնը ևս Մարկիանի պէս օծուեց մայրաքաղաքի պատրիարք Անատոլիոսի ձեռքով 457 թ. փետրուարի 7-ին։ Ասպարը, ինչպէս յայտնի է, կենդրոնացրել էր զօրքի գերմանական տարրերի վերայ։ և թուում էր, թէ սա էլ՝ ինչպէս միաժամանակ Ռիկիմերը Իտալիայում կամենում էր թագաւորներ կարդելու դեր կատարել։

Բայց այդ նպատակի համար սխալ հաշիւ էր արել Լևոնի ընտրութեան մէջ։ Դա Անթեմիոսի կամ Ողիւբրիոսի նման անուանական կայսր չէր։ Նա գերմանացիների դերակշիռ ազդեցութեան դէմ՝ հանդէս բերեց իւր հայրենակիցների հասարացի թիկնապահ զօրքը որ նոր էր ժողովել։ Նոցա առաջնորդ Թարազիկոդիսացին, որ խորամանկ և սաստիկ զգացմունքներով մի բարբարոս էր, հելենացրեց, տալով նրան Զենոն քաղցրահնչիւն անունը և ամուսնացրեց կայսեր Արկադնէ աղջկայ հետ։ Ասպարը մեծ դժուարութեամբ կարողացաւ վերջապէս կատարել տալ կայսեր առաջ խոստումը, իւր որդի Պատրիկիոսին կեսար հրատարակել տալու։ Կայսեր մեծայոյս նահատակվիղը, որ ուղարկից Աֆրիկայի սարսափելի վանդալների ծով ահիռութեամբ պարապած տէրութեան դէմ, անյաջող ելք ունեցաւ նահատակի հրամանատար՝ կայսեր Բազիլիսկոս փեսայի բացարձակ անընդունակութեան չնորհիւ։ Ասում են՝ որ Ասպարը նախանձից նպատակ էր անպէտք և ժլատ զօրապետի նշանակելուն, որովհետև նա չէր ցանկանում որ կայսրը պատերազմական փառքի արժանանար։ Սակայն 471 թ. Ասպարին և նրա որդի Արտաբուրիոսին սպանեցին կայսեր հրամանով։ Այդ հարուածը, որով թագաւորն ազատուեց ճնշող խնամակալութիւնից (Majordomat) և տէրութիւնը գերմանական իշխանութիւնից, զօրեղ տպաւորութիւն թողեց ժամանակակիցների վերայ և երկար ժամանակ պահպանում էր առակներում։

Եկեղեցական գործերում Լևոնը անշեղ շարունակեց իւր նախորդի քաղաքականութիւնը։ Մարկիանոսի մահից անմիջապէս յետոյ Աղէքսանդրացիք սպանել էին Պրոտերիոս պատրիարքին, որ բռնութեամբ կարդուել էր նոցա վերայ։ Ողորմելին բացարձակ արժանի էր այդ վիճակին, որովհետև սկիզբը Դիոսկորոսի արբանեակը լինելով, վերջը բոլորովին ենթարկուել էր նրա հակառակորդներին և անպիտան գործիք դարձել։ Դիոսկորոսի ամենաջերմ կողմնակիցներից մէկին՝ Տիմոթէոսին, մեծ ցոյցերով ս. Մարկոսի գահը բարձրացրին։ Լևոնը այդ բանին լրջօրէն վերաբերուեց. դժուար էր նոր ժողով գումարել, այդ հաւա-

սար կըլլիներ բացարձակ կերպով անվստահութիւն արտայայտել Քաղկեդոնի ժողովին։ Դրա փոխարէն կայսրը հաւաքեց բոլոր եկեղեցական նահանգներուն մետրապոլիտներուն և եպիսկոպոսներուն և իւր ակրութեան յայտնի աստուածաբաններուն կրօնական կարծիքները. դոցանից մեծագոյն մասը յօդուտ Քաղկեդոնի էր։ Բռնաւորին հալածեցին և Տիմոթէոսին Բաղիլիկոս (արքայական) մականուն տալով— առաջին անգամն էր, որ օրթոդոքս կուսակցութիւնը ճանաչուեց իբրև կառավարութեան կուսակցութիւն (Melchites Մելքիտես)—նըստեցրին Աղէքսանդրեան գահի վերայ։ Հազուագիւտ դէպքերից մէկն էր, որ բիւզանդական կառավարութիւնը յաջող ձեռք ունեցաւ եկեղեցական գործերուն մէջ շատ զգուշութեամբ պիտի շարժէր։ Տիմոթէոսը—ինչ որ այն ժամանակները շատ անսպասելի էր—իրան ցոյց տուեց մեղմ և համբերող։ Նա մինչև անդամ իւր եկեղեցական հակառակորդների սէրը և յարգանքը գրաւեց, թէև հրաժարուեցին սրա հետ էլ միանալուց։

Լևոնը իւր մահուանից յետոյ, 474 թ. փետրուարի 3-ն, իշխանութիւնը կտակեց իւր համանուն անչափահաս թոռ Արկադնէի և Զենոնի որդուն։ Փոքր Լևոնը 474 թ. հանդիսաւոր կերպով իւր հօրը կայսրակից օծուեց և այնքան յանկարծակի մեռաւ, որ Զենոնը, որ այդպիսով գահի միակ տէրը դարձաւ, բնականաբար ենթարկուեց ամենասոսկալի կասկածներին։

Նոր կայսր Զենոնը, որը յենուելմ էր իւր հայրենակից կոպիտ և ատուած Ոսաւրացիների վերայ, շատ անժողովրդական էր։ Այդ պատճառով կայսրամայր փառասէր Վերինան փորձեց գահ բարձրացնել իւր անընդունակ եղբօրը՝ Բաղիլիսկոսին։ Ոսաւրացի ամենանշանաւոր զօրավարներից մէկը՝ Իլլուսը գաշնակից էր դաւադրութեան։ 475 թ. վերջին Զենոնը սոսկացաւ իւր կնոջ հետ փախչել իւր հայրենի երկիրը։ Կոստանդնուպօլսում ժողովրդեան կատաղութիւնն արտայայտուեց Ոսաւրեան երեկոյով։ Բաղիլիսկոսը յենուեց վիրաւորների կուսակցութեան վրայ, որոնք 20—25 տարիներից ի վեր ճնշուած էին։ Աքսորուած Տիմոթէոսը վերադարձաւ Աղէքսանդրիա, ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճառելով։ Ասիայի եպիսկոպոսները շտապեցին յայտնել իրենց համաձայնութիւնը կայսրութեան նոր հաւատի մասին։ Սակայն Բաղիլիսկոսը մի աննկարելի սխալ գործեց։ Հեռանալով սահմանափակ Նգիպտացու խորհրդին, փորձեց մայրաքաղաքի եպիսկոպոսապետին պատրիարքական իրաւունքից զրկել, որ հիմնուել էր Յոհան Ոսկերերանից և հաստատուել Քաղկեդոնում և Նփեսոսին՝ Յովհաննէս Աստուածաբանի քաղաքին, նորից վերադարձնել նրա ուսադութեան հին իրաւունքը։ Այդպիսով նա վիրաւորեց Ակակիոս պատրիարքին, որը իւր բարեպաշտութեամբ և խելացիութեամբ չափազանց սիրուած էր ժողովրդից։ Վերջինս, վստահացած ժողովրդի համակրանքի վերայ, ամուր պահպանեց Քաղկեդոնի օրթոդոքսութիւնը, և Բոսփորի ափին Դանիել սիւնակեացը իւր սիւնից յայտարարեց որ ուղղահաւատութիւնը վտանգուած է։ Այն ժամանակ Բաղիլիսկոսը այլ ևս ի զուր փորձեց յետ վերցնել իւր սեպհական շրջաբերականով յայտարարած հաւատը։ Իլլուսը և իւր եղբայր Տրոկունդոսը անցան Զենոնի կողմը. Բաղիլիսկոսին և նրա ընտանիքը փակեցին Ոսաւրեան մի ամրոցում և սովամահ արին։

Զենոնը իւր վերահաստատութեամբ (477) ամենից առաջ պարտական էր մեծ պատրիարքին։ Ուսոի կառավարութեան կողմից խելացի կարգադրութիւն էր, որ կրօնական խընդիրների կարգաւորութիւնը թողին այդ պատրիարքին, որ այնքան մեծ չափով քաղաքական հասկացողութիւն էր ցոյց տուել։ Ակակիոսը օրինակելի կերպով դուրս եկաւ այդ փշալից հարցերի միջից։ Նրա շարադրած հենոտիկոնը—հաւատոյ դաւանանքը, որ Զենոնը հրատարակեց, պահպանեց երկու սերնդի համար եկեղեցու խաղաղութիւնը։ Նրա մէջ ամուր պահուեց Նիկիայում և Նփեսոսում հաստատուած և ընդունուած հին հաւատը, իսկ Քաղկեդոնի դժբախտութիւն բերող որոշումներն իսկապես մի կողմ նետուեցին։ Ս. Կիւրեղի հին դաւանութիւնը վերահաստատելով, Աղէքսանդրիայի և Անտիոքի պատրիարքներին միջոց տրուեց վերստին հաղորդուիլ պե-

տութեան եկեղեցու հետ, պատրիարքների օրինակին հետեւեցին նոցա հօտը, բացառութիւն կազմեցին մի քանի աննշան մոլեռանդներ։ Դրանով է բացատրուում այն, որ միաբնակ եկեղեցին օրացոյցների մէջ՝ սրբերի կարգին է դասում Զինոնին և Անաստասին, որ նրա յաջորդն էր և նրա պէս էր մտածում։ Ամբողջ տէրութեան մէջ քրիստոնեայ եկեղեցու վերահաստատուած խաղաղութեան օգուտը անսահման էր, որի դէմ առանձին նշանակութիւն չունէր այն հանգամանքը, որ Հին Հռովմի պապ Փելիքս Գ-ը հանդիսաւոր կերպով իւրան բաժան յայտնեց։ Ազգովին և քաղաքականապէս Լատիններն արդէն բաժանուած էին, հետեւապէս եկեղեցական բաժանումը միայն դրա անհրաժեշտ հետեւանքն էր։ Հասկանալի է, որ Ակակիոսը՝ խաղաղութիւնը հաստատելուց յետոյ՝ ընդունած լինի սիրելական պատրիարքի տիտղոսը՝ իբրեւ միացեալ եկեղեցու առաջնակարգ հոգեւոր պետ, իսկ դա յետոյ շատ անգամ վէճի առարկայ էր։

Քաղաքական խնդիրներում Զինոնի կառավարութիւնը շարունակեց յետոյ էլ բաւական անհանգիստ դրութիւն ունենալ։ Իրաւ է, Մարկիանոս իշխանի ապստամբութիւնը շուտով խաղաղացրին, բայց վտանգաւոր դարձաւ մի ուրիշ անձնաւորութիւն։ Զօրականների առաջնորդ Իլլուսը արքունիքում աստիճանաբար ձեռք էր բերել այնպիսի ամենակարող մի դիրք, որ իսկապէս այդ տարիներում նրան պէտք է համարել արեւելեան պետութեան իրական կառավարիչ։ Զօրքը, ամենից առաջ նրա հայրենակից Ռաւրացիք, անպայման ենթակայ էին նրան։ Բացի այդ, նա հովանաւորում էր ուսումնականներին և հեղինակներին, դոցա միջից շատ անգամ դուրս էին գալիս տէրութեան բարձր պաշտօնեաներ և դոցա մէջ էին հեթանոսութեան յայտնի և ծածուկ բազմաթիւ հետեւողներ, այդպէս Լէոնտիոսը՝ թրակիան զօրքի հրամանատարը, Պամպրեպիոսը՝ որ պրոֆեսոր էր սկիզբը Աթէնքում, յետոյ մայրաքաղաքում և քաղաքական խնդիրներում առաջնակարգ հեղինակաւոր անձն էր, Մարզոսը և ուրիշները։ Իլլուսը շատ յաճախ հրապարատանում էր իւր զիրքի կարեւորութեամբ, իսկ այդ հանգամանքը տեղիք էր տալիս ընդհարումների նրա և չափից դուրս ինքնահաւան Արկադնէ կայսրուհու մէջ և որ վերջը յառաջ բերեց պառակտում։ Ուսոի շատ զարմանալի էր, որ կայսրը արեւելքի զօրաց հրամանատարութիւնը այդ անխիղճ յանցապարտին հաւատաց։ Երեւում է, նա չէր կարող ուրիշ կերպ վարուել։ Իլլուսը դէն ձգեց զիմակը։ Նա միացաւ արտակարգ փառասէր կայսրամայր Վերինայի հետ, որ ընդունեց նորա բոլոր ծրագիրները։ Իլլուսի դրդմամբ նա Լէոնտիոսին Տարսոնում կայսր օծեց և մի մանուկի մէջ ներկայացրեց հպատակներին. 484 թ. յունիսի 27 սա հանդիսաւոր կերպով մտաւ Անտիոք։ Նոր կայսրը և նրա կողմնակիցները իսկապէս Իլլուսի ձեռքին պարզ գործիք էին և անմիտ է այն ենթադրութիւնը, իբր թէ նոքա մտածել են նորից վերականգնել հեթանոսութիւնը. այդ յառաջ է եկել նրանից, որ Զինոնի վերահաստատուած կառավարութիւնը շատ փիլիսոփաների և քերականների արիւնոտ մարտիրոսութեան ենթարկեց։ Ընդհակառակը նորահաստատ կառավարութիւնը իւր ծրագրի մէջ ընդունել էր քաղկեդոնական ուղղահաւատութեան պաշտպանութիւնը. դրանով նա դրաւեց արեւելքի բարձր հոգեւորականութիւնը, որի ամենայայտնի անդամները մերժել էին հենոտիկոնը։

Բայց ժողովրդի մէջ քչերն էին հետեւում այդ ուղղութեան. ժողովուրդը վարդապետների և քարոզիչների ազդեցութեան տակ էր, իսկ դոցա մեծ մասը միաբնակներ էին։ Նոր կառավարութիւնը ժողովրդի մէջ յենարան չունէր, ուստի Զինոնի ուղարկած Յոհաննէս զօրավարը առանց դժուարութեան յաղթեց Իլլուսին և փակեց Ռաւրեան այն Պապիրիոն դղեակի մէջ, որի մէջ երբեմն ձնացել էին Վերինա կայսրուհին և Մարկիանոսը իրենց աքսորի ժամանակ։ 488 ապստամբների դլուխները ուղարկուեցին Կոստանդնուպոլիս։ Այդ բոլորի բնական հետեւանքը այն եղաւ, որ արեւելքի շատ եպիսկոպոսներ պաշտօնազուրկ եղան, ամենից առաջ Անտիոքի Պալանդիոն պատրիարքը։ Քաղկեդոնականութեան հետեւողները ծանր պատժուեցին Իլլուսի կողմնակցութեան համար։ Անտիոք եկաւ Զինոնի հին սիրելիներից մէկը, Պետրո-

սը, որին մի անգամ արդէն պաշտօնից զրկել էին, որովհետև միաբնակ ուղղութեան ծայրայեղ կողմնակից էր, բայց այժմ ընդունեց Ակակիոսի միարարական բանաձևը։ Արևելքում կատարուած քաղաքական նոր փոփոխութեան հետ կապ ունի Եդեսիայի պարսկական ուսումնարանի փակումը 484 թ., որը Նեստորի հետևողների վերջին ապաստանարանն էր։ Քաղաքական տեսակէտից նպաստ, շատ խելացի կարգադրութիւն էր, որ արևելեան նահանգներում պաշտպանում էին միաբնակ ուղղութիւնը։ Որովհետև նեստորականները պաշտպանում էին Պարսից տէրութեան մէջ ճանաչուած քրիստոնեայ հաւատացեալներին էին, իսկ Հռոմը խելացի կերպով պաշտպանութիւն ցոյց տուեց նոցա օրերում Շնորհիւ, որոնք այդպիսով իրենց հաւատի շնորհիւ, անընդհատ հաւատարիմ կը մնային հռովմէական տէրութեանը։

Զենոնի ժամանակ իրերի դրութիւնը անհամեմատ աւելի կասկածելի էր տէրութեան Եւրոպական մասում։ Գոթերը, թողնելով իրենց բնակավայրերը Պանոնիայում անընդհատ ձգտում էին դէպի հարաւ և նորից սկսեցին տէրութեան համար անվերջ վտանգ դառնալ։ Զենոնի համար առանձին բախտաւորութիւն էր, որ Ամալների թագաւորական ցեղից անկախ, ժողովրդի մէջ զօրեղ կողմնակիցներ ձեռք բերից հասարակ ծագումից մի ղինուոր՝ Թէոդերիխը, որին Յոյները—Strabos —Սարաբոս կամ Տիարիոսի որդի էին կոչում։ Զօրքի երկու առաջնորդների հակառակութիւնը տէրութեան փրկութիւնն էր։ Կատաւարութիւնը, որ ոսկի չէր խնայում կարող էր ապահով լինել, որ, եթէ Թէոդորիխներից մէկը կամ միւսը իւր դէմ կռուէր, միւսը անպատճառ իրան կօգնէր։ Թէև այս էլ կար, որ իւրաքանչիւր անգամուայ դաշնակիցը Մակեդոնիայում և Թրակիայում աւելի մեծ աւերումներ էր կատարում քան բացարձակ թշնամին։ 478 և 481 թ. Տրիարիոսի որդին յարձակուեց մայրաքաղաքի վերայ, իսկ 487 թ. Թէոդորիխ մեծը։ Երկուսն էլ յաջողութեամբ յետ մղուեցին։ Վերջինիս դէմ հռովմայեցիներից դուրս եկաւ մի հակառակորդ, որ թէ քաջ էր և թէ յաջող՝ Սաբինեան զօրապետը։ Բայց սա շուտ մեռաւ և տէրութիւնը նոր նեղութիւնների մէջ ընկաւ։ մանաւանդ երբ Տրիարիոսի որդին մի հասարակ ղինուորից սպանուելով, գոթերի թագաւորը հակառակորդից ազատուեց, որին հռովմայեցիները, կռնատուլ և պատրիկիոս տիտղոսներ շնորհելով, ի զուր աշխատել էին դրաւել։ Անզուսպ «դաշնակիցներին» նոր բնակութեան տեղեր տալին Դանուբի հովտում։ այդ ժամանակ Ոուգեր ազգի փախստական իշխանի դեսպանութիւնը Մեծ Գոթի ուշքը դարձրեց Իտալիայի վրայ։ Ինչպէս որ Օդովակրը ձգտել էր, որ Բիւզանդիոնը նրան ճանաչէր արևմուտքի կայսերական զօրապետ և կուսակալ, այնպէս էլ այժմ, որովհետև տէրում էր այն հասկացողութիւնը թէ հռովմէական տէրութիւնը անբաժան է, Զենոն կայսրը իսկապէս առանձին դաշնագրութեամբ Թէոդորիխին նշանակեց իւր յաջորդ և իշխանութեան մէջ երկրորդ, իսկ նրա ձեռքի տակ միացած գերմանացիները կայսերական զինուորներ էին համարուում։ Նա պահանջեց կայսրից Ծիրանի և սացաւ նրա յաջորդ Անաստասից։ Թէոդորիխը միշտ շեշտում էր իւր կախումը կայսրից։ Իսկ սա, որ քաղաքական իրաւունքների ձևապաշտ հետևող չէր, այլ շատ սառը դատող գործական քաղաքագէտ էր, միայն այն ժամանակ թեթևացած շունչ քաշեց, երբ նրա «Հաւատարիմ հպատակը» վերոնայն մօտ յաղթեց Օդովակրին և վերջնականապէս ինց Իտալիայում։ Ահա այդպիսով է տէրութիւնը վերջնականապէս ազատուել գերմանական ցեղից իշխողներ ունենալու վտանգից։

Զենոնի մահուան ժամանակ 491 թ. ապրիլի 11-ին երևան եկաւ թէ ինչքան ուժեղ է Թագաւորական ցեղի նշանակութիւնը ժողովրդի մէջ։ Կայսեր ընտրութիւնը կախուած էր այրի կայսրուհի Արկադիոյից, Լևոն Ա-ի աղջկանից. և նա կայսր ընտրեց և միևնոյն ժամանակ իւր համար ամուսին մի քաջածանօթ աշխարհական պաշտօնեայ՝ Անաստաս Սիլլինտարացուն, որը—ինչ որ շատ բնորոշ էր այդ ժամանակների համար—շատ չանցած քիչ էր մնացել, որ Անտիոքի պատրիարք ընտրուէր։ Սրա կառավարութիւնը համեմատած Զենոնի հետ, համեմատաբար

խաղաղ էր։ Իրաւ է հէնց սկզբում ընդհարումներ եղան Ռասբացիների հետ. նոցա հայրենակից Զենոնը մի տեսակ պրետորևաններին դիրք էր տուել մայրաքաղաքի մէջ Փոքր Ասիայի հարաւային լեռնոտ երկրի այդ կոպիտ և կռուասէր հրոսակներին. Զենոնի ազգականները և կողմնակիցները ստացել էին զինուորական ամենակարևոր պաշտօնները։ Սակայն խռովարար ամբոխը, դադուած իրենց առաջնորդներից, քաղաքական կռիւ սկսեց։ Բայց կայսրը ցոյց տուեց իւր եռանդը։ Նա Ռասբացիներին զրկեց իրենց ստացած ցորենի բաժնից։ Նոքա արիւնալից կռուից յետոյ քաղաքից դուրս վռնդուեցին։ Սակայն Զենոնի եղբայր՝ Լոնգինոսը, որը ձգտել էր թագի, անցաւ ապստամբների գլուխը։ Պատերազմը շարունակուեց վեց տարի Փոքր Ասիայի հարաւում։ Ապստամբութեան գլխաւորները, որոնք մի տեսակ ազգային բնաւորութիւն տուին, բոլորից սիրուած անձինք էին։ Նոցա հետ էր Ապամէի նախկին արքեպիսկոպոս՝ Կոնոնը, որ իւր աղօթագիրքը փոխել էր սրի հետ։ Բայց Կոտիւէի յաղթութիւնից յետոյ 493 թ. ապստամբութիւնը նուաղեց, միայն շարունակուեց պատահական յարձակումներով և ամրոցների պաշարումներով և լոկ տեղային բնաւորութիւն ունէր. արևելահռովմէական կառավարութիւնը ազատուեց Ռասբրեան պատուհասից։

Տէրութեան եւրոպական մասի հիւսիսային նահանգները Դոմերի հեռանալուց յետոյ ժողովրդից զրկուելով, ենթարկուեցին երկրի ներսում ապրող բարբարոսների անընդհատ յարձակումներին։ 493, 505 և 517 թ. յիշուում են գետերի արշաւանքներ. նոցա մասին կարծում են թէ այն ժամանակուայ սլաւոնական թափառական ցեղերից էին։ Նոքա յաղթում են հռովմէական զօրաւորներին և թալանելով ներս են խուժում Թրակիա, Մակեդոնիա և Թեսալիա։ 499 թ. փիննական Բուլգարները ծանր հարուած են հասցնում Հռովմայեցիներին Զուրտա գետի մօտ, իսկ 502 թ. ասպատակում են Թրակիան։ Կայսրը երկար պարիսպ քաշելով պաշտպանեց մայրաքաղաքը։ Այդ շրջանից է սկսուում Բալկանեան թերակղզու ժողովուրդների սլաւոնացումը, որ տիեզերական պատմութեան համար առանձին նշանակութիւն ունեցաւ։

Անաստասի ժամանակուայ բոլոր պատերազմներից ամենակարևորը Պարսից դէմ մղածն էր, որի մասին շատ լաւ տեղեկութիւն ունինք Զուքնին վանքի վարդապետ՝ Ասորայի Ճեսուայ սիւնակեացի ժամանակակից պատմութիւնից։ Երկու իշխանութիւնները էլ խախտել էին հին դաշինքները, բայց պատերազմի իսկական պատճառը տուին Հռովմայեցիները, երբ նոքա Պարսից բաժնի Հայոց քրիստոնեայ նախարարներին իրենց հովանաւորութեան տակն առան։ Քրիստոնեայ Հայերը Յոյներին բարեկամ էին մինչև որ, Ճուստինիանի անմիտ քաղաքականութեան շնորհիւ, կորաւ այդ հարևան տերութեան համակրանքը։ 502 թ. Կաւատը սկսեց պատերազմը, տիրեց Թէոդոսուպօլսին (Կարին, Էրզրում)՝ Ճունաց բաժնի Հայաստանի գլխաւոր քաղաքին։ 503 թ. սկզբին երեք ամսուայ պաշարումից յետոյ մատնութեամբ ընկաւ Ամիդ քաղաքը, որը տերութեան ամենագլխաւոր ամրոցն էր Միջագետքում։ Դժբախտ քաղաքը զգայ գազանաբարոյ յաղթողի ամբողջ կատաղութիւնը, որ Հռովմայեցիներին նորից վերադարձրուեց միայն 504 թ.։ Հռովմայեցւոց զօրապետների մէջ աչքի էր ընկնում մանաւանդ զօրականների առաջնորդ (Celer) Կելերը։ Թէ Ճունաց և թէ Պարսից Միջագետքը սարսափելի կերպով աւերուում էր թէ թշնամիներից և թէ բարեկամներից, երբ վերջապէս երկու կողմն էլ ուժասպառ եղան, 506 թ. խաղաղութիւն հաստատեցին՝ հիմք ընդունելով պատերազմից առաջ գոյութիւն ունեցող կացութիւնը։ Հիւսիսային ժողովուրդները Պարսիկներին նեղն էին լծել, կայսրը օգուտ քաղեց այդ հանգամանքից, և հակառակ դաշնադրութեան, շինեց Դարա կարևոր ամրոցը, որ սպառնում էր Մծբին քաղաքին։

Ներքուստ կառավարութիւնը եռանդուն կերպով պարապած էր վերանորոգութիւններով։ Թէ ժամանակակիցները և թէ յետագաները շատ են գովում կայսեր այն կարգադրութիւնը, որով նա վերացրեց ոսկու և արծաթի հարկը, որ շատ էր ճնշում բոլոր գասակարգերը։ Նա փորձեց նմանապէս պաշ-

ժողովրդին վաճառման դէմ կռուել։ Բնորոշ է ժամանակի ճգնաժամը—վարդապետական հայեացքների համար, որ ժողովրդին արգելում էին նոյն իսկ բարեկենդանի անմեղ զուարճութիւնները, որոնց մէջ տեսնում էին հեթանոսութեան մնացորդներ։ Ինչպէս որ Անաստասի ժամանակակից Գելասիոս պապը հռովմում վերջնականապէս արգելեց Լուպերկալիան ժողովները, այնպէս էր կայսրը արգելեց աղջկայ շորեր հագած տղայ պարողների պարերը, ինչպէս նաև Բրիւտայի մայիսեան ժողովները իրենց ժողովրդական հանդիսաւոր պարերով, որովհետև ամբոխը հարբում էր, չափը կորցնում և ծագում էին շատ անգամ արիւնահեղ վախճան ունեցող ծեծկրտոց։ Սակայն կառավարութիւնը ցոյց տուեց իւր իսկական քրիստոնէական առաքինութիւնը, երբ վերջացրեց չափազանց ժողովրդականութիւն ստացած մեծ ժողովները՝ գլադիատորների և վայրենի գազանների մենամարտութիւնները կրկէսում։

Անաստասի կառավարութիւնը առանձին կարևոր նշանակութիւն ունի ոչ այնքան քաղաքական, ինչքան եկեղեցական տեսակէտից։ Կայսրը, իւր նախորդի նման, լոկ քաղաքական միտումներից դրդուած չէր միաբնակներին բարեկամ, այլ նա հետևում էր եկեղեցական այդ ուղղութեանը իւր սրտի խորին համոզմամբ։ Նրա գլխաւոր խորհրդատուն՝ Մարինոս Ասորին նոյնպէս բացարձակ միաբնակ էր։ Ընդհակառակ, կայսրը եկեղեցական քաղաքականութեան մէջ ընտրեց միջին ճանապարհը։ Որովհետև Եւրոպան և մանաւանդ մայրաքաղաքը հակուած էին դէպի քաղկեդոնականութիւնը, նա առժամանակ համբերեց Եփիմէոս պատրիարքին, որը նոյնպէս քաղկեդոնական էր, և երբ 496 թ. նրան հրաժարեցրին, նրա յաջորդ Մակեդոնիոսը թէև ստորագրեց Հենոտիկոնին, բայց իրան ցոյց էր տալիս կայսեր եկեղեցական քաղաքականութեան կամակոր հակառակորդ։ Արևելեան նահանգներից Եգիպտոսը բացարձակ միաբնակ էր, մինչդեռ Պաղեստինը իւր բազմաթիւ վանքերի վարդապետներով օրթոդոքս էր։ Ասորիքում տիրում էր Փլաբիանի մեղմ, միջին կուսակցութիւնը։ Հենոտիկոնը ընդհանրապէս ընդունում էին իբրև տերութեան հանգանակ. բայց նրա մեկնութեան մէջ արտայայտուում էր կուսակցութիւնների խորը հակառակութիւնը։ Եգիպտացիք և Ծայրայեղ մոնոփիզիտները յայտնում էին, թէ նրա միջոցաւ մերժուում է քաղկեդոնականութիւնը, մինչդեռ ընդհակառակը՝ մայրաքաղաքում բացատրում էին որ նրա մէջ իսկապէս արտայայտուած է այն ժողովի որոշումների ընդունելութիւնը։ Միջին կուսակցութիւնը խելացի կերպով կարծիք չէր յայտնում այդ դժուար հարցի մասին, այլ մոնոփիզիտներից մղուած առանց իւր համոզմանը հակասելու, բացի Նեստորից, նզովում էր նաև Անտիոքի դպրոցի միւս ներկայացուցիչներին, մանաւանդ Դիոդորոս Տարսոնացուն և Թէոդորոս Մոփսուեստացուն։ Անաստասը շատ գովելի դիրք էր բռնել։ Նա թոյլ էր տալիս, որ նահանգներում, որտեղ ծագումով, լեզուով և պատմութիւնով միմեանցից բոլորովին տարբերում էին, պարզօրէն պահպանուեն տեղային սովորութիւնները և դոյութիւն ունեցող հայեացքները։ Կառավարութիւնն, առանց յետին մտքի, սրտով աշխատում էր պահպանել խաղաղութիւնը և միութիւն ստեղծել։ Նոյն իսկ Հռովմի՝ օրթոդոքսութեան կենդրոնի հետ, թէ կայսրը և թէ նրա պատրիարքները քանիցս հաշտութեան փորձեր արեցին։ Անաստաս Բ. խաղաղասէր պապի օրով բանակցութիւնները ընթանում էին բաւական յաջող, սակայն նրա վաղաժամ մահը ի դերև հանեց խաղաղութեան յոյսերը։ Որովհետև Հռովմի յամառ պահանջը՝ թէ պէտք է Ակակի անունը հանել եկեղեցական դրքերից, Արևելահռովմի պատուին դէմ էր և անընդունելի։ Մ՚իւս կողմից՝ Ծայրայեղ մոնոփիզիտները անընդհատ մայրաքաղաք էին ուղարկում վարդապետներից դեսպանութիւններ. սոցա առաջնորդները՝ հանձարեղ Սեվերոսը և եռանդոտ Քսենայիաս Հիերապօլսեցին կայսեր շատ դուրեկան էին։ Մէկը միւսի հետևից ժողովներ էին գումարում, բոլորն էլ առանց հետևանքի։ Ալքունական մատուռներում սուրբ Աստուածը երգում էին մոնոփիզիտների յաւելուածով. (Աստուած) «որ վասն մեր խաչեցաւ»։ Կոստանդնուպօլսի անհանգիստ ժողո-

վուրդը, որը սովորաբար ոգևորուում էր և տաքանում միայն կրկեսի ձիարշաւներով և ձեռնածուներով, նոյն յախուռն զգացմունքներով իւր վերայ առաւ օրթոդոքսութեան պաշտպանի դերը և վտանգաւոր կերպով աղմկում էր հաւատի համար: Բարկացած կայսրը 512 թ. Սիդոնում ժողով գումարեց, որի վերայ պարտք դրուեց մի այնպիսի պատասխան խմբագրել, որ այլ ևս կասկածների տեղիք չը լինի: Ժողովի բանիմաց և չափաւոր ղեկավարները՝ Փլաբիան Անտիոքացին և Նիլիա Երուսաղէմացին դէմ էին որևէ ծայրայեղ կարգադրութեան, որով վշտացրին Կամարիլայից պաշտպանուած մոնոփիզիտներին: Կայսրը փոքր առ փոքր ծերացել էր, յոգնել և դիւրագրգիռ դարձել: Նա ձանձրացել էր շարունակ բանակցելով երբէք խելքի չեկող աստուածաբանների հետ, և որոշեց միանգամից միանալ մոնոփիզիտների հետ, որոնք աւելի վճռողական էին: Այդ էր պատճառը, որ նա զիտակցօրէն թողեց իւր մինչև այդ ժամանակուայ եկեղեցական չափաւոր քաղաքականութիւնը: Նրա մասին մեզմօրէն վկայում է Յեսուա սիւնակեանցը, թէ նա յիմարացել էր ինչպէս ծերացած Սողոմոնը:

Մակեդոնին հեռացրին և նրա տեղը կարգեցին Տիմոթէոսին, որ ծայրայեղ մոնոփիզիտ էր. սա խոզոյն յարաբերութիւն հաստատեց արևելքի եկեղեցիների հետ: Փլաբիան Անտիոքացին, շուտով նաև Նիլիա Երուսաղէմացին աքսոր քշուեցին, և Անտիոքի առաքելական գահը բարձրացաւ մոնոփիզիտների առաջնակարգ ուղղութիւն տուող Սեվերոսը: Տիւրոսի 513 թ. ժողովում հանդիսաւոր կերպով վերսին ընդունեցին հինոտիկոնը և նզովեցին քաղկեդոնականութիւնը: Բայց այս անգամ էլ կայսրը ցոյց տուեց իւր մեղմութիւնը. նա յատուկ արգելեց Լիբանեան Փիւնիկիայի կուսակալին, որ վերջինս այժ չդործ դնէ Նպիփանեի և Արեթուզայի ըմբոստ եպիսկոպոսների դէմ: «Նա չէ ցանկանում պատիժ դործ դնել նոյն իսկ այն ժամանակ, երբ կասկածելի և վտանգաւոր պատահարներ տեղի կունենան, եթէ պատժելով մի կաթիլ արիւն անգամ թափուի»:

Բայց անհնար էր, որ կայսեր քաղաքականութեան փոփոխութիւնը եւրոպական հանդիսներում ընդունուէր առանց հակաճառութեան: 512 թ. մայրաքաղաքում ծագեց մի այնպիսի սարսափելի յեղափոխութիւն, որ մինչև կայսերական թագն անգամ վտանգի մատնեց. բնականաբար ըմբոստացել էին, որպէս զի պաշտպանած լինին վտանգի ենթարկուած օրթոդոքսութիւնը: Մարինոսի և Պղատոն պրեփեկտ անները կողոպտեցին և այրեցին. ժողովրդի կատաղութեան զոհ գնացին մի քանի դժբախտ մոնոփիզիտ վարդապետներ: Այդ սարսափների ժամանակ ամբողջ օրերով ամբոխը կրկեսներում երդում էր օրթոդոքս բնաղրով շարականներ: Արդէն Արիորինթոսին կայսրը հրաժարական եկաւ Անաստասը՝ առանց թագի և կայսերական զարդարանքի և մանեակի միջոցով յայտարարեց, թէ ինքը պատրաստ է հրաժարուելու, բայց բազմաղլխեան ամբոխի կառավարութիւնը անհնար մի բան է, պետութեան կառավարութիւնը միայն մէկին պիտի յանձնել: Ծերացած զահակալի աներկիւղ լեզուն ազդեց ամբոխի վերայ դիւթիչ զօրութեամբ, աղմկալից ուրախութիւնով նրան նորից կայսր ճանաչեցին և ցրուեցին իրենց տները: Կառավարութիւնը մեծ եռանդով շուտով վերականդնեց խաղաղութիւնը:

Արևմտեան նահանդների այդ տրամադրութիւնից օգուտ քաղեց մի զօրավար Վիտալիանը, ծագումով Միւսիայից, որ մի կոպիտ և փառասէր անձն էր, 514 թ. Յունուարի նահանգներում բարձրացրեց ապստամբութեան դրօշը: Օրթոդոքս հաւատը նրա համար այնքան նշանակութիւն ունէր, ինչքան երբեմն Ղևոսի համար. բայց նա գիտէր, որ եթէ իւր ծրագրի մէջ մտնի քաղկեդոնականութեան պաշտպանութիւնը, դրաւած կլինէր Եւրոպայի հոգևորականութեան և ժողովրդի համակրութիւնը: Զօրեղ զօրքի գլուխ անցած, ըստ ումանց 50,000 «Հոների» հետ, 514 թ. արշաւեց մայրաքաղաքի վերայ և կայսեր այնպէս սարսափեցրեց, որ սա խաղաղութեան համար բանակցութեան մէջ մտաւ և խոստացաւ ժողով գումարել արևմուտքի հետ միութիւն հաստատելու: Հազիւ հազ յետ էր քաշուել Վիտալիանը, նրա դէմ ուղարկեցին

կիւրեղ զօրավարին, որը սակայն յաղթուեց։ Սարսափելի ջարդ կրեց կայսեր հօրեղբօրորդին՝ Հիւպատիոսը, նրա զօրքի մեծ մասը կոտորուեց, ինքն էլ գերի ընկաւ։ Ինչպէս առաջ Օդեսոս և Անքիալոս, այժմ էլ Սոզոպօլիսը ընկաւ ապստամբների ձեռքը. նա սպառնում էր մայրաքաղաքին ծովի կողմից էլ։ Կայսրը սաիպուած եղաւ դնել իւր հօրեղբօրորդուն, 5000 ֆունտ ոսկի վճարել, իսկ Վիտալիանին պաշտօնապէս ճանաչել Թրակիայի զօրքի հրամանատար-magister militum per Thraciam։ Հերակլէի ժողովը չկայացաւ, թէև հօրմիդաս պապը Թէոդորիխի թոյլտուութեամբ ուզարկել էր իւր ներկայացուցիչներին. և դրա պատճառը այնքան կայսեր երկիւղութիւնը չէր, ինչպէս Թէոփանէսն է յայտնում, ինչքան Հռոմի եկեղեցական քաղաքականութիւնը և դաւանաբանական հայեացքները, որի հետ այն ժամանակուայ Բիւզանդիոնը չէր կարող որ և է միութիւն հաստատել։ 515 թ. պատերազմները տեղի ունեցան ապստամբ Սկիւթացւոց և կայսեր մէջ. սակայն Մարբինոսը հիմնովին յաղթեց նոցա ծովի վերայ՝ Սիւկիայի (Բեւրութ) մօտերքում և մայրաքաղաքին հանդիստութիւն պարգեւեց։ Վիտալիանը յետ քաշուեց դէպի Հիւսիս. նրա արշաւանքը վերջնականապէս անյաջող եղաւ ունեցաւ։

Ծերացած կայսեր անընդհատ պլսացաւութիւն էր պատճառում հոգևորականութիւնը։ Պաղեստինում մեծ ոյժ ունէին վանականները և ճգնաւորները. նոքա սուրբ Սաբայի և նրա ընկերների ղեկավարութեամբ մեծ համախմբումներ էին կատարում և բողոքում այն արքունի աստուածաբանութեան դէմ որ տիրում էր Կոստանդնուպօլսում։ Աղէքսանդրիայում գործը մինչև անգամ փոքրիկ ապստամբութեան հասաւ, որովհետև 517 թ. քաղաքի Ցուննայ աղնուականներն, առանց ժողովրդի և հոգևորականութեան կամքը հարցընելու, Դիոսկորոսին պատրիարք էին նշանակել։ Բայց ճարպիկ եպիսկոպոսը հասկացաւ գրաւել իւր հակառակորդներին և, անձամբ Կոստանդնուպօլիս ճանապարհորդելով, հաշտեցրեց իւր հետ նաև կառավարութիւնը։ 515 թ. Արէադնէն արդէն մեռել էր. 518 թ. ապրիլի 9-ն նրան հետևեց իւր զառամեալ ամուսինը։ Զառամելութիւնից յիմարացած ծերը կորցրել էր որ և է վճռողականութիւն և գործելու ցանկութիւն, այնպէս որ նա իւր յաջորդների մասին անմտաբար ոչինչ կարգադրութիւն չէր արել, թէև նա ունէր ազդեցիկ և հանճարեղ ազգականներ։

Անաստասի մահով վերջանում է Արևելահռոմի պատմութեան առաջին շրջանը։ Երկու անգամ վտանգ էր սպառնացել արևմուտքի պէս զերմանական պինդ տիրապետութեան հաստատուելու, երկու անգամն էլ յաջող և վերջնականապէս ազատուել էր։ Այդպիսի շրջանում երբ կրօնական և եկեղեցական խնդիրներն այնքան սուր կերպարանք առացան, ինչքան դուցէ միմիայն ԺԶ դարում, կայսերական կառավարութիւնը ընդհանրապէս առած՝ ցոյց էր տուել մեծ չափաւորութիւն և համբերութիւն։ Եթէ հաշուի չառնենք Անաստասի վերջի տարիների սխալները, ամէն ինչ ամենալաւ գոյնով է ներկայանում։ յուզուած մտքերը աստիճանաբար խաղաղուեցին։ Առանձին նշանակութիւն չունէր, որ արևմուտքը նեղացած ուռչում էր։ Բայց այդ բոլոր յուսալից պայմանները ոչնչացրեց մի պատահար, որը իւր տհմնամոտ հետևանքով հիւանդ։

Բ.

ՑՈՒՍՏԻՆԵԱՆ

ԵՒ

ՆՐԱ ՅԱՋՈՐԴՆԵՐԻ ԴԱՐԸ.

(518—610)

Երբ գահը թափուր մնաց իշխանութեան յաջորդի մասին մտածում էր ամենակարող սենեկապետ Ամանթիոսը։ Նա մտադրուել էր իւր եղբօրորդի Թէոկրիտոսին կայսր հրատարակել տալ։ Այդ նպատակի համար նա հարուստ միջոցներ տուեց Իլլիւրիացի Ցուստինին, որը ունէր արքունի ամենաաչքի ընկնող մի պաշտօն՝ պալատի պահապանների հրամանատարութիւնը—comes excubitorum (կանոնոցի հրամանատար) և նա պիտի գրաւէր այդ ազդեցիկ պրետորեաններին նեղքինու ծրագրի

համար։ Սակայն խարեբայ Ղլլիւրիացին բարբարոսին վայել խորամանգութեամբ, այդ միջոցները գործ դրեց իրեն կայսր հրատարակելու։ Սենատը և ժողովուրդը, ինչպէս միշտ այս անգամ էլ համաձայնուեցին։ Ցուստինը ճանաչուած էր իբրև հմուտ զինուոր, բնաւորութեամբ կոպիտ և օրթոդոքսութեան ջերմ կողմնակից։ Որ Ամանթիոսին իսկոյն մի կողմ ձգեցին, շատ բնական էր այն ժամանակուայ բարք ու վարքի համար։ Իրերի վիճակը հիմնովին փոխուեց և այդ արտայայտուեց նրանով, որ Վիտալեանը փայլուն դիրք ստացաւ։ Նա ստացաւ զինուորական բարձր հրամանատարութիւն, իսկ 520 թ. հիւպատոսութիւն։ Ցուստինի կառավարութիւնը (518—527) արտաքին պատահարներով շատ աղքատ է, թէ և ոչ աւելի քան անիշխանութեան ժամանակ, նա մի տեսակ նախապատրաստութիւն էր իբր եղբօրորդու երկարամեայ և նշանաւոր թագաւորութեան համար։ Միայն կովկասեան մանր իշխանների պատճառաւ Պարսից և նրա մէջ տեղի ունեցաւ ընդհարում, որը սակայն շուտ վերջացաւ։ Ցուստինի կառավարութեան ամենակարևոր դէպքը հին հռովմի հետ հաւատոյ միութեան վերահաստատութիւնն է 519 թ. պապականութեան ամենամեծ յաղթանակներից մէկն էր, որ պարսկական անունով Հորմիզդաս Կամպանացի պապի գործն էր։ Վիտալեանը իբրև օրթոդոքսութեան զգաւոր նեցուկ՝ կանգնած էր ամենաառաջին կարգում։ Նրա թելադրութեամբ դատապարտուեց մոնոփիւզիտների հոգևոր պետը՝ հանձարեղ Սեվերոս Անտիոքացին։ Անհերքելի է, որ կառավարութեան կասկածը գնալով աճում էր, երբ նա տեսնում էր այդ բռնակալ և անսկզբունք մարդու գործողութիւնները, որը սակայն շատ էր սիրուած զինուորներից։ Երբ նա հոգևորականութեան համակրանքն էլ գրաւէր, թագաւորութեան համար այնպիսի քաղաքական վտանգ կը ներկայացներ, ինչպէս երբեմն Սեվերոսի տան համար թիկնապահների առաջնորդ Պլատիանն էր։ Ուստի շատ պարզ է, որ կառավարութիւնը հետևեալ տարին արդէն յետ չնահանջեց անհրաժեշտ չարագործութեան առաջ և ոչնչացրեց կայսր իրական պաշտօնակցին, և հաղիւ թէ սխալ լինի համարել, որ Վիտալեանի սպանութեան մէջ մեծ դեր ունեցաւ Ցուստինիանոսը։ Ցուստինի կառավարութեան ամենակարևոր դէպքը Հռովմի հետ հաշտութիւն կայացնելն էր, և դրա համար ոչ մի գին բարձր չէր։ Ամենամեծ խստութեամբ աերութեան նոր հաւատը անցկացրին արևելքում և Փոքր Ասիայում։ Յիսունից աւելի եպիսկոպոսներ, մեծաւ մասամբ բարեպաշտ, ուսումնական և ծերացած մարդիկ զրկուեցին պաշտօններից և ենթարկուեցին խիստ աքսորի։ Միայն չհամարձակուեցին Եգիպտոսին ձեռք տալ։ դեռ էլի յիսուն տարի շարունակ մոնոփիւզիտները այդտեղ ապաստան էին գտնում և Փոքր Ասիայի և Ասորիքի այդտեղ փախած եկեղեցական պետերը անդադար վիճում էին Քրիստոսի մարմնի ապականութեան և անապականութեան մասին։ Արևելահռովմի համար քաղկեդոնութեան վերահաստատութիւնը մի անուղղելի քաղաքական սխալ էր։ Վեցերորդ դարում նկատելի էր, որ ամէն տեղ արձնանում էր ազգայնութեան զգացմունքը, բայց դարու հոգու համեմատ՝ այդ արտայայտուում էր եկեղեցու միջոցաւ։ Ասորական և եգիպտական եկեղեցիները, որ սկիզբն առան Ցուստինեանի ժամանակ, ատելութեամբ աերութիւնից երես դարձրին. այդ շատ կարևոր

նահանգների մէջ սկսեց տիրապետել հակաեկեղեցական և հակաթագաւորական զգացմունքը: Այն ժամանակուայ բոլոր արևելքում նկատելի զարձաւ հակահռովմէական ուղղութիւնը: Նոյն բնազդական ժողովրդական ատելութիւնը ոգևորում էր նաև Ցոյներին՝ Լատինների դէմ: Ցուստինեանով է սկսում այն գարձը, երբ փորձում են թօթափել լատինական պաշտօնական պալատական և դատաստանական լեզուի անհաճոյ ղեղան: Ուստի տէրութեան օգտի տեսակէտից կարելի է միայն ցաւել, որ Հռովմի հետ միութիւն կայացաւ: Սակայն Վիտալեանը և Ցուստինեանը ընդունել տուին իրենց ուզածը և 525 թ. Յատկին՝ Կոստանդնուպոլիսը ներկայ եղաւ մի հանդիսի, թէ ինչպէս Յովհաննէս պապը, որին Թէոդորիխը յանձնարարել էր մի բաւական չարաղուշակ պաշտօն՝ գնալ և համոզել, որ Արևելահռովմը մեղմութեամբ վարուի արիանոսների հետ, մայրաքաղաքի պատրիարքական եկեղեցու մէջ պատուոյ տեղը նստեց՝ ութերորդական պատրիարքից բարձր և պատարագ մատոյց լատիներէն լեզուով: Ցուստինեանն արդէն իրապէս իւր ձեռն էր առել կառավարութեան իսկական ղեկը, երբ 525 թ. ապրիլի 1-ին Ցուստինը նրան կայսրակից հրատարակեց և օծեց: Միևնոյն ժամանակ նրա ամուսին Թէոդորան ևս, որ առաջ կրկնսում պարող կին էր, իբր կայսերական հօրեղբօր ձեռքից սատյաւ թագ կայսրուհու, որին Ցուստինեանը այնքան յարգում էր, նախկին կեանքը, ինչպէս որ պիտի եզրակացնել նրա առաջուայ քաղաքացիական ապրուստի եղանակից, արատներից անաղարտ չէ եղել. բայց մի բան չպէտք է մոռանալ, որ այն հայհոյանքները, որ գարերի ընթացքում թափուել են նրա գլխին, ծագում են մի գրքից, որ յիշատակարանների ամենակասկածաւոր գրականութեան (Memoiren litteratur) կատարելատիպն է:[1] Թէ արքունիքի մէնոլորտից հեռացրած անեկապետը՝ իւր գազազուած ծերութեան մէջ, անլուր և թուխաւոր սաեր է հնարել, հեշտ է շատ դէպքերում տպաւորանալ, որով ստիպում է զգոյշ լինել նրա միւս ցուցմունքների վերաբերմամբ ևս: Յամենայն դէպս, Թէոդորայի վարքը իրրև թագուհու, անարատ է: Նրա թշնամիներն էլ չեն կարող ժխտել, որ նա արտակարգ հասկացողութիւն և խելք ունէր քաղաքական և թէ եկեղեցական գործերում: Թէ Ցուստինեանը իւր արտաքոյ կնոջ խրատներին աւելի լսած լինէր, գրանից տէրութեան համար դժբախտութիւն չէր ծագիլ:

(Կը շարունակուի).

Մեսրոպ Վարդապետ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Մեզ համար այնչափ թանկ մանուկներին, որոնց համար մենք ապրում և աշխատում ենք, ամբողջ ապագան, կախուած է կրթութիւնից, նոցա ապագայ վիճակի մասին հոգալիս մենք շատ անգամ անուղղելի սխալներ ենք անում այդ գաստիարակութեան մէջ. Այն երկիւղը, որով մենք սրտատրոփ հոգում ենք մանուկների ապագայ վիճակի մասին, ստիպում է մեզ վստահութիւն չունենալ մանուկ բնաւորութեան վերայ և նրա զարգացման գործի ամբողջ ծանրութիւնն առնել մեզ վերայ. Սակայն կրթութիւնը մի օրգանական գործողութիւն է, որ բղխում է ներքուստ և ոչ արտաքուստ. Ցանձն առնելով մեր ոյժից վեր մի այդպիսի գործ, մենք մոռանում ենք, որ մեր պարտքն է միայն մանկական բնոյթը սահմանափակել կարելի միջոցներով. Փոխանակ երեխայի բնաւորութեանը ազատութիւն տալու, որ նորա բնական ընդունակութիւնները ծաղկեն, մենք հազար ու մի ձևով զբաղում և դուրս ենք հանում նորա հոգու մատաղ ցանկութիւնները. Ասում են.—արգելքները զօրացնում են բնաւորութիւնը. Բայց զօրացած բնաւորութիւնը նման է բևեռային գետնաքարշ կէչի ծառին, որ թէև ցրտից չի վախենում, թէև ազատ ճիւղաւորուում է, բայց ի՞նչ. որքան տարիներ է նա բարձի հարաւի կէչուց, որի հզօր, վայելչակազմ բունը բարձր բռնած ունի նորա գանգուր գա-

1. Այս յիշատակարանի հեղինակը Պրոկոպն է:

գաթը։ Ինձ թուում է, թէ մենք շատ քիչ ենք օգտուում ազատութեան այն օրինակներից, որ տալիս է մեզ բնութիւնը։ Սաղմը աճում, զարգանում է ինքն իրան, նրան ցուցումներ պէտք չեն։ Մասնիկները—մեր կազմութիւնն պատրաստող այդ անտեսանելի էակները, իւրեանց գործը գիտեն գերազանց կերպով։ Նոքա գեղեցիկ խոհարարներ, վառարան վառողներ, ճարտարապետներ, կարգ ու կանոն պահպանողներ, նամակաբերներ և ամեն ինչ են։ Ստամոքսի մէջ ներս մտնող կերակրի վերայ ագահութեամբ յարձակուում է ցանցերի մի մեծ խումբ, որ արագութեամբ չոկչոկում է կերակրի նիւթը։ Գործին մանրաղնին կերպով ծանօթ լինելով նոքա որոշ մասնիկներ դուրս են ձգում, միւսները յանձնում են մարմնի կազմուածք հիւսող գործաւորներին, մնացած մասերով էլ տաքութիւն են տալիս մարմնի կազմուածքին։ Եթէ մարմնի մէջ բռնի կերպով ներս է մտնում որ և է անպէտք բան, այդ դէպքում առաջ է խաղում անձնուրաց վանդակների բանակը, որն իսկոյն և եթ յառաջ է բերում բորբոքումն, անկուածների վերլուծութիւն, շրջապատում է բռնի կերպով ներս խուժող շիւղը թաթախումով և աշխատում է ընդհանուր ոյժերով հալեցնել յանդուգն թշնամուն։

Եթէ նրանք իւրեանց նպատակին չհասնեն, այն ժամանակ թարախը հեռացնում են և շիւղը ծածկում պինդ կեղևով, որպէս զի օտար մարմինը կազմուածքի համար լինի մի անվնաս, մեռած տեղ։ Եթէ ստամոքսի մէջ պատահմամբ թոյն ընկնի, որը կարող է սպառնալ ամբողջ կազմուածքի քայքայմանը, այդ պահապաններն յառաջ են բերում փսխումն, որովհետև զգում են իւրեանց տկարութիւնը թոյնի առաջ նորա՝ կազմուածքի մէջ մնալու դէպքում։

Եթէ մեր մարմինը պահանջում է ազատութիւն և գիտէ օգտուել նորանից, ևս առաւել այդ ազատութիւնը կարևոր է մեր Հոգուն։ Ուսուցչապետ Թարխանովը իւր մի յօդուածում համեմատում է միտքը թթուեցնող նիւթերի հետ և ի միջի այլոց ասում։ «Ինչպէս որ նուազագոյն չափով թթուեցնող տարրերը յարմարաւոր տեղ ընկնելով, ընդունակ են ընդարձակ, երկարատև քիմիական փոփոխութեանց և վերլուծութեանց պատճառ լինելու, այսպէս և ըստ երևոյթին ամենաթոյլ ղգացմունքներն ու մտքի յղացումները ընկնելով առանձին անհատի, որպէս և ամբողջ ազգերի, գիտակցութեան մէջ, կարող են երբեմն որպէս զարկերակ ծառայել մարդու հոգեկան կեանքի ամբողջ ընթացքում, յառաջացնելով մեծամեծ փոփոխութիւններ։ Կրթութեան գործը կախումն ունի ղգացմունքի բարոյական և մարդասիրական ոյժից, այսինքն, եթէ այսպէս կարելի է ասել, կախումն ունի հոգեբանական այն հողից, որի վերայ նա կընկնի։ Խաղողի հիւթը գինի է դառնում սեպհական ոյժի շնորհիւ։ Մէրանը, որ կաթը մի քանի ժամում մածուն է գարձնում, ամենևին չի ազդում խաղողի հիւթի վերայ, եթէ վերջինս նախապատրաստուած չլինի իւրացնելու, սեպհականեցնելու նորան։ Միտքն ևս նոյնպէս չի կարող ծառայել, որպէս աստիճանաբար ղարգացող մի սկզբունք, եթէ նորա էութիւնը չեն ըմբռնել, նորանով չեն հետաքրքրըրուել։

Մարմնի կազմուածքի ինքնազարգացման պատկերը պէտք է իբրև մի ձեռնարկ ծառայէ մեր դաստիարակների համար։ Մանկավարժը պարտաւոր է լինել միայն և միայն բարեխիղճ ծառայ։ Նորա պարտականութիւնն է ժամանակին տալ կերակուրը և հետևել ուղղի մարսողութեան կանոնաւորութեանը։ Եթէ դաստատուութիւնը կանոնաւոր է, աշակերտը հետաքրքրուում է աւելի բարձրով և ինքն ընդառաջ է գնում նրան։ Մեր մէջ դեռ ևս գոյութիւն ունին սարկութեան աւանդութիւններ։ Մենք սիրում ենք հրամայել և չենք կարող համբերել ինքնուրոյնութեան, աւելի ևս բողոքի։ Մեր սովորութիւնն է ասել. «Սովորի՛ր, ինչ որ հրամայում են, եթէ ոչ՝ հեռացիր»։ Բայց որքան էլ մարդ անգիր արած լինի դասագրքեր, որքան էլ նա սովորած լինի մեծ ճշմարտութիւններ, այնուամենայնիւ այդ բոլորը դեռ մի մեռած նիւթ կը լինի, եթէ այդ մտքերը, գաղափարները չմշակուեն անպհական գիտակցութեամբ։ Կրթութեան հիմքը լինելու է աշակերտի ինքնագործունէութիւնը։ Ոչ ոք չգիտէ, թէ ինչ է հարկաւոր ամեն մի մարդու, նոյն իսկ ինքը, բայց տուէք նորան ազատութիւն և դուք կը տեսնէք, որ ոչ մի ճշմարտութիւն չի ծածկուիլ նորա գիտակցութիւնից։ Ուղիղ է, ճշմարիտ ղարգացումը կամաց և աստիճանաբար է յառաջ գնում։ տասներկու տարուայ ընթացքում Ամերիկաներ չի կարելի գտնել, դա այնքան պարզ է, որքան և այն, որ ցանած ցորենից իսկոյն չի կարելի հատիկ ստանալ։ Ամեն բան իւր ժամանակն ունի։ Աստիճանաւորութիւն և ազատութիւն, ահա այն պայմանները, որոնց միջոցով մարդը կարող է հասնել իր բարձր կատարելութեանը։

Ժամանակակից մարդու կեանքը մի տխուր պատկեր է ներկայացնում։ Մեր առաջ տեղի է ունենում մարդկային հոգու ողբերգական սարսափելի տեսարաններ։ Այսպիսով մենք կորցնում ենք մեր յոյսը և հաւատը։ Ցուսահատութիւնը մեզ համար խոչընդոտ է հանդիսանում։ մենք թուլանում ենք ֆիզիքապէս, չեղաշրջում մեր ճաշակը և ցանկութիւնները։ Այս վիշտ է, բայց մի վիշտ, որ մենք ենք ստեղծում։ Գիտակցութեան վերայ բըռնանալը, դասեր անգիր անել ու թուլթակութիւնն կեանքի ամենացաւալի երևոյթների է հասցնում—անհամաձայնութեան խօսքի և գործի մէջ։ Գիտու-

թիւնը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի։ Տասնեակ տարիներ են հարկաւոր ինժիներ, աստուածաբան, բժիշկ դառնալու համար։ Այդ ժամանակի ընթացքում որքան գեղեցիկ ճշմարտութիւններ ենք լսում, որքան օգտակար գիտութիւններ ենք ձեռք բերում, բայց ինչ օգուտ, քանի որ դիպլոմ ստանալուն պէս սկսում ենք ապրել անմիտ և անխղճի կերպով։ Ինժիները գառնում է անգութ գործատէր, ծաղրող հնարագէտներին, աստուածաբանը անսիրտ աստիճանաւոր, տանջող, արհամարհող նոր Ամերիկա գտնողներին։ Օրէնքներն ու կանոնները շուտով մոռացւում են հաճութեամբ։ Քենագործը իւր ամբողջ կեանքի ընթացքում չի մտածում կատարելագործել այն մեքենան, որի վրայ ինքը աշխատում է, բժիշկը, անգիր անելով մի կամ երկու հարիւր գեղատոմս, հանգստանում դպիների վերայ, կարծես այլևս առաջ գնալու տեղ չկայ բժշկականութեան մէջ։

Բանիմաց դասակարգը փափագում է «նոր խօսք» լսել, մինչ այդ խօսքն ամենի աչքի առաջն է. նա նոյնչափ հին է, որչափ ինքն աշխարհը, նորանով ենք մենք ապրում, առաջ գնում։ Ճշմարտութիւնը կանգնած է մեր սրտի դռների առաջ, միայն թէ մենք կոյր և ծոյլ ենք։ Մենք գաշնագրութիւններ ենք գրում ազատութեան մասին, բարձրաձայնչիւն ճառեր ենք կարդում անհատի նշանակութեան և նորա յառաջադիմութեան մասին, մինչ իրապէս ամենակոպիտ կերպով ոտնակոխ ենք անում մարդու իրաւունքները։ Ծնողները մարգախօսի, լրջօրէն խօսելով իւրեանց որդոց հետ, արդեօք զննո՞ւմ են նոցա ընդունակութեանց սաղմերը։ Ի՞նչ են անում մանկավարժները։ Ծանօթանո՞ւմ են արդեօք նոքա իւրեանց աշակերտների հետ, ականջ և ո՞ւշք են դնում արդեօք նոցա հարցումներին, տարակուսանքներին։ Ո՜չ, ամբիոնից մինչև նստարան մի՜ծ է վիհը։ Անձնական կեանքը գառնում է աւելի և աւելի նեղ, միակողմանի, իսկ մենք զուարճանում ենք միայն խօսակցութիւններով։ Ծամանակ է ուշք դարձնել, թէ արդեօք ի՞նչն է մատաղ սերնդի կրթութեան էութիւնը։

«Կրթել», ըստ ժողովրդի, նշանակում է կերակրել առողջ կերակրով, հնարաւորութիւն տալ կազմուածքին աղատ զարգացնելու իւր մէջ թագնուած բոլոր ոյժերն ու ընդունակութիւնները։ Թէ ինչպես են նայում կրթութեան գործի վերայ մեր մանկավարժները, այդ շատ պարզ է։ Հրամայում են անգիր սովորել պատմութեան, կանոնների, պատուիրանների որոշ կարգեր և այսպիսով ամէն ինչ կատարեալ է։ 8, 9 տարեկան հասակից սկսած նստեցնում են մանկանը դպրոցում և հէնց առաջին օրուանից նորան «դաս» են տալիս։ Այդ գասը այլևս չի մոռանում մարդուն նորա ամբողջ կեանքի ընթացքում, գառնում է նորան անբաժան ընկեր։ Ուսման տարուայ ամբողջ ընթացքում երեխան «դասով» է զբաղուած, իւրաքանչիւր առաւօտ այդ «դաս»ը կրկնում է, դասարանում պատասխանում, պարապմունքներից յետոյ աշակերտը ստիպուած է պատրաստել նորան, իսկ գիշերը տանջուում է այդ «դաս»-ից իրրև զարհուրելի երազից։ «Դաս»-ի միջոցին ժամանակ չը կայ փոքր ինչ հանգստանալու, կաղդուրուելու։ «Դաս»-ը շատ է, պէտք է շտապել անգիր անել, չիմանալ չի կարելի, մանկավարժները այդ պատճառով դուրս կանեն աշակերտին դպրոցից։

Զարգացման սկզբունքը բոլոր մեթօդիկանների և դիտակտիկանների հիմքն է։ Իրականի մէջ բոլորովին այլ բան ենք նկատում։ Մանկավարժները առ հասարակ գործ են ունենում դասարանի և ոչ աշակերտի անձնաւորութեան հետ։ Նոքա բոլոր աշակերտների համար առաջարկում են միևնոյն «դաս»-ը, պահանջում են միևնոյն պատասխանները։ Նոցա համար միանգամայն կարևոր չէ այն, որ աշակերտներից մէկն աւելի ընդունակ է երաժիշտ լինելու, քան մեքենագործ, մի ուրիշը չի կարող յառաջ գնալ ընկերների հետ և այլն։ Այդպիսի դէպքերում մանկավարժութիւնը կարելի է համեմատել զինուորական խստութեան, նորա դիսցիպլինայի հետ, որ բոլորովին չի հետաքրքրուում մի որև է անձով, նա կառավարում է խմբեր։ Մանկավարժները պարտաւոր են պարապել որոշ չափով ժամեր, անցնել ծրագիրը, կատարել հրահանգները, ուստի այդ ամէնի համար յառաջ է գալիս մի տխուր տեսարան—սանձահարելու չարաճճիներին և ծոյլերին։

Մեր կրթութիւնը հիմնուած է բռնութեանց վերայ։ Մարդս մանկավարժների համար է մի փոս, ուր կարելի է լցնել ամենայն տեսակ անպէտք նիւթեր, որոնցից ծանրները նստելով մատաղ հոգու վերայ, թոյլ չեն տալիս աճելու և ամրապնդելու նորա սաղմերը։ Մատաղ սերնդի առաջին տարիներն անցնում են դասագրքեր անգիր անելով, նա հասարակական կեանքի մէջ է մտնում անթիւ աշխարհագրական անուններ գիտենալով, բայց առանց բնաւորութեան և որոշ համոզմունքների, այնպէս որ՝ եթէ մինչև անգամ ինքնուրոյնութիւն է ցոյց տալիս, այն ևս անպատճառ մի որև է այլանդակ ձևով է լինում։ Աշխարհագրութիւնը, պատմութիւնը, կրթութեան և քաղաքակրթութեան զարգացման համար խիստ կարևոր են, սակայն մեր մանկավարժները և առանձնաշնորհութիւն վայելող դասագրքերի հեղինակները կարծում են, որ իրր պատմութեան ամբողջ նշանակութիւնը աշակերտի՝ քննութեան առանց դժուարանալու հետևեալ հարցերին պատասխանելն է՝ ո՞ր թուին էր այն պատերազմը, որ եղել է այս ինչ գետի վերայ։ ո՞վ է հիմնել այս կամ այն քաղաքը և այն։ Ի հարկէ աշակերտները

հարկագրուած են հնազանդուել մանկավարժների հրամաններին, նոքա պարտաւոր են անգիր սովորել պատմութիւնը առանց հասկանալու նորա էական նշանակութիւնը, միայն թէ մանկավարժների կողմից գովասանքի արժանանան։ Մեր մանկավարժները աւելորդ են համարում պահանջել աշակերտից հին պատմութիւնը իր էական կէտերով, նոցա նպատակն է անգիր անել տալ աշակերտին ազգագրական աղիւսակը, ի՞նչով է սկսուում և ի՞նչով վերջանում նորա քննական տոմսը և՛, ո՞վ չի խոստովանում աշխարհագրութեան դասերի օգտակարութիւնն, բայց այդ դեռ չի նշանակում, որ անհրաժեշտ է յիշել երկրագնտի ամբողջ կղզիների, լճերի, գետերի անունները։ Սոսկ տերմիններ թուելը դեռ գիտութիւն, ուսում չէ, այն ինչ ուսման ամբողջ ընթացքում աշակերտը զբաղուած է այդ մեռած բառերը կրկնելով։ Արդեօք չի հնարաւորութիւն լինի յիշողութեան մէջ պահել այն անթիւ պատմական և աշխարհագրական անունները, որոնցով լիքն են մեր դասագրքերը, պէտք է չափից դուրս ոյժ, դեռատի ամբողջ եռանդը։ Կանոնի քննութիւնը և անգիր արած բառերը շատ և շատ դէպքերում այլևս անպէտք կը լինին։ Դեռահաս մարդը գիմնազիայից դուրս գալով 1—2 տարուց յետոյ կը մոռանայ մեծ մասը և երբեմն էլ աւելի քիչ բան կիմանայ, քան օրաթերթ կամ ամսագիր կարդացող մի մանրավաճառ։ Կարդալով մի որ և է տեղի թղթակցութիւն, նա ստիպուած է բաց անել քարտէզը գտնելու յիշեալ քաղաքի կամ գիւղի տեղը։ Տասնամեայ անգիր անելու արդիւնքը լինում է անտարբերութիւն և ծուլութիւն, երբեմն նոյն իսկ զզուանք դէպի գիտութիւնը։

Մենք շփոթում ենք ընդհանուր կրթութիւնը մասնագիտականի հետ։ Կեանքի համար կարևոր է գիտութեան էութիւնը, նորա հետևանքը, ուղղացուցութիւնը, այն ինչ մենք առաջարկում ենք նորա հում նիւթը, այն հաւաքածուն, որը կազմելու համար երկար աշխատում մասնագէտ գիտնականը։ Կեանքը ծառայում է որպէս մի փորձաւորութիւն դպրոցի համար։ Կեանքի համար հարկաւոր են գաղափարներ և ոչ բառեր։ Մասնագէտն էլ բառեր չի սիրում։ Մեր ներկայ դասատուութիւնը ծանօթացնում է իւր սաներին գիտութեան հետ այնպէս, ինչպէս ծանօթացրած կը լինէր ճարտարապետը աշակերտին իւր ձեռնարկած շինութեան հետ, նմէ ստիպէր նորան կրել նորա մօտ գերան, աղիւս կամ և այլն։ Ճարտարապետը պարտաւոր է պարապել մակարդակի և նախագծի կազմութեամբ, անխոհեմութիւն կըլինէր ստիպել նորան կրելու աղիւս և այլ նիւթեր։ Մանկավարժները փոխանակ անխորհուրդ կերպով առաջարկելու աշակերտին սովորել «այստեղից մինչև այնտեղ», պէտք է զբաղուեն մարդուս ինքնակրթութեան վերաբերեալ գիտողութիւններով։ Ուսուցչութեան միջոցով նամանաւանդ ինքնուրոյն գրաւոր կամ ձեռքի աշխատութիւնների խելացի ընտրողութեամբ, նոքա պարտաւոր են որոշել աշակերտների բնական հակումները և իրանց գիտութիւնների արդիւնքը հրապարակ հանել։ Այսպիսով նոքա մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին թէ գիտութեանն, և թէ իւրեանց սաների ապագայ բազդաւորութեանն։ Ուսուցչարանը կարող էր լաբորատորիայի նշանակութիւն ունենալ, որտեղ էկսպերտները գիտնական ճանապարհով կը ճանաչէին աշակերտների ընդունակութիւնները ու հակումները և սաներին կուղղարկէին նոցա ընդունակութիւններին համապատասխան մասնագիտական դպրոցները։

Կեանքի էվոլիւցեան երկու տարբեր ճանապարհներով է կատարուում՝ մի կողմից կազմուածքը առանձնայատուկ է մարդուն, միւս կողմից նա յարմարուում է տեղական կեանքին։ Հէնց նոյն իսկ մարդու կազմուածքի մէջ յառաջ է գալիս նոյնանման գործողութիւն։ Ընդհանուր ինքնաճանաչողութիւնն անց է կենում գործարաններին, որոնք լրացնելով մէկ մէկին, ծառայում են մի ընդհանուր նպատակի՝ պահպանել կազմուածքի կեանքը։ Պետութեանց կեանքի մէջ մենք տեսնում ենք, որ արհեստաւորներն, նկարիչների և երաժիշտների խմբեր, ընկերութիւններ են կազմում, հանրամարդկային գաղափարին ծառայելու համար մարդկանց գործունէութիւնը, զբաղմունքը մասնագիտութեան ձև է ստանում։

Այս կրկնակի գործողութիւնը բնութեան օրէնքն է։ Ժամանակակից կեանքի պայմաններն այնպէս են, որ իւրաքանչիւր մարդու անհրաժեշտ է մասնագէտ լինել։ Որպէս զի մարդ կերակրուի, պէտք է որ և է արհեստ իմանայ։ Հասարակութիւնն այնպէս է բաժանում աշխատանքը իւր անդամների մէջ, որ ամէն մարդ աշխատի առանձին ուղղութեամբ, որովհետև այդպիսով է բարձրանում աշխատանքի արդիւնաւորութիւնը։ Բայց ինչ մասնագիտութեան համար էլ պատրաստէ դպրոցը, այնուամենայնիւ նա աչքի առաջ պէտք է ունենայ հոգու և մարմնի զուգընթաց զարգացումը։ Արհեստաւորը պարտաւոր է գրքեր կարդալ, պէտք է լսէ հանրամատչելի ժողովրդական դասախօսութիւններ, կարողանայ գրել իւր նկատողութիւնները։ Մտաւոր զբաղմունք ունեցող մարդը պարտական է ամենայն օր ֆիզիքապէս աշխատել։ Ուսուցչարանը պէտք է յառաջ բերէ իւր սաների մէջ այն համոզմունքը, որ հոգու և մարմնի հաւասարակշռութիւնը մի տեսակ գրաւական է յաջող ապագայի համար։ Հին ժամանակներում մարդիկ ապաւինում էին իւրեանց մկանութիւններին, ձեռները և ոտները նոցա պաշտպաններն էին. այժմ դոքա երկրորդական տեղ են բռնում։ առաջնակարգ ոյժն է խելքը, միտքը՝

Մարդն իւր առանձնասենեակում, չորս պատերով շրջապատուած, գրիչ և կարկինը ձեռին, պատերազմներ է մղում և յաղթութիւններ է տանում։ Նորա մօտ ընկած է հնազանդ մեքենան, որ մշակում և ցանում է նորա դաշտերը, հաւաքում է ցորենը, հադցնում է իւր հրամայողին, տանում, շրջեցնում է նորան օդի մէջ, իջեցնում է ծովի յատակը, նորա առաջ նկարում է հեռաւոր երկրների կենդանի նկարներ, նորան է հասցնում հազարաւոր վերստեր հեռու գտանուող հնչիւններ։ Մարդը շունչ և երակ է դառնում տիեզերքի համար, Նորա կամքը տարածուում է հեռո՛ւ, շատ հեռո՛ւ անհուն տարածութեան մէջ։ Նորա գիտակցութիւնը թափանցում է բնութեան խորքը։ Բայց մարդի ոյժը պէտք է ղեկոյշ և վարպետօրէն բանեցնել։

Հոգեկան և նիւթական սկզբնաւորութեանց, ձևի և բովանդակութեան, գիտակցութեան և փորձի անմիջական կապակցութիւնն էհասկանալն մանկավարժական գիտութիւնը կեղծ դրութեան մէջ է դնում, որի արդիւնքը լինում է այլանդակութիւն իւր բոլոր սոսկալի ձևերով։ «Մարդկային միտքը չափազանց յեղյեղուն, առաձգական է, որով՝ փաստերի մասին դատողութիւն տալիս՝ կարող է հասնել մինչև ստեղծագործող ընդունակութեանց աստիճաններն, ասել է Ցենդալը, այսինքն՝ թէ մարդկային միտքն ընդունակ է նորանոր գիւտեր, ստեղծագործութիւններ անելու։ Այդ այդպէս է, բայց եթէ մենք սկսենք պարապել միայն դատողութիւններով, այն ժամանակ կարող է պատահել, որ հասնենք այն վիճակին, երբ մարդ կորցնում է մըտածողութեանց ամենատեսակ ընդունակութիւններն անգամ։

Մտածողութիւնը մի կենդրոնական գործունէութիւն է։ Գիտակցութեան աշխատութեան տևողութիւնը կախում ունի միայն մարդու անհատական եռանդից։ Ուղեղի անընդհատ գործունէութիւնը կարող է ուժասպառ անել ամբողջ մարմնի կազմուածքը և կարող է խելագարութեան հասցնել։ Մենք բոլորս համարեա մտաւորապէս, բարոյապէս և ֆիզիքապէս անբնական մարդիկ ենք։ Մեր կրթութեան այժմեան ուղղութիւնն, եթէ նա չբարեփոխուի, ապագայում աշխարհս կը դարձնի խելագարների բնակարան։ Հիպնոտիզմի ազդեցութիւնը ցոյց է տալիս, թէ ի՞նչպէս մեր մէջ ժամանակի ընթացքում տարածուեց կամքի թուլութեան հիւանդութիւնը։ Մեր երիտասարդութիւնը հետևում է եղած հոսանքին, պատահմունքի խաղալիկ է։ Մեզ վերայ իշխում են կրքերը և ոչ բանականութիւնը, որին մենք ուժասպառ ենք անում իւր կարողութեան չափից աւելի ծանր աշխատանքով։ Երբ ցանկութիւնը գեռ նոր է յղանում մեր մէջ, կամքը գեռ ևս կարողանում է խշխել նորան. բայց քանի որ ցանկութիւնն դառնում է հաստատուն, տևողական, գիտակցութեան ներգործող ոյժը՝ կամքը տեղի է տալիս։ Ցանկութիւնն ձեռք է բերում մի կամք, որ ի վերջոյ, Իւսպիտերի պէս, գահընկեց է անում իւր ծնողին։ Այդ ձգտող, խիղճխղող կրքերի և բանականութեան կռուի մէջ խորտակուում է մեր «ես»-ը և ուղեղի մէջ անիշխանութիւն է տիրում։

Պէտք չէ յուսահատուել, ապագայում կարող է լաւ լինել։ Բնութիւնն ինքը այդպիսի ցաւեր բուժող կը հանդիսանայ։ Կը գայ ժամանակ, երբ խրոխտ մանկավարժը կըդառնայ խոնարհ գիտող և օգնող մատաղ ոյժերի։ Բնութիւնը բռնութիւն չի սիրում։ Մի՛ բռնանար, ահա մի պատուէր, որը կայ իւրաքանչիւր մարդու խղճի խորքում և որ կազմում է այն երկրային ճշմարտութիւնը, դեպի որը, թէև կուրօրէն, բայց մեծ ցանկութեամբ, ձգտում է մարդկութիւնը։ Մարդու ոյժերը սահմանափակուած են ժամանակի և տարածութեան ձեռքով, բայց նորա հոգու խորքերում թագնուած մեծագոյն խորհուրդներ կան։ Ազատեցէք մարդուն, որպէս զի նա դառնայ Պիւթագորոս, Նիւտոն և այլն։ Մեր առաջ բացուում է անթիւ գիւտերի հեռանկարը։ Մարդու մէջ անսպառ հարստութիւն, գանձ կայ, պէտք է փորել, դուրս բերել նոցա և ոչ թէ ծածկել։ Պատմութիւնը պատկերացնում է մեր առաջ մարդկային մտքի կարողութեան չափը զանազան ժամանակներում։ Մարդ որչափ ազատ լինի, նոյնչափ և լի, փարթամ հասակ և հոգու հզօր կարողութիւն կունենայ։ Եթէ մարդկութիւնը յառաջ է գնում, այդ ոչ թէ նորանից է, որ մարդիկ անգիր են անում օտարի ասածներն, այլ որ իւրանք որ և է բանի մասին գիտակցութեամբ խորհում են։ Կողմնացոյցի, հեռադիտակի, տպագրական մեքենայի գաղափարները գտնուել են ներքին ջանքով, սեպհական մտածողութեամբ և ոչ թէ դասագրքերի շնորհիւ։ Մարդու կամքին թողէք խորասուզուելու իւր ներքին հարստութեանց մէջ, նա կը գտնի այնտեղ ոչ միայն այն, ինչ որ գտել են նախորդները, այլ և այն ամենը, ինչ որ կարելի է գտնել, միայն թէ ժամանակն արգելք չլինի անհատականութիւնների կատարեալ բարգաւանման։ Մեր ներսը թագնուած է ամեն տեսակ իմաստութիւն։ Նորան ազատութիւն տուէք և ով կարողութիւն ունի, կաճի։

Թարգմ. „Недѣля"-ից.

Գ. Ղ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Ամբողջ աշխարհի հարստութիւնը.—Ծողոված տեղկոգրթիւնների համաձայն ամբողջ աշխարհի ոսկու, արծաթի և պղնձի դրամների ընդհանուր գումարը 1600 թ. հասնում էր 3,275 միլիոն ֆրանկի։ Երկու հարիւր տարուց յետոյ այդ գումարը հասաւ 14 միլիարդ և 200 միլիոնի։ Սկսած ԺԹ դարի սկզբից այդ յառաջատութիւնն աւելի արագ քայլերով գնաց, այնպէս որ գործառնութեանց մէջ եղած ոսկու, արծաթի և պղնձէ դրամների քանակը հասնում է այժմ մինչև 62 միլիարդ ֆրանկի։

Մի քանի խօսք ևս թղթադրամների մասին։ Դոցա գործածութիւնը համեմատաբար աւելի նոր է։ Համարեա անգործածութեան մատնուած ԺԷ. դարու վերջում թղթադրամը ԺԸ. դարում հսկայական քայլերով է առաջ գնում։ 1800 թ. թղթադրամի գումարը հասնում էր մօտ երկու միլիարդի, իսկ այժմ հասնում է 20 միլիարդ ֆրանկի։ Այսպէս՝ արագ աճման տեսակէտից առաջին տեղը բռնում է բանկային տոմսերը, իսկ երկրորդ տեղը ոսկին։ 1600 թ. գործածութեան մէջ եղած ոսկու քանակը հաւասար էր 725 միլիոն ֆրանկի, իսկ երկու դար յետոյ՝—3150 միլիոն. իսկ այժմ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում գործադրուող ոսկու քանակը հասնում է 25 միլիարդ ֆրանկի։

Եթէ հետաքրքիր լինենք իմանալու թէ այդքան գումարն ինչպէս է բաժանուած, ապա կը տեսնենք, որ ամենից հարուստը ֆրանսիացիք են, որովհետև իւրաքանչիւր ֆրանսիացու հասնում է 300 ֆրանկ. ամէն մի Հոլլանդացու՝ 195 ֆր., գերմանացու՝ 125 ֆր., անգլիացու՝ 110 ֆր., և ռուսի՝ 50 ֆրանկ։ Ամենից աւելի աղքատը չինացիք են, որովհետև Երկնային Կայսրութեան ամէն մի հպատակի հասնում է միայն 12 ու կէս ֆր.։ Աշխարհական ոսկէ դրամը Բոլիվիայի դուբլօն կոչուած դրամն է, որն արժէ 81 ֆր., 25 սանտիմ. ծէրին է 6 ֆր. 55 սանտիմ։

*
* *

Միջազգային բողոքարկութիւն դպրոցական մանկանց.—Գաղղիայում և Անգղիայում ընդարձակ ծաւալ է ստացել գպրոցական մանկանց միջազգային թղթակցութիւնը, որին քիչ չեն նպաստել մի քանի լրագիրները՝—„Revue Umuersaire“ Reuiw of Reuiews“։ Ամենայաջող նամակագրութիւնը պէտք է համարել Գաղղիացի և Անգղիացի մանուկների մէջ եղածը։ Գաղղիայում մասնակցող մանկանց թիւը 1,700-ի իսկ աղջկանցը 300-ի է հասնում։ իսկ Անգղիայում մի քիչ պակաս է 1500։ աւելի նուազ է Իտալիայում՝ 500։ իսկ Գերմանիայում այնքան աննշան է, որ վերոյիշեալ լրագիրները ոչ մի թիւ չեն յիշատակում։

*
* *

Երեմտական հոսանքի ազդեցութիւնը բոյսերի աճեցողական վերաբ.—Ամերիկացի յայտնի բուսաբան Կենէի փորձերը ցոյց են տուել, որ ելեքտրական հոսանքը զարմանալի կերպով արագացնում է բոյսերի աճումը, միևնոյն ժամանակ նկատուել է, որ քանի հոսանքը զօրեղ է և անընդհատ, այնքան բոյսը շատ է զարգանում, ծիլերը, արմատները արձակում. ընդհակառակը, քանի ելեքտրական հոսանքը թոյլ է և ընդհատ, այնքան աննշան է նորա զարգացման արագութիւնը։ Ուրեմն շուտով կը գտնուին միջոցներ, որ հարկ եղած ժամանակ այս կամ այն բոյսն ու պտուղը ըստ պահանջի շուտով կը հասցնեն և կամ մի քանի անգամ տարուայ մէջ դարևոր շրջանում զարգացող բոյսեր կաճեցնեն։

*
* *

Գուիտոֆ Նանսենի գտիները հանդիսատ էքստուին Շուեդացի Անդրէին, և նա յանձն առաւ հետազօտել հիւսիսային բևեռը, բայց ոչ նաւով և մակոյկով գնալ այն տեղ, այլ օդապարիկով։ Տոմսէից նա բաժրացել է դէպի հիւսիս։ Օրուայ հողմը շատ յաջողակ է եղել. թէև օդի վերին գաւառներում հակառակ հոսանքները մի ժամանակ արգելք են եղել կանոնաւոր թռչելուն, նոյն իսկ հանդիսատեսները մի առժամանակ վախեցել են, որ չլինի թէ օդապարիկը սեպացած ժայռերին խփուելով պայթի։

Գիտնականները ընդհանրապէս կարծում են, որ նոյն իսկ եթէ օդապարիկը պայթի Անդրէն և իր ընկերները շատ մեծ վտանգի չեն ենթարկուիլ։ Առաջին տեղեկութիւնը այս ճանապարհորդութեան մասին սպասում են կամ Սիբիրից և կամ հիւսիսային Ամերիկայից։

*
* *

Լոյսը իբր միջոց բժշկութեան.—Պլորոցի յետին աշակերտը գիտէ լուսոյ ահագին ազդեցութիւնը բուսական և կենդանական կեանքի վերայ. բայց միայն յետին ժամանակներում նկատեցին բժիշկները, որ լուսոյ ճառագայթները բժշկում են հոգեկան հիւանդներին գունաւոր ճառագայթների միջոցով։ Նոյնպէս զանազան ազգերի մէջ որոշ հիւանդութեանց ժամանակ գունաւոր շորեր են հագցընում հիւանդին, կամ բոլորովին մթութեան մէջ են պահում։ Օրինակ ծաղկի հիւանդութեան ժամանակ Ռումինացիք հիւանդի ձեռքն ու երեսը ծածկում են կարմիր մահուդով, նոյնպէս վարուում են Ճապոնացիք. իսկ Տոնկինի բնակիչները հիւանդի մահճի շուրջը կարմիր կարպետներ են կախում։

Սրանից երեք տարի առաջ Դանիացի բժիշկ Ֆինսենը երկար հետազօտութիւններից յետոյ մի և նոյն եզրակացութեան եկաւ, թէ կարմիր գոյնը կատարելապէս բժշկում է ծաղիկ հիւանդութիւնը, կարճացնում է նրա տևողութեան շրջանը, բոլորովին անվտանգ գարձնում նորա ազդեցութիւնը, և թոյլ չի տալիս այլանդակել դէմքն ու կաւրացնել աչքերը։ Միևնոյն ժամանակ նորա փորձերը մի ուրիշ ոչ պակաս նշանաւոր հետևանքի բերին։ Արեգակի և արհեստական լուսոյ ճառագայթները ոչնչացնում են բակտերիաները և հզօր միջոց են վարակիչ հիւանդութեանց դէմ։ ուստի մսի և խաւար բնակարանները ամենանպաստաւոր տեղեր են ամեն տեսակ վարակիչ հիւանդութեանց համար, ընդհակառակն լուսաւոր սենեակները առողջութեան միակ ապաստանարաններն են։

Ծաղկից յետոյ ոչ պակաս զարհուրելի և որ գլխաւորն է անբուժելի համարուած հիւանդութիւնն է օձիկ կոչուածը (lupus, волчанка)։ Ֆինսեն գտաւ էր, որ եթէ ճառագայթները կարող են աղ-

գել կաշուի հիւանդութիւններից մինի (ծաղկի) վերայ, ուրեմն պիտի աղգեն և ուրիշների վերայ. ապա և օձիկի վերայ. յիրաւի նրա փորձերը յաջողութեամբ պսակուեցան. նա զօրեղ ելեքտրականի լապտերների լուսով կարողացաւ բժշկել 6—8 տարուայ օձիկ հիւանդութիւններ, որ արդէն բռնել էին հիւանդի ամբողջ երեսը։

Փենսենի հայրենակիցները ստորագրութիւն բաց արին և հաւաքելով բաւականաչափ գումար՝ հիմնեցին «լուսոյ ճեմարան» բժշկի համար։ Ամբողջ գիտնական աշխարհի ուշադրութիւնը դէպի Դանիա է ուղղուած, և ոչ միայն արտաքին կաշու, այլ և ներքին՝ նեարդային և հոգևկան հիւանդութեանց նորանոր բուժիչ միջոցները գտնելու յոյսեր են տածում։

*
* *

Խմելու ջուրը մաքրելու համար հանրահայտ մի-ջոցներ.—Գրանցքի ջուրը իւր մէջ պարունակող զանազան կեղտոտութիւններից՝ կաւից, աղբի տեսակներից և այլ անտեսանելի անմաքրութիւններից ազատելու համար ամենից աւելի յարմար է գործածրել հասարակ շիպ և կամ քլորակրաքարի և ածխաթթուի սօդայի (կալաքար) խառնուրդ։ Դորա համար պէտք է վեր առնել թէյի մի մեծ գդալ փոշի գարձրած շիպ և լուծել ½ բաժակ տաք ջրի մէջ. այս խառնուրդը պէտք է լցնել 4 վեդրօ կեղտոտ ջրի մէջ. (եթէ ջուրը շատ կեղտոտ է, այդ դէպքում պէտք է վերցնել մի թէյի բաժակից քիչ աւելի) և իսկոյն խառնել, ապա խառնուրդը 8 ժամ հանգիստ պահելուց յետոյ, երբ նկատուի ջրի բոլորովին պարզ լինելը, ամենայն զգուշութեամբ պէտք է դատարկել ջուրը, որպէս զի չպղտորուի, և չխառնուի ամանի յատակի վերայ նստած կեղտի հետ։

Այս կերպ մաքրելն ունի այն մեծ անյարմարութիւնն, որ շատ երկար ժամանակ է պահանջում ջուրը կատարեալապէս զտելու և գործածական դարձնելու համար, աւելի դիւրին է և քիչ ժամանակ է պահանջում չորս շերտ հոլանդական կամ ռուսական քաթանի միջոցով քամելը, որ տեւում է միայն 2 ժամ։

Շիպը ջրում լուծելով, ոչ միայն ջրից հեռացնում ենք ցեխի մասնիկները, այլև որոշ չափով մաքրում ենք նորան այն անտեսանելի միկրոբներից, որոնցով լիքն է ամենամաքուր ջուրը անգամ։ Շիպով մաքրած ջուրը ազատում է անտեսանելի կենդանիներից ոչ միայն մեքենայական, այլ և քիմիական ճանապարհով, որովհետև ջրում շիպը բաւականին երկար ժամանակ արգիլք է լինում միկրոբների բազմանալուն. ահա այդ պատճառով էլ շիպով մաքրած ջուրը կարելի է դեռ 2—3 օր գործածել։

Քլորաերկաթի և ածխաթթուի սօդայի խառնուրդով ջուրը կարելի է աւելի լաւ մաքրել և աւելի արագ կերպով կատարել այդ գործողութիւնը։ Այս միջոցով մաքրած ջուրը՝ աւելի ախորժելի և համեղ է շիպով մաքրածից և մանաւանդ՝ որ է և ամենազլխաւորն, երկաթի և ածխաթթուի սօդայի խառնուրդի միջոցով մաքրած ջրի մնացորդը—կեղտը տանում է իւր հետ աւելի մեծ քանակութեամբ միկրոբներ, քան շիպով մաքրած ջրից գոյացած տականքը և բացի դրանցից, գարձեալ մի որոշ ժամանակով արգելք է հանդիսանում նոցա բազմանալուն։

Պէտք է վեր առնել թէյի ամենափոքր գդալով և կամ սովորական գործածական գդալի կիսով շափ քլորաերկաթի լուծուածք և լցնել մէկ վեդրօ ջրի մէջ, մի լաւ խառնել, ապա աւելացնել ջրին թէյի գդալով լիքը (ևղբներին հաւասար) ածխաթթուի սօդայի փոշի և նորից խառնել ջուրը։ Մի ժամից յետոյ, երբեմն նոյն իսկ աւելի վաղ, այդ կերպ մաքրած ջուրը պէտք է լցնել մի այլ ամանի մէջ՝ քամելով երեք ծալք ունեցող խիտ քաթանի միջոցով, որով մաքուր ջուրը կը հաւաքուի ամանի մէջ, իսկ ամբողջ կեղտը քաթանի վերայ։ Աւելի լաւ կը լինի լցնել ջուրը ձագարի միջոցով, նախօրօք նորա մէջ գնելով մի կտոր խոնաւունակ (гигроскопическая) բամբակ։ Այդ միևնոյն է, թէ ինչ ամանի մէջ է մաքրուում ջուրը, միայն թէ մաքրուած ջուրը պէտք և անհրաժեշտ է քամել, ինչպէս ցոյց է տուած վերևում։ Վերջին միջոցով մի վեդրօ ջրի մաքրելը մօտաւորապէս 3—4 կոպ. ծախս է պահանջում։ Կարելի է և անմաքուր ջուրը կէս ժամ շարունակ եփ տալով մաքրել, այն ժամանակ թէ միկրոբները և թէ նոցա սաղմերը կոչնչանան, բայց այս դէպքում մենք միայն մաքրած կըլինինք գործարանական մարմիններից, իսկ ցեխից, տիղմից և այլ հաղար ու մի տեսակ կեղտոտութիւններից ոչ երբեք։

*
* *

Թանաքի մէջ գոյացած բացիլներ.—Բժշկականութեան մէջ շատ անգամ փորձերը ցոյց են տուել, որ գործածուած պողպատեայ գրչի խայթածից մարդու արիւնը վտանգաւոր կերպով վարակուել է։ Մօտ ժամանակներս Լայպցիգի բակտերիալօգիայի ճեմարանում ուսուցչապետ Մարիմանին յաջողուեց գտնել թանաքի մէջ առանձին տեսակ գործարանաւոր մանրիկ կենդանիներ, որոնք յատաջ են բերում մարդու մարմնի մէջ արեան հիւանդութիւններ։ Մի քանի շարք փորձեր ցոյց տուին, որ թանաքի տեսակների մեծ մասը, մանաւանդ գպրոցներում և գիւանատներում գործածուողներից արժան տեսակները, պարունակում են իւրեանց մէջ բակտերիաներ։ Կետորից պատրաստած 67 տեսակ թանաքների մեծ մասը պարունակում է իւրեանց մէջ բորբոսի սունկեր, բակտերիաներ և կամ միկրոբներ։

Դոյնզդոյն ներկերից (анилиновая краска „нигрозина“) պատրաստած տասն և մէկ տեսակ գեղեցիկ թանաքը գարձեալ պարունակում է իւր մէջ գործարանաւոր անտեսանելի մարմիններ։ Նոցա քանակութիւնը ժամանակի ընթացքում օդի ազդեցութեան տակ աւելի և աւելի աճում է։ Մէկ սրուակ լիքը գոյնզդոյն ներկերից պատրաստած թանաքի միջից, որ ամբողջ 3 ամիս օդի ազդեցութեան տակն է մնացել, գտուս են բերել վարակիչ բացիլներ և դորանով պատուաստել մկներին, որով չորրորդ օրը բոլոր պատուաստուած մկները սատակել են վարակման ամենապարզ հիւանդութեան նշաններով։

ԱԶԳԱՅԻՆ·

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ·

Ամսոյս 6-ին առաւօտեան ժամերգութիւնից յետոյ Մայր Տաճարիս Աւագ Սեղանի վերայ դրուեցաւ ս· Մ՛իւռոնի նոր կաթսայն, որ, ինչպէս յայտնի է, նուիրել է Նոր-Նախիջևանցի բարեպաշտ գաստլար Աղայ Կարապետօղլեանը, և այդ օրուանից ամենայն օր ս· Մ՛իւռոնի օրհնութեան համար սահմանուած պաշտամունք է կատարուում:

Այս հնաւանդ մի սովորութիւն է, որից լսացուում է, որ քառասնեորդ օրը Յետոն յաջողութեամբ պէտք է կատարուի ս· Մ՛իւռոնի օրհնութեան հանդէսը, որ ըստ բարեհաճ տնօրէնութեան Աղից Սիրեցեալ Հայրիկի և Սրբազնասուրբ Հայրապետի նշանակուած է առաջիկայ սեպտեմբերի 14-ին, Յաչվերացի տօնին:

Արարատի ընթերցողները կը յիշեն անշուշտ, որ դեռ անցեալ տարի մայիսին հրատարակուեցաւ, թէ սեպտեմբերի 29-ին լինելու է այդ մեծաշուք հանդէսը· սակայն շատ յարգելի հանգամանքներ հարկադրեցին Նորին Ս· Օծութեանը յետաձգել այդ նուիրական Եկեղեցական և Ազգային մեծ հանդէսը և ինչպէս հրատարակուեցաւ Արարատի անցեալ տարուայ օգոստոսի համարում յոյս յայտնուեցաւ, թէ՝ «մօտ ապագայում աւելի յարմար ժամանակ, երբ Մայր Տաճարի ներքին նորոգութիւնը աւարտած և բազմաթիւ բարեպաշտ ուխտաւորաց ընդունելութեան համար ձեռնարկուած պատրաստութիւնները վերջացած կը լինին», աղդայինք կարժանանան այդ շնորհաբաշխութեան հանդիսին:

Թէև Նորին Սրբութեան շնորհիւ Մայր Տաճարի ներքին վերանորոգութիւնը որոշեալ չափով դէթ այնքան վերջացած է, որ արդելք չի կարող լինել հանդիսակատարութեան համար, բայց բազմաթիւ ուխտաւորներ ընդունելու համար ձեռնարկուած շինութիւնները դեռ աւարտած չեն, որ հնարաւոր լինի գոհութիւն պատճառել ամեն կողմից դէպի Մայր Աթոռս դիմող ուխտաւորաց, որոնք անշուշտ պէտք է յանկանային վերահաս Հայրիկի անդրանիկ ս· Մ՛իւռոնօրհնութեանը ներկայ լինել:

Գուցէ ասեն, թէ կարելի էր ս· Մ՛իւռոնօրհնութիւնը յետաձգել դարձեալ, բայց ծածուկ չէ ոչոքից, որ ս· Մ՛իւռոնը ահա երկու երեք տարի է, որ ամենամեծ խնայողութեամբ էր գործ դրուում· իսկ այսօր սպառուել է իսպառ: Այս պատճառով ոչ մի հնարաւորութիւն չէրկար այլ ևս յետաձգելու մասին մտածելու:

Վերջին ս· Մ՛իւռոնօրհնութիւնը կատարուել է 1890 թուի սեպտեմբերի 30-ին· սրբեցին եօթն տարի է անցել արդէն և շատ բնական է, որ ս· Մ՛իւռոնը սպառուած լինի· Ճշմարիտ է, թ հնուցն եօթն տարին մի անգամ էր օրհնուում ս· Մ՛իւռոնը, սակայն վերջին ժամանակներս դրեթէ սովորական է դարձել չորս տարին մի անգամ կատարել այդ հանդէսը· օրինակ՝ 1882-ին, 1886-ին և 1890-ին:

Ցոյս ունինք, որ 1902 թուին, Հայոց Աղգի քրիստոնէութիւն ընդունելու ընդ ձեռն ս· Գրիգոր Լուսաւորչին մերոյ և ս· Էջմիածնի հիմնարկութեան 1600 ամեակին Աստուած կը յաջողէ վերահաս Հայրապետիս երկրորդ անգամ օրհնելու ս· Մ՛իւռոնը և այն ժամանակ Մայր Աթոռս պատրաստ կը լինի ընդունելու և սիրաշահելու շատ հազարաւոր ուխտաւորներ, որոնք ըստ ամենայնի մխիթարուած կը մնան, տեսնելով ս· Էջմիածինը վերանորոգուած այնպէս, ինչպէս որ նախապէս է Հոգևոր Տէրը:

Մաղթենք երկար և քաջառողջ կեանք մեր Սիրեցեալ Հայրիկին և աղօթենք առ Աստուած, որ արժանացնէ Նորին Ս· Օծութեան

նը հասնելու այդ փափագելի օրուան և կատարելու մի արժանավայել հանդէս Հայոց ազգի հոգևոր լուսաւորութեան 1600 ամեակին։ Բոլորանուէր սրտիւ դիմենք առ Մխիթին Որդին Աստուծոյ, որ իջաւ այս սրբավայրը, հիմնարկեց Մայր Եկեղեցին և հաստատեց Հայրապետական ս. Աթոռը, և աղօթենք, որ լրումն տայ մեր ըղձին։

Ամսոյս կէսին գումարուում է Ս. Պետերբուրգում Երկրաբանների մի համաժողով, որին մասնակցելու են բոլոր գիտնական աշխարհի երկրաբանները։ Համաժողովը խումբ խումբ բաժանուելով ուսումնական ճանապարհորդութիւններ է անելու Ռուսաստանի զանազան կողմերը։ Մի խումբ, 50 հոգուց բաղկացած, պէտք է գայ դէպի Արարատ և կայցելէ ս. Էջմիածին։ Պետերբուրգի կարդադրիչ մասնաժողովը խնդրել է Ազգիս վեհափառ Հայրապետի աջակցութիւնը։ Նորին Ս. Օծութիւնը օրհնելով համաժողովի գործը, բարեհաճեցաւ իւր Դիւանի միջոցով յայտնել մասնաժողովին, որ գիտնական հիւրերը սիրով կընդունուին ս. Էջմիածնում և նոցա ցոյց կը տրուի խնդրեալ աջակցութիւնը։

Սորա համար Նորին Սրբութիւնը կարգեց մի հիւրընկալ յանձնաժողով ընդ նախագահութեամբ Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի և անդամակցութեամբ Տ. Ղևոնդ և Տ. Աշոտ վարդապետաց, որոնք կարևոր պատրաստութիւններ են տեսնում արժանավայել կերպով ընդունելու գիտնական աշխարհի ներկայացուցիչներին։

Յոր—Վիրապի վանահայր Տ. Պօղոս վարդապետը քանիցս գիմելով առ Վեհափառ Հայրապետն Ազգիս թախանձանօք խնդրել էր իւր Ծերութեան և անձնական տկարութեան պատճառով ազատել իւրեան վանահայրութեան պաշտօնից, թողնելով միայն նոյն վանքում իբրև միաբան։ Նորին Ս. Օծութիւնը գիջանելով բազմամեայ աշխատաւոր վարպապետի խնդրանաց և յանկանալով այդ նշանաւոր վանքը իւր համբաւին համաձայն բարեկարգ վիճակի հասած տեսնել, բարեհաճեցաւ կարգել Տ. Հմայեակ վարդապետ Տ. Սարգսեանին հաստատուն վանահայր Յոր—Վիրապ վանքի, որպէս զի վանահայրերի ատեպ փոփոխութեամբ վանքի շահերը չվնասուին։ Մեզ կըմնայ յուսալ, որ վանահայրը կարդալացնէ Նորին Սրբութեան ակնկալութիւնները նորանից։

Ալէքսանդրապօլի փոխանորդ Տ. Ծովհաննէս վարդապետ Շիրակունին՝ տեղի ցրտագին օդից նեղուելով, խնդրել էր Ազգիս Վեհափառ Հայրապետից փոխադրել նորան Գօրի նոյն պաշտօնով։ Նորին Ս. Օծութիւնը յարգելով նորա խնդիրը բարեհաճեցաւ Ս. Կոնդակով փոխադրել նորան Գօրի։

Արցախու թեմի կառավարիչ Տ. Գարեգին վարդապետ Սաթունեանն իւր անձնական տըկարութեան պատճառով տարուոյս ապրիլի 1-ին հրաժարական էր տուել իւր պաշտօնից, ի հետևումն որոյ Նորին Սրբութիւնը բարեհաճեցաւ ընդունել նորա հրաժարականը և յետս կոչեց նորան ս. Էջմիածին։

ՏԱՃԿԱՀԱՅՔ։

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ եւ ԱՅՐԻՆԵՐ. — Պանդխտութիւնը հին ցաւ է, մեր այն ցաւերից, որոնց վերայ որչափ և խօսենք դեռ քիչ է, դեռ էլի բան կըլինի ասելու։ Թէպէտև պանդխտութիւնն հին է, բայց սոսկալի կոտորածները ահագին զարկ տուին և տաճկահայերն սարսափահար սկսեցին հազարներով դուրս թափել, փախչել իրենց երկրից։ Պանդխտութեան պատճառով երկիրն աւելի երեսից ընկնում է և մնում է անմշակ, ուստի և արդիւնաբերութիւնն ու առևտուրն ընկնում է, բնակչութիւնը սակաւանում է, աղքատութիւնն աւելանում։ Երկրում մնում են անտէր որբեր, անտիրական այրի կանայք, իսկ պանդխտը յաճախ դրսում փչանում է, մանաւանդ վատ շրջաններ ընկնելով։ Մոռանում է տուն ու տեղ, կին ու զաւակ։ Պանդխտութեան պատճառը թէ հնում է և թէ նորում միևնոյնն է, երկրի մէջ տիրող անկարգութիւնը, սանձարձակութիւնը, աւազակութիւնը, կաշառակերութիւնը, գոյքի և կեանքի անապահովութիւնը։ Տաճկակայսրութեան այս բոլոր բարիքները լի ու լի են, ուստի և պանդխտութեան առաջն երբէք կարելի չպիտի լինի առնել, եթէ չվերանան այդ սարսուռ ազդող չարիքները, այն չարիք-

ները, որոնք լսողին անգամ ահաբեկում են։ Ի զուր տեղը «Մասիս» իւր 193 թուի առաջնորդողով պատէ պատ է ընկնում և մեղադրում հայերից նոցա, ո՛րոնք իբրև թէ Բուլղարիա կամ մանաւանդ Ռումանիա ընկնելով երկրի թեթև բարքերից բռնուած, աղաւաւած, այլևս չեն ուզում վերադառնալ հայրենիք, և երեսի վերայ են թողնում իւրեանց ընտանիքը։ Ոչ, այսպէս չէ, հայն ի բնէ ընտանեսէր է, ի ծնէ իւր հողն ու ջուրը սիրող է։ Ո՞վ կարդացել է Առաքել Դաւրիժեցու Հայոց Շահարասի ժամանակ դէպի Պարսկաստան եղած գաղթի սրտառուչ նկարագիրը, և Տարաշամբի ս. Նախավկայի Ստեփան վարդապետի «Ողբ Հայրենեացոցը» նա չէ կարող արդարացի համարել Մասիսի առաջնորդողի ասածը։ Այսօր էլ հայը նոյնն է, նոյն իսկ այս տագնապալից ժամանակ, երբ երկրում քրդի սուրն է ամեն տեղ շողշողում, երբ գեռ թաց են հայի հարազատների արեամբ ներկած դաշտերն, այսօր էլ, կրկնում ենք, նա սիրով թողնում է Կովկասը և անձկութեամբ դիմում է դէպի հայրենիք, ամենևին չմտածելով թէ այնտեղ նորան սպասում է արիւնռուշտ քիւրդը, արիւնարբու չերքեզը, մոլի, դաղանացած և արիւնածարաւ թիւրք խաւժանն ու «գեաւուր բուղան» բաշիբոզուկների վոհմակը։ Բայց ի՞նչ ենք տեսնում, ողորմած սուլթանի ներկայացուցիչ Ղարսի հիւպատոսն (ինչպէս և չենք կասկածում որ միւսներն էս) անցագիր չէ տալիս տաճկահայ մշակին հայրենիք վերադառնալու և առանց անցագրի անցնողներին բանտարկում է Հին Բայազէտի բերդում։ Արդ որի՞ն է մեղքը։ Հայ գիւղացո՞ւնը, մշակ պանդուխտի՞նը, որ նոյն արեան ծով գարձած հայրենիքն է շտապում վերադառնալ, թէ՞ բարեխնամ թուրք կառավարութեանն, որ իւր հպատակներին դուրս է փախցուցել իրենց բնիկ երկրից և այսօր էլ ամեն տեսակ արգելքներ է յարուցանում նոցա առաջը կտրում, բանտարկում և բանտերում արևից զրկում։ Պէտք է աւելի լրջութեամբ մտածել և յանցանքը իւր տեղում որոնել։ Մենք չենք կարող ասել, թէ այս դէպքում ինչ կարող է անել Կ. Պոլսի պատրիարքարանը, բայց աշխարհ գիտէ թէ ինչ կարող էր և պէտք էր ու պարտական էր անել բարեխնամ թուրք կառավարութիւնը և ողորմած սուլթանը, բայց չեն անում, չեն անում, որովհետև Աստուած խելքներն առել է. իսկ Աստուած ում որ ուզում է պատժել, նախ յիմարանում է։

ՈՐԲԵՐ ևւ ՆՈՅԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ. * —Մի քանի բարեսէր Ամերիկացիք վերջին դրամական տագնապի պատճառով որոշած էին առ ժամանակ ամսական 10 օսմանեան ոսկի նուիրել յօգուտ Ազգային հիւանդանոցի տարաբախտ որբերի, որ տևեց 9 ամիս, Սակայն բողոքականների ազգապետ Յակովբ Էֆէնդի Պօյաճեանի միջնորդութեամբ Ամերիկեան Պօռտ ընկերութեան գանձապահը յանձն է առել շարունակել այն վճարը յանուն մի քանի այլ մարդասէրների։

— Մեր ընթերցողների, մանաւանդ հարուստ հայերի, ուշադրութիւնը հրաւիրում ենք Բայբլ—Հաուզի մէջ գուժարուած միսիոնարական ժողովի որբերի կրթութեան և նոցա կրօնական պարտականութեանց կատարման մասին արած որոշման վերայ։ Այս որոշումը, որ ամբողջապէս յառաջ ենք բերում այստեղ ընդգծելով յատկապէս այն տեղերը, որոնցից պարզ երևում է թէ միսիոնարները մարդասէր Եւրոպացիներից ստացած գումարները գործ են ածում իրենց կրօնական առաքելութեան նպատակների համար, որոնք չեն ուզում ճանաչել որ հայ որբերի կրօնական դաստիարակութիւնը, հայ եկեղեցու ոգւով կրթելը հայ հոգևորականութեանն է վերաբերում, այլ օգտուելով հանգամանքից սիրտ հային հեռացնեն մայրենի եկեղեցու ծոցից և օտարացնեն։ Սորա առաջը կարելի չէ առնել, որբերին օտար դաստիարակութիւնից հեռացնելով հացից էլ զրկել, այլ միայն ազգի հաշուով որբանոցներ բանալով, որով թէ մեր ազգային արժանապատուութիւնը պահպանած կըլլինենք և թէ ամենայն իրաւամբ հային կարող ենք հայ ոգւով կրթել և Հայաստանեայց եկեղեցուն հաւատարիմ զաւակներ մեծացնել։

Ահա այն որոշումը.

«Նկատելով, որ հայ եկեղեցուն մէջ զօրեղ փափաք մը կարտայայտուի ապահովութիւն մը ձեռք բերելու թէ լուսաւորչական հայ որբերը մարդասիրաբար խնամելու քօղին տակ Ամերիկացի միսիոնարք կրօնափոխութեան ազդեցութիւններ ի գործ պիտի չդնեն անոնց վերայ. Արևմտեան Թիւրքիոյ միսիոնարութիւն այս տղոց հետ վարուելու խնդրոյն վերայ իբրև հիմնական կանոն հետևեալ սկզբունքները կը հռչակէ, անոնց ընդունակութիւնն յանձնարարելով ոչ միայն Առեւմտեան միսիոնարութիւնն զանազան կայաններուն, այլեւ Ամերիկեան Պօռտի միւս միսիոնարութիւններուն ի Թիւրքիա։

1· «Ամերիկացի միսիոնարաց ձեռքը գտնուած դրամներով պահուող որբանոցներն ի հարկէ պիտի է որ անոնց խնամքին եւ հսկողութեան ներքեւ ըլլան բոլորովին·

---

* Մուշի վիճակի վանահայր – Առաջնորդական փոխանորդ Վարդան վ. Յակոբեան ժամերս ս. Կարապետի վանքը պիտի երթայ, առ այժմ 20 որբերի համար բացուելիք որբանոցի ծրագիրն ուսումնասիրելու համար։ Հայր--սուրբը մանաւանդ պաշտօնագրով Ամեն. Ս. Պատրիարք Հօր միջնորդութեան նը խնդրած է, որպէս զի մի օրիորդական դպրոց բացէ։ Մուշի հայուհեաց վարժարանի շքեղ շէնքը աշակերտուհիները իրենց ստորագրութեամբ այդ մասին մի խնդրագիր են ուղարկել նոյն ընկերութեան տնօրէն ժողովին։

Դրամոց գործածման և դաստիարակութեան դրութեան ու մեթոտներու ընտրութեան համար անոնց լիակատար պատասխանատուութիւնն է եկած պայմանին, որով նուիրատուք այս հպատակական դրամ յանձնած են անոնց (?)։ Բայց ասոր, այս հաստատութեանց մէջ արտաքին միջամտութիւն և պատասխանատուութեան բաժանում նոյն իսկ տղոց մտքին ու բնաւորութեան վերայ վնասաբեր ազդեցութիւն յառաջ պիտի բերէր։

2. «Այս որբեր ըստ մեծին մասին կուգան մեր երկար ժամանակէ ի վեր հաստատուած դպրոցներուն շրջանակին մէջ. հետևապէս անոնք էլ պէտք է ենթակայ ըլլան նոյն սկզբունքին որով կը կատարուին այն դպրոցներ. այն սկզբունքն ըսել կուզենք որով աշակերտաց քրիստոնէական ընդարձակ զարգացումը պէտք է փնտռուի անոնց հոգւոյն և մտքին մէջ. լեզուի և գիտութեան ուսուցման հետ հետ անոնց աւանդուին առողջ բարոյական և Ցիսուս Քրիստոսի առաջնորդութեան բոլորանուէր անձնատուր ըլլալուն կարևորութիւնն, իբրև միակ հիմ ուղիղ կենցաղավարութեան և ուղիղ մտածման, այս նպատակաւ Աստուածաշունչը մեր կողմէ գործածուելով իբրև համայն քրիստոնէից հատարապէս ընդունելի հեղինակութիւն, բայց ասոնց աղանդային կամ յանուանական ուսուցման,* և խըստմով դգուշանալով քրիստոնեայ եկեղեցիները բաժանող խնդրոց վիճաբանութիւններէն։

3. «Քրիստոնէական ջերմ սէր և արտաքին համակրանք զգալով Հայ Լուսաւորչական եկեղեցւոյն** համար, և բազձալով միմիայն իր ամենաարժէք բարգաւաճման, մեր կարծիքն է որ ծայրագոյն հոգ պէտք է տարուի ապահովելու համար որ Լուսաւորչական որբերն. — իրենց բարեկամաց կողմէ բողոքական տեսչութեան ներքև գտնուող որբանոցներ դրուած ըլլալուն համար.—նուազ Հայ չըլլան, լեզուով*** իրենց ժողովուրդը սիրելով, կամ ուղղակի պատրաստուելով օգտակար անդամներ ըլլալու այն հասարակութեան որուն կը պատկանին, եւ այս որբանոցներուն անօրէնք պէտք է չատ ընդունելի՝ որ անոնք ալ նոյնպէս ընթացքով մը կրնանք ակնկալել որ ամեն արդարադատ և լրջամիտ մարդոց հաւանութեան և բարոյական աջակցութեան պիտի արժանանանք։ (?!?)

4. «Մեր հսկողութեան ներքև գտնուող որբանոցներուն մէջ Լուսաւորչական կրօնին կողմին կրօնա-

* Հայոց եկեղեցւոյն է անշուշտ ակնարկում, չէ որ դոքա Հայոց որբեր են։

* Հայոց եկեղեցին Լուսաւորչական չէն կոչում իրենք Հայերը, այլ պարզապէս Հայոց կամ Հայաստանեայց եկեղեցի։

** Իսկ հայի կրօնական, իբր եկեղեցւոյ հատուած կրթուելն ո՞ր մնաց։

յին կրթութեան աւանդումն ընդհանրապէս գործադրական չպիտի գտնուի։ Բայց տղոցմէ անոնք որոնց խնամակալները փափաքին՝ պէտք է թոյլատրուին Լուսաւորչական եկեղեցին ներկայ ըլլալու կիրակի առաւօտներ եւ շաբաթամէջ յատուկ դասուած մասնաւոր ուսիքներով։ Նախամեծար կը դատենք որ եկեղեցի տարուին և անդի բերուին որքանոցէն մէկու մը ձեռամբ։ Այն միջոցներուն տղայք ի հարկէ եկեղեցին պիտի ընդունեն կրօնական այնպիսի կրթութիւն զոր կղերը փափաքի՝ տալ, և խոստովանուելէ պիտի չարգելուին մեր կողմէ. միևնոյն ժամանակ տեղային տարբեր պայմաններուն կը պահանջեն որ շատ մը այնպիսի մանրամասնութիւնք թողուին զանազան որբանոցներու տնօրէններուն դատողութեան, որոց ընթացքին կանոնը պէտք է ըլլայ՝ չաշխատել տղայք անջատելու իրենց ծրդի եկեղեցական կապակցութիւններէն։

5. «Մեր տեսութեամբ. Լուսաւորչական վաճառու մէջ միսիոնարներու ձեռամբ որբերի խնամածութիւն, կամ միսիոնարաց եւ Լուսաւորչական կղերի ձեռամբ ընկերովի կամ հաւասական հսկողութեան ո՛ և է ձև որբանոցներուն վերայ՝ առ այժմ բաղձալի կամ գործադրելի բաներ չեն։ Հիմա մեր ձեռքին մէջ գտնուող դրամներն ալ մեր կողմէն չեն կարող գործածուել մեր հսկողութեան ներքև չը գտնուող որբանոցներու համար օգնելու, թէև կը յօժարենք Լուսաւորչական այնպիսի հաստատութիւններին փոխանցել, ո՛ և է դումարներ, զորս նուիրատուք յատկապէս այն նպատակաւ զրկեն»։

Այս խնդիրը գեռ շատ ջուր կը վերցնի, այն յայտարարութեան ամեն մի բառն անգամ արժէր ընդգծել և ուշի ուշով խորհել այդ մասին. հեղհեղից աղատուելով կրակի ենք մատնուելու, եթէ չշտապենք մերօվսանն որբերի համար խնամք տանել և նոցա հայ կրթել հայոց վանքերում, այն վանքերում որ իսկզբանէ միշտ պատսպարել են հայ ժողովուրդը, խնամել և մխիթարել։ Արչափ առաւել ևս անհրաժեշտ է այս տագնապալից օրերում, հայութեան այս ճգնաժամին աշխատել. էլ չասենք թէ հոգևորականութեան պարտքն է այս և աշխարհականներս ձեռքերս ծալած մի կողմ քաշուենք, այլ ձեռք ձեռքի տուած հարուստ և աղքատ, կին արմատ և տղամարդ հոգևորական թէ աշխարհական միասին գործելու. «Հարուստ ո՛ր օրուան ոսկիդ դիզել ես, առ ի՞նչ աղգասեր աղգդ սիրել ես»։

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԴՈՒՐՍ.—Մասիս լրագրի յունիս և յուլիս ամսուայ համարները լի են թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում տեղի ունեցած տղայոց և օրիորդաց դպրոցների հարցաքննութեանց հանդէսներով։ Այս մասին մեր Տաճկահայ եղբայրներին այս կասենք, որ պէտք է զանազանել դպրոցական հանդէսները, քննութիւնից. Դպրոցական հանդէսների առիթներ շատ կան, այսպէս ազգային տօներին, դպրոցների բացման, ուսումնական տարիների

աւարտման ժամանակ. բայց քննութիւնները չը-պէտք է հանդիսի կերպարանք ստանան. Արդէն ա-մեն տեղ աշխատում են նոյն իսկ վերջ տալ ոչ թէ հանդիսաւոր, այլ նոյն իսկ նեղ շրջաններում տեղի ունեցող դպրոցական քննութեան, այն ինչ մեր Տաճ-կահայ եղբայրները դպրոցական քննութիւնները մրցման ասպարէզ են դարձնում ու վաղուց ի վեր դպրոցներից մեծ-ուած պարգևաբաշխութիւնները դեռ տիրում են Տաճկահայոց դպրոցներում. Աշա-կերտին պէտք է սովորեցնել որ պարտաճանաչու-թիւնը, առաքինութիւնը վարձի կարօտ չէ, ուսուցչի կամ դպրոցի վարչութեան քաջալերական մի խօսքը և գովեստն արդէն աշակերտը պէտք է իսկական վարձատրութիւն համարէ, պարտաճանաչութեան և առաքինութեան առ հասարակ ոսկով կամ թէկուզ պարգևներով կշռելու միտքը բոլորովին պէտք է հեռու լինի աշակերտի մտքից:

Ձնայելով որ ուսումնական տարին վերջաց-նում է, բայց մեր Կ. Պոլսոյ Ուսումնական խոր-հուրդը անխոնջ զբաղուած է դպրոցական գործով, ամեն կերպ ջանքեր են լինում այդ կողմից, ուստի մենք ուրախութեամբ Արարատի մէջ յառաջ ենք բերում այդ մասին եղած որոշումները, քաղելով Մասիսի 172—195 համարներից.

— «Մանկապարտէզի» և «տարրական Նախա-կրթարանի» կրթական ծրագիրը, որ պատրաստած էր նախորդ Ուսումնական Խորհուրդը, ընդ առե-նապետութեամբ Պերպէրեան Ռէվէրես Էֆէնդիի և ի ձեռն իւրաքանչիւր ճիւղի յատուկ մասնագէտնե-րի, և վերջին անգամ ներկայ Ուսումնական խորհըր-դի կողմից վերաքննուելուց և ինչ-ինչ բարեփոխու-թեամբ ընդունելուց յետոյ ներկայացուած էր կետր. Վարչութեան ժողովին ի վաւերացումն. Արդ խառն ժողովն ևս այդ ծրագիրն վաւերացու-ցած և ըստ այնմ նոցա հրատարակութիւնն վերջա-ցած լինելով, Խորհուրդն որոշեց գործադրութիւն դնել Կ. Պոլսի և գաւառական տարրական նախա-կրթարանների մէջ յառաջիկայ սեպտեմբեր 15-ին.

— Դոկտոր Տաղաւարեանի առողջապահու-թեան դասագիրքն ևս որոշել է Ուս. Խորհ. ըն-դունել ազգային վարժարաններում.

— Խորհուրդն ըստ տրամադրութեան կազմու-թեան կանոնագրի զբաղեցաւ նաև շրջանաւարտների ինչպէս նաև դպրոցական դասագրքերի քննութեան համար կազմելիք մասնաժողովների խնդրով.

— Ուսումնական Խորհուրդն արդէն պաշտօ-նապէս ծանուցել է, որ դպրոցական նոր տարեշրջա-նին այն 1897-ի սեպտեմբերին ոչ ոք արտօնութիւն ունի ազգային վարժարաններում, սկսեալ մանկա-պարտէզից, ուսուցչութիւն անելու, առանց Ուս. Խորհրդի տուած պաշտօնական վկայականի.

Ուսուցչութեան իրաւունք ստանալու համար «ներկայացող ընտրելիք պարտ են «Ուսուցչութեան ընտրելեաց քննութեան հրահանգի» Բ.-րդ յօդուա-ծի տրամադրութեան համաձայն, խնդրագրով մը Ցանձնաժողովին ներկայացնել՝

1.— Իրենց մկրտութեան վկայականը.

2.— Իրենց դպրոցական վկայականը, ու իրենց բնական թաղին աւագերէցուն ու թաղական խոր-հրդոյն վկայութիւն իրենց վարուց ու բարուց մաքրութեան մասին, եթէ օգնական—ուսուցչի վը-կայական կուզեն ստանալ.

3.— Իրենց օգնական ուսուցչի վկայականը, եթէ կուզեն գլխաւոր դաստիարակ կամ մասնագէտ ուսուցչի վկայական ստանալ, ինչպէս նաև այն վար-ժարանաց, յորս պաշտօնած են, թաղ. խորհրդոյ ու Հոգաբարձութեանց վկայութիւնն, իրենց բար-ուք պաշտօնավարութեանց մասին.

4.— Համառօտ տեղեկութիւն մը իրենց ան-ցեալ ըբաղմանց ու պաշտօնավարութեանց վերայ.

5.— Եթէ ընտրելիք գաւառացի են, Աւագ երիցանց ու թաղական խորհրդոց վկայութիւնք պարտին հաստատուած ըլլալ իրենց վիճակին Ազգ. Վարչութենէն կամ ս. Առաքնորդէն.

— Ակնի, Եօզկատի և Էվերիկի ազգային աղ-քատ վարժարանների համար դասագրքեր խնդրուած լինելով՝ Ո. Խորհուրդն յետ նկատողութեան որո-շեց յղել այդ գրերը գրաքննական յանձնաժողովին ի տնօրինութիւն կարևորին.

— Ո. Խորհուրդը նոյն կարգադրութիւնն ա-րել է Պիրէճիկի և նորա շրջակայքի ազգային աղ-քատ վարժարանների նկատմամբ.

— Ուսումնական Խ. Պոլսի բոլոր ազգային վարժարանները մի քանի շրջանակների բաժանելով պիտի յանձնէ.

Ա.— *Կազմական կանոնագրի եւ կրթական ծրագրին ճշիւ գործադրութիւն ի մօտոյ հսկել յանուն Ուսում-նական Խորհրդոյ:*

Բ.— Իւրաքանչիւր կրթական Տեսչի պարտա-ւորութիւնն է իւր շրջանակին մէջ գտնուած ղեպ-րոցներն այցելել, ամեն մի դպրոց շաբաթը երկու անգամ կամ գէթ մի անգամ ըստ կարևորութեան և հարկի, * և ամեն ամիս տեղեկութիւն հաղորդել Ուսումնական Խորհրդին այս կամ այն դպրոցի մէջ կրթական ծրագրին և այլ պաշտօնական հրահանգ-ների գործադրութեան նկատմամբ.

Գ.— Մայրաքաղաքի և արուարձանների բոլոր թաղային վարժարանները բացուած են այժմ երեք մասի շրջանակից և ամեն մի շրջանակ յանձ-նուած է մէկ մէկ կրթական այցելու տեսչի հսկո-ղութեան, որոնք պատասխանատու են առ Ուսում-նական Խորհուրդը.

---

* Հեռաւոր վայրերի համար կիսամեայ այցե-լութիւն բաւական կը համարուի թէ մէկ անգամից աւելի այցելելու ստիպողական հարկ չի ծագի.

Դ. — Կրթական Տեսուչները որ այժմ երեք են թուով, ի հարկի կարող են խորհրդակցել դպրոցական ամեն կարգի խնդիրների վերայ, բայց իւրաքանչիւրն ազատ է, կազմական կանոնագրի Խ.-րդ յօդուածի որ և է դիտողութիւն անել իւր շրջանակին վկրաբերեալ դպրոցի մէջ, այն պայմանով որ անմիջական տեղեկութիւն հաղորդէ Ուսում. Խորհրդին։

Ե. — Կրթական այցելու Տեսուչ եղող անձը պարտի 1. առնուազն տասն տարի կրթական պաշտօն վարած լինիլ իբրև մանկավարժ—դաստիարակ կամ իբրև օգնական—մասնագէտ ուսուցիչ և 2. իւր ուսուցչական պաշտօնավարութեան միջոցին բարի վարքի տէր եղած լինել ըստ վկայութեան թաղական խորհրդի, կամ դպրոցական պաշտօնավարութեան։

Զ. — Իւրաքանչիւր կրթական Տեսուչ շաբաթական վեց կէս օր պարտի նուիրել իւր պաշտօնին և փոխարէն կստանայ Ուսում. Խորհրդի կողմից սահմանեալ ամսաթոշակը, տարին անընդհատ տասն երկու ամիս։

Է. — Կրթական Տեսուչներն երբ հրաւիրուին կամ իրենք հարկ տեսնեն ներկայ կը գտնուին Ուսում. Խորհրդի նիստերին, ուր թէպէտ քուէ չունին, բայց կարող են կարծիք յայտնել դպրոցական ընդհանուր կամ մասնաւոր խնդիրների վերայ առաջարկութիւն բերել և այլն։

Ը. —Կրթական Տեսուչք առ առաւելն երկու տարուան համար պայմանագրութիւն են կնքում Ուսում. Խորհրդի հետ. բայց եթէ իրենց պաշտօնավարութեանց միջոցին հաստատեալ կանոնների և պաշտօնական հրահանգների հակառակ ընթացք ցոյց տան, յետ կրկին ազդարարութեան կարձակուին իրենց պաշտօնից և չեն կարող որ և է իրաւունք պահանջել Ուսում. Խորհրդից։

Թ. — Եթէ կրթական Տեսուչներից մինն ուզի հրաժարիլ իւր պաշտօնից առանց պայմանաժամն աւարտելու, պարտի գէթ երկու ամիս առաջ զեկուցանել Ուսում. Խորհրդին, հակառակ պարագայի մէջ՝ իւր կրկին ամսականների գումարին չափով տուգանք պարտի տալ։ Այս տուգանքի վճարման համար պարտի կախաւ մի երաշխաւոր ցոյց տալ։

Ի. ՊԱՏՐԻԱՐՔ. — Ֆրանսացւոց ազգային տօնի առթիւ պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ Ծ. վ. Ճեվահիրճեան և Խորով վ. Պէհրիկեան Բերայի Ֆրանսական դեսպանատունը երթալով Ս. Պատրիարք Հօր շնորհաւորութիւնները հաղորդեցին Կամբոնին։

— Բարկէն վ. և Ներսէս Մ[illegible]հրանեան Կ. Ֆ. Ռումանական ընկերութեան Մեթէոր շոգենաւն երթալով Ս. Պատրիարք Հօր կողմից ողջ երթ մաղթեցին պապական նուիրակ Բօնէտտիի, որ Պալերմոյ կերթայ։

— Խառն ժողովի մի նստի մէջ բոլոր անդամների հաւանութեամբ որոշուեցաւ եկեղեցական մի կարևոր խնդրի նկատմամբ պատրաստուած թագրիրները Բ. դուռը յղել։

Թէ ի՞նչ է այս խնդիրը, որին բոլորը միաբան հաւանել են, մեզ անյայտ է մնում, մի բան միայն պարզ է, որ մեր ազգային վարչութիւնն ուզում է գործել և ուր որ իւր իշխանութիւնը զօրում է, այնտեղ նա չէ խնայում, ինչպէս այդ տեսնում ենք այն խելացի կարգադրութեամբ, որ արել է Կրօնական ժողովը այն բազմաթիւ քահանաներից մէկի նկատմամբ, որոնք թողնում են իւրեանց որբացեալ ժողովուրդը և աշխարհէ աշխարհ են յածուն։ Կեսարիոյ թեմերից Ագ—Սարայի եկեղեցու Սահակ քահանային վերջին անգամ ազդարարուեցաւ, որ փութայ դառնալ իւր երկիրը և հոգալ տեղի ժողովուրդը, եթէ յապաղեցնէ իւր դարձը պիտի գադարի քահանայական որևէ պաշտամունք կատարելուց։

ԳՐԱԿԱՆ.— Իզմիրեան մրցանակաբաշխութիւնը իւր սկզբնաւորութիւնից ի վեր այս 11-րորդ անգամն է որ տեղի է ունենում։ Այս անգամ ներկայացուել են Ցանձնաժողովին հետևեալ երկերը։

Ա.—Ս. Գ. Լուսաւորիչ, ուսումնասիրութիւն պատմական, մատենագրական և վարդապետական։ Գրեց Աղան վ. Համամեան, Արմաշի դպրեվանքից. ձեռագիր։

Բ.—Վարդ. Առաքելոց անվաւերսկան կանոնաց մատեանը, թուղթ Ցակովբայ առ Կոդրատոս և կանոնք Թադէի։ Գրեց Հ. Ցակոբոս վրդ. Տաշեան Վեննայի Մխիթարեան Ուխտից. տպ. 1894։

Գ. — Համեմատական ուսումնասիրութիւն հայ, պարսիկ լեզուների, աշխատասիրեց Ս. Յ. Կուրտիկեան. ձեռագիր։

Դ. — Հնութիւնք Ակնայ, Ց. Կ. Ճանիկեան. Թիֆլիս 1895։

Ե. — Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական նախահաւատ եկեղեցւոյ, Ց. Դաղբաշեան, ձեռագիր։

Զ. — Մխիթարհնէք ու նորա կիրառութիւնը, Աբրահամ Ց. Այվազեան, ձեռագիր։

Տեղեկագիրը երկու գործ մրցանակի արժան դատած է. Բ. կարգի մրցանակ, 40 ոսկի Աղան վ.-ի երկասիրութեան. Գ. կարգի մրցանակ, 20 ոսկի, Ճանիկեանի աշխատասիրութեան։ Հ. Տաշեանի աշխատասիրութեան մասին Ցանձնաժողովը յետաձգել է իւր վերջնական որոշումը։

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ.

«Մասիս»ի տարւոյս 192 եւ 195 համարներում կարդում ենք.

.... Տասանոցդի տուրքը վարձելու հա-

մար գործածուած միջոցները օրինակով մը կրաւէ ցուցնել։ Ենթադրենք Ք. ... դիւղի տասանորդը հինգ տարուան մէջ առնուազն 6000 և առաւելն 10,000 ղուրուշի վարձուած է, բերքերու նուազութեան և առատութեան համեմատ. արդ այս տարի, միլլէզիմը ածուրդը յանկարծ կը բարձրացնէ 11,000-ի։ Գիւղացին կուզէ ջանք մը ընել և ինքն ալ այդ գինը կառաջարկէ. այն ատեն միլլէզիմը 12,000-ի կը բարձրացնէ։ Արդ գիւղացին կը հաշուէ, որ այս տարուան բերքը սապոգին վրայ առաւելութիւն մը չունի։ Նախորդ տարուան տոմարները ձեռքը՝ գիւղի խնդիկյար մէճլիսը, ռէսին, միթարին քահանային հետ իւրաքանչիւր տան տասանորդին միջին հաշիւը կը գտնեն խղճմտօրէն, ու կը տեսնին որ 10,000 ղուրուշը կամ դոյուլ կամ ոչ։ Արդ 1000 ղուրուշի զոհողութիւն մը յանձն կառնեն, բայց աւելին անկարելի է։ Իսկ միլլէզիմը որ 2—3 երբեմն 4—5 հազար ղուրուշ աւելի կը բարձրացնէ ածուրդը, ինչպէս կրնայ գործին տակէն անվնաս դուրս ելնել և նոյն իսկ բան մը շահել։ Ասոնք հոս են այն ապօրէն արարքները զոր այս ազամ, կայս. կառավարութիւնը իւր շրջաբերականին մէջ շեշտած է, «...հատանական է, որ օտար վարձակալները, հակառակ օրէնքին, որոշեալ քանակութենէն աւելի տուրք գանձելու թաքուն խորհրդով, ուղեն ածուրդը աւելցնել և գիւղացիները չկրնան անոնց դէմ մրցել՝ պէտք է որ տեղական կառավարութիւնները նախ հաստատ երաշխաւորութեամբ առնեն թէ վարձակալները տասանորդի որոշեալ տուրքէն աւելի քան մը պահանջելու իրաւունք պիտի չունենան»։

Այո. եթէ այդ վարձակալները օրէնքին որոշած սահմանին մէջ գանձեն իրենց իրաւունքը, այն ատեն պիտի չհամարձակին չափազանց աւելցնել գիւղերու տասանորդը։ Անոնք այլ և այլ ձևերու և անուններու տակ շատ մը անիրաւ գանձումներ կընեն։ Օրինակ. ցորենի շեղջը չափուած ժամանակ 17 շընիկէն (մէկ շնիկը չորս Միրու կոտ կամ Պօլսոյ երկու քիլը կը նշանակէ) 2 շնիկը, միլլէզիմը մէկ կոմ կը դնէ իրեւ տասանորդ, հատ մըն ալ իրեւ կալ մաս կառնէ. տասանորդը փոխանակ նոյնութեամբ առնելու, ստակի կը վերածեն և արժէքին շատ աւելի՝ սա չափ հազար ղուրուշ կը պահանջեն գիւղացիներէն. ուրիշներ պատճառներ կըստեղծեն զանազան միջոցներով թաձած (շեղջը թաձել՝ կը նշանակէ անոր չորս կողմը նշաններ դնել, որպէսզի եթէ աւրուի՝ տպաւորուած ունենան թէ ցորենը գողցուած է) ցորենի շեղջը կաւրեն ու հետևեալ օր ըսելով թէ գիւղացին ցորեն գողցած է, սաչափ ինքնադաւ տուգանքի կենթարկեն զայն։ Աւելցուցէք այս և ատոնց նման ուրիշ շատ անկանոնութեանց վրայ սա ալ, թէ միլլէզիմները իրենց ընկերներով, ղօշխիներով, ծառաներով, ձիերով, անպահաս հիւրերով գիւղացիներու քսակէն կըկերակրուեն։ Ամեն տուն կարգով շաբթու մէջ որոշեալ օր մը պարտական է անոնց կամ առաւօտեան, կամ կէսօրուան, կամ երեկոյեան ճաշը պատրաստել։ Ուտելիքը ձրի և՛ փառաւոր ըլլալէ յետոյ՝ մարդ օրը չորս անգամ ալ կը ճաշէ .... այո՛, փառաւոր. — կարմրատակ հաւ, սագ, խորոված ուլ, գառնուկ, արդար եղով տապկուած հաւկիթ և կանաչեղէն, իւղը ջրի պէս երեսին լողացող փիլաւ, ձմերուկ, խաղող, տանձ. ամեն տեսակ մրգեղէն զոր գիւղացին դուրսէն պիտի գնէ։ Ահա ինչ որ կը կազմեն միլլէզիմներու ուտելիքը երբեմն երեք և աւելի ամիսներ։ Մնչդեռ մէկ ամիսն աւելի գործ պէտք չէր ունենայինն գիւղին մէջ»։

«Հետևաբար եթէ ջնջուի միլլէզիմութիւնը և բացարձակ կանոնով մը գիւղերու վարձակալութիւնը գիւղացիներուն մնայ, կառավարութեան գանձը ղպալի կերպով 10—20 առ % ձլաս մը կը կրէ։ Օրինակ, մեծ գիւղեր կան որոնց աշարը վերջին տասը տասնը հինգ տարիներու ընթացքին մէջ երկու երեք անգամ աւելցած է։ Այսպէս Բիթլիսի կուսակալութեան մէջ Պուլանըգի դայմագամութեան կեդրոն եղող Նոր գիւղի տասանորդը 1882—84-ին հազիւ 30—40,000 ղուրուշ կարժէ եղեր. այսօր մինչև 100,000 ղուրուշի կը հասնի անոր վարձակալութիւնը։ Եթէ գիւղացիներուն մնար, ապահովապէս ամեն տարի աւելնալով մէկտեղ 20,000-էն անդին պիտի չանցնէր այդ տասանորդը, հետևաբար ա-

մեն տարի կառավարութեան գանձը 30,000 ղուրուշի կորուստ մը պիտի կրէր։ Ու այս հաշուով ամբողջ երկրի տասանորդին կորուստը պիտի հասնէր միլիոններուն»։

«Մինդիրը այս տեսակէն քննելով, մենք բոլորովին իրաւունք պիտի տանք միւլթէզիմի դրութեան, քանի որ ելմտական գանձը զրաւի կերպով կօգտուի անկէ։ Բայց դիտելու է, թէ այդ դրութիւնը ուրիշ միջոցակար կողմեր ալ չունի՞ և անկէ առաջ եկած նիւթական միջոցները օգուտներուն հետ բաղդատելով, տէրութեան ելմտական գանձին շա՞հ թէ վնասը կաւելցնեն»։

«Նախ պէտք է գիտնալ, որ գիւղերու տասանորդը ամենամեծ ազդեցութիւն ունի մի և նոյն գիւղին կամ գիւղախմբին, կամ կուսակալութեան, հետևապէս ամբողջ երկրին վերայ, թէ գլխահարկի տուրքերու (պէտէլի ասքէրիյէ) դանձման, թէ ընդհ. վաճառականութեան, թէ յաջորդ տարուան երկրագործական արտադրութեանց և թէ ժողովրդի հարստութեան և բարօրութեան տեսակէտով առհասարակ։ Ապացուցանենք այս չորս կէտերն ալ»։

1. Երբ գիւղը իւր սոյգ տասանորդէն աւելի գնով մը ծախուած է (ինչպէս է հիմա առհասարակ) իւր կարողութենէն միջին հաշուով 100-ին 20—30 աւելի պիտի վճարէ»։

2. «Գիւղացին որովհետև այդ աւելին իւր դրամագլխէն կը վճարէ, առաջիկայ տարուան սերմացուն կը պակսի. կամ բոլորովին կըսպառի, քանի որ իւր տանը սովորական ուտելու հացէն բան մը չի կրնար մէկ կողմ դնել»։

3. «Եթէ գիւղացին յաջողի իւր տան տարեկան պաշարը և յաջորդ տարուան սերմացուն մէկ կողմ դնել, պիտի չունենայ պէտք եղած աւելորդ ցորենը ծախելու և անով իւր տան պէտք եղած հագուստը և ուրիշ պէտքերը գնելու»։

4. «Երբ գիւղացու ուտելու հացը կամ սերմացուն պակսի այս կերպով, կըստիպուի պարտք ընել»։

5. «Պարտքի տէր ընկնող գիւղացին իւր բերքը կրկիսկ պարտատէրին հետ, որովհետև դրամը նուազ ըլլալով գաւառներու մէջ, տոկոսը անհամեմատ բարձր է»։

6. «Այս վիճակին հասած գիւղացին ամեն տարի կալին վրայ, տասանորդի տուրքը և պարտատիրոջ բաժինը հանելէ յետոյ, հազիւ մէկ քանի ամսուան ուտելու հաց կուներայ, այնպէս որ յաջորդ տարուան համար նորէն պարտքեր ընելու ստիպուած է, թէ ուտելու հացի, թէ սերմի համար»։

«Այս կերպով իւր կարողութիւնները գրկուած, սպառած, պարտքի տակ ընկած գիւղացին պիտի չը կրնայ 1. կանոնաւորապէս և ամբողջովին վճարել գլխահարկը (պէտէլի ասքէրիյէ) այնպէս որ այս պահուս կայս. կառավարութիւնը ամեն գիւղի մէջ 100-ին 30—40 և աւելի առնելիք ունի և գիւղացիներու այս պարտքը միշտ աւելնալու վերայ է։ 2. պիտի չկրնայ չնորհքով առուտուր ընել, հետևաբար քաղաքներու վաճառականութիւնները և արհեստները զգալի կերպով պիտի վնասուին, ինչպէս եղած է այս վերջին տարիներու մէջ»։

«Քաղաքները կրելով այս հակազդեցութիւնը, իրենք ալ իրենց կարգին պիտի աղքատանան և կառավարութիւնը հոն ալ յետնեալ տուրքեր պիտի ունենայ։ Օրինակ այս ինչ քաղաքի այն ինչ թաղը այս պահուն 100,000 ղուրուշի մօտ տալիք մը ունի, 10—15 տարիներէ ի վեր դիզած, թաղ մը որու ապրուստը ուղղակի գիւղացիներու նիւթական վիճակէն կախում ունի և որու այս պարտքը ամեն տարի 10 առ % վերայ կը դնէ։ Կառավարութիւնը սովորաբար 15 տարին մէկ անգամ թահվիլաթով կը մաքրէ այս յետնեալ տուրքերը, որոնք 100-ին 80 կորուստ մը կը ներկայացնեն, ենթադրելով որ թահվէլաթի անուանական արժէքը լինի 20 ղուրուշ։ Այս պաշտօնական հաշուեյարդարի քանակութիւնը այնքան մեծ կը լինի, որքան մեր յիշած պայմաններուն մէջ յետնեալ տուրքերը շատ լինին, ինչպէս է ներկայ տասանորդի դրութեան մէջ։ Ոսկ երբ գիւղացիի ազգատութեան երեսէն վաճառականութիւնը կինայ՝ կը պակսի, Պօլսոյ հրապարակը զգալի վնաս մը կը կրէ, Եւրոպացին մանելիք ապրանքներու քանակութիւնը կը նուազի և մաքսային

տուրքն ալ իւր կարգին, մանաւանդ մանիֆակտուրի ճղին վերայ զգալի բաց մը պիտի ունենայ։ Գիւղացին ապրելու կամ իւր պարտքերը վճարելու համար պիտի ստիպուի ծախել իւր կենդանիները և շատ անգամ հողերը, որով յաջորդ տարի սովորականէն քիչ սերմ պիտի ցանուի և արտադրութիւնը քիչ պիտի լինի։ Այս բոլոր պայմաններուն մէջ յայտնի է որ ժողովրդի հարստութիւնը պիտի ջնջուի և երկրի նիւթական բարօրութիւնը առ հասարակ վտանգի կենթարկուի։ .... Պահ մը ենթադրենք որ Թուրքիա՝ ընդունած ըլլալով պաշտպան դրութիւնը, ընդունած ըլլար նաև քաղիթալիզմի դրութիւնը, որով երկրի մէջի դրամատէրերը շահէին և դրամագլուխները հեզհետէ բազմանային։ Պիտի տեսնենք որ վարձակալութեան այս պայմաններուն մէջ դրամատէրերու մէկ աննշան մասը կը շահի։ Միւլթէզիմներու մեծ մասը յոյսը կը դնէ ցորենի դնին բարձրացման վերայ և մինակ ամենամեծ դրամագլխի տէրերը կըրնան իրենց ցորենը քանի մը տարիներու համար պահել, առիթէն օգտուելու համար։ Այս մարդիկ իւրաքանչիւր գաւառի մէջ բնակիչներու Թուին 1000-ին 1-ը կըներկայացնեն. հետևաբար աշարի ներկայ դրութենէն՝ 1000 բնակչի վերայ մի հոգի կը շահի։ Ընդհակառակը երբ տասանորդի վարձակալութիւնը գիւղացիներուն ձեայ, ասոնք ամեն տարի 100-ին 20—30 չօշափելի նիւթական շահ մը կունենան։ Միւս կողմէն իրենց գիւղին տէրն ըլլալով կը քաջալերուին և յաջորդ տարուան ցանքը կաւելցնեն. իրենց տուրքերն ու պարտքերը կանոնաւորապէս և ստիճանաբար կը վճարեն, աւելի մեծ քանակութեամբ առուտուր կընեն, և տարիներու ընթացքի մէջ ամեն տուն պզտիկ հարստութիւն մը կը շինէ, որ առատ վարուցանքի հողերէ, բազմաթիւ աշխատող և կաթնատու կենդանիներէ և անոնց արամագրելի արդիւնքներէն պիտի բաղկանայ։ .... Հետևաբար կայս· կառավարութեան ձեռք առած այս թոյլատրող միջոցները, շատ օգտակար պիտի լինին, թէ գիւղացիներու թէ երկրին»։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ·

ՓԱՂԱՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԱՀՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Սինօդի Ս· Էջմիածնի, որով Տ· Թովմայ վարդապետան կարգի վանահայր Մովսէոյ Ս· Գէորգեայ վանուց և վիճակաւոր Աշտարակայ և Ապարանայ, ի տեղի Տ· Յովհաննէս վարդապետի Դպիր Վարդանեան։ Թ· 669·

— *Յանուն Տ· Յովհան քահանայի Մանդակունւոյ ի Սուչավա (Բուկովինայ), որով շնորհի նմա ծաղկեայ փիլոն մանիշակագոյն։ Թ· 671։*

— *Յանուն Հոգևոր Կառավարութեանն Կարուց, որով լուծեալ համարի պսակ Մ· Յովհաննիսեան ընդ Թ· Ղուկասեան ի պատճառս Թրքանալոյ առն, ըստ վկայութեան Առաջն· Տեղապահի Կարնոյ։ Թ· 677։*

— *Յանուն Սինօդի Ս· Էջմիածնի, որով Տ· Հմայեակ վարդապետան Տ· Սարգսեան կարգի ի պաշտօն հասատատուն վանահայրութեան Յոսէ—Վիրապի վանուց, իսկ Տ· Պօղոս վարդապետան Մալխասեան, ըստ խնդրանաց իւրոց, միաբան նոյն վանուց· Թ· 693։*

— *Յանուն Սիմէոնի Եպզարեան, որով նա կարգի դանձապետ դանձանակադրամոյ Ս· Էջմիածնի ի Ս· Գէորգ եկեղեցւոյ Հին Նախիջևանի· Թ· 719։*

— *Յանուն Տ· Յովհաննէս վարդապետի Շիրակունւոյ, որով նա, ըստ խնդրանաց իւրոց, փոխադրի ի պաշտօնէ փոխանորդութեան վիճակին Հայոց Ալեքսանդրապօլու նոյն պաշտօնիւ ի Թիֆլիս· Թ· 729։*

— *Օրհնութեան յանուն այրի Տ· Ալեքսանդրայ Ղալումեան ի Ս· Պետերբուրգ· Թ· 747։*

— Ցանուն Տ. Ստեփաննոս քահանայի Սամուէլեան Նորաշէն եկեղեցւոյ Ծփղեաց և Նոր—Բայազիտեան գնդին, որով շնորհի նմա պատիւ աւագ քահանայութեան. Թ. 749։

— Ցանուն Գեր. Տ. Պետրոս եպիսկոպոսի, առաջնորդին Սեբաստիոյ, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, շնորհի նմա պատիւ Արքեպիսկոպոսութեան. Թ. 751։

— Ցանուն Տ. Եղիշէ վարդապետի Դուրեան, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, շնորհի նմա խաչ լանջական ականակօւռ. Թ. 752։

— Օրհնութեան յանուն Ժողովրդոյ Ռուսչուկ քաղաքի Բոլղարիոյ. Թ. 762։

—Օրհնութեան յանուն Աւետեաց Ղուկասեան. Թ. 771։

— Ցանուն Ամեն. Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքեայ Արքեպիսկոպոսի, որով յանձն լինի նմա յանձնել Տ. Յովհաննէս աւագ քահանայի Մկրեան Կ. Պոլսոյ գլխադակ, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակօւռ. Թ. 773։

— Օրհնութեան յանուն Միրզաջանի Պատուականեան ի Շուշի. Թ. 777։

— Ցանուն Տ. Գարեգին վարդապետի Սաթունեան, որով ըստ խնդրանաց նորա ազատ կացուցանի ի պաշտամանէ կառավարչի Թեմին Հայոց Արցախու. Թ. 816։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Ոսկի շինողները, Ճշմկկէ, Թարգմ. ռուս. Յաչ. Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1897, գինն 50 կ.։

Թռչուններուն աշնանային տեղափոխութիւնը, Պրոֆ. Մ. Բոլդանով, Թիֆլիս, 1897, գինն 5 կ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ.

1. Հին ՅիշատակներՐ, . . կ. կ. 339
2 ՆՆԶՂՅՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 343

ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

3. Հայերէնի քերականութիւնը Հայնրիխ Հիւբշմանի . . . Մ. Կ. . 346
4. Հ. Գելցեր, Համառօտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան. (շարունակելի) . . . Մ. Վ. . 351

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՁԻՐԱԿԱՆ.

5. Սահմանափակ կրթութիւն. . Գ. Ղ. . 361
6. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 366

ԱԶԳԱՑԻՆ.

10. ՆՆԶՂՅՑԻ ՀԱՑԱՍՏԱՆՆԱՑ 368
ՄԱՑՐ ԱԹՈՌ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՑՔ. 369

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. 376
ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՑԱՒԵԼՈՒԱԾ. 378
ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ՕԳՈՍՏՈՍ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ,

ԱՍԱՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՅԻՈՑ.

(Շարունակութիւն) *

Զնա սիրեաց երանելին Մեսրովբ [Թղ. 11ᵇ] և ինոյն բնակեաց՝ և վան այնորիկ զանազատուրս արհամարհեաց, առնելով և ուսուցանելով՝ զի մեծ կոչեսցի ի սեփհական ժառանգութիւնն, ուր են հաւքն ա և նախնիք նորա, զի որոց զկնի հետևեաց՝ նոցա է սատուգապէս զարմ և զաւակ: Նախահարցն, նահապետացն, բ հայրապետացն, քահանայիցն, դատաւորացն, աւգուստէիցն, տեառնողացն, աւետարանչացն, առաքելոցն, հովուացն և վարդապետացն և համայն հոգևոր լրման ի միասին հաւաքելոց ընդ ամենեսեան և այժմու գովեցեալս: Ընդ ոմանս նախանձեցաւ՝ և յոմանց խուն ինչ վերջացաւ, եթէ ոչ յանդգնութիւն է ասել և դերազանցեաց ևս. ոմանց բանին, կիսոց գործոյն, այլոց հեղութեանն, ոմանց նախանձուն, յոլովից վաանգիցն, ոմանց առաւել՝ և կիսոց համայնի նմանեաց. և այլ յայլմէ զգեղեցկութիւնն ընկալաւ՝ որպէս որք զանպրիանդս գերազանցութեամբ զրեն: Մի առաքինութեան տեսակ յամենեցուն հաւասարացոյց. զբժնդիցն բանիւ՝ գերազանցեաց գործով և գործասնդիցն՝ բանիւ յաղթեաց. քան զոլս զերկոսեանն ուրնէին՝ միովն յոլովեաց, և քան զոլս ի միում ծայրագոյնք՝ բազմաւքն զանց արար: Եւ եթէ մեծութիւն է նախաժամանելոցն աւրինակ լինել առաքինութեան ապագայիցն, ոչինչ նըւաղ ի գովութեան մերում բարւոյս հետևելոցն զկնի նորա զոլ գեղագէշ գազափար: Արդ՝ զամենայն ասել զնորա և համեմատել՝ ոչ ոք ի ծայրագունիցն գերազանցէ զսա, և պատմութիւն և ոչ գովութեան ոճ. և կամ զկենցաղն յիշել թէ յորմէ արհեստից և վայրից ևկն յայս՝ որ է զարմացումն և ի վեր քան զհրաշ:

Քանզի ոչ ի տան կեցեալ և ոչ յանապատի սնեալ՝ առ միանձունս ընտակերս և չորաձաշակս, ազաւթակերս և պարկեշտախաւսս, այլ ի քաղաքս յարկս թագաւորաց և ի գըրուանս հզաւրաց,[1] անա ուր յոլով են հաղրքն և քաղցրագոյն խանձն, ակամա և դիւրաւ ըմբռնումն, և անթիւ է նիւթ հրոյս. այսինքըն՝ պատրիչ սպայութեանցն, տեսանելեացն ցանկալին, լսելեացն հեշտալին, ճաշակելեացն համադամն, ըմբնկացն հոտառումն, շաւշափելեացն կակղագոյնն. և ամենայն ինչ պատրաստ առ ի չարութիւն և մռաք ի մեղս: Ուր և ողջախոհութիւնն է եղկելի, և բղջախոհութիւնն գովելի, պարկեշտութիւնն ծիծաղելի, ըռիշտ և կարկամ կարդալի, և չըռայլութիւնն պատուելի՝ ճոխ և ազատ և առատ համբաւելի: Յայնպիսի վայրի գոլով երանելիս, և յայնմ խորագոյն տղմոյն՝ ոչ ի վայր հակէր՝ և ոչ աղտեղանայր գեղեցիկ պատմուճան ոգւոյ նորա. և ոչ պղտորէին անըմբռնելի միաք նորա: Քանզի յիշէր զնախնիսն՝ և պահէր զազատութիւնն, որպէս պատանին գեղեցիկ ի տան ներքինոյն:

Եւ զինչ գործառնութիւն նորա՝ դիւանըն ալքունի, մանաւանդ եթէ (Թղ. 12ա) դէսպատրութիւն դիւանին. զի նա միայն էր հըմուտ լատինական մատենին և արիական տառին և փիւնիկեցւոց Թըւականին,[2] Եւ որպէս առնէր. ազահէր, գողանայր, նենկէր, կաշառ ընդունէր, պատրէր ի կարմրութիւն ոսկւոյն, կամ ի պայծառութիւն արծաթւոյն, կամ ի բազմադունակ ականցն և կերպասու-

* Տես. Արարատ Թ. Ի. եր. 330:

ա. Շեռ. Հավքն:

բ. Շեռ. Նախապետաց:

1. Կոր. «Հեկեալ ի գաւառն Արշակունեաց Թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին . . . »:

2. Փիւնիկեցւոց Թւականի և լատինական մատենի մասին միայն սա է գրում:

ցըն՝ մի-լիցի։ [1] այլ կայր անարատ և անխար-
դախ, բարեխառն և աւգնական որբոց և այրեաց,
ողկոյց և զբլացելոց, յամառթ առնելով զայ-
նոսիկ որ յաղայութենէ և ի թուլութենէ
մեղկին՝ և փառաւորանեն զարհեստն և զան-
ղին։ Նա և անմթեր կալով ի մէջ ոսկեհոս
գետոյն՝ և հեշտահոս առնէրն, անխոնա-
պահելով զթմբուկ կուսութեանն։ Վասն որո
յորժամ ի բաց լինէր ի գործոյն՝ ոչ կարաւ-
ատնայր Զաքէի խոստմանն, այլ համանման
երգոյն ա կենաց՝ լքանէր զամենայնն և ընթա-
նայր զհետ կենարարին, [2] անկրկնելի կապեալ
զմածն՝ և թոյլ տալեալ պակասելոյն՝ հակա-
ռակեալ ընդ կուսակրաւնան. որք թէպէտ և
պահեցին զերկուս մարգս անապական, սակայն
յանապատն կելով՝ յայրս և ի փափարս, խո-
տաբուտ խուվայնալք և մեղրաճարակք՝ և
բացեա գոլով ի մարտէն։ Իսկ սա յաստպարի-
սի նահատակէր, և մենամարտեալ յաղթէր,
ի մէջ ախտագումար խաղին՝ ոչ նեղէր՝ և ոչ
տապանայր՝ և ոչ տաղտկէր. խաբեցեր զիս,
Տէր, և խաբեցա. այլ ծանր և գառն՝ թե-
թև և քաղցր թըւէր վասն յուսոյն և ար-
գակցութեանն Տեառն. մնայր բոլորովին անա-
բատ և անապական։

Տես և զայս՝ թէ որպէս հաւաստեցաւ,
որպէս Մատթէ՝ և իմ աւետարանիչս, նախ
մաքսաւոր՝ և ապա քարոզ կենաց։ Այլ և
յաղագս կորովութեան իւրոյ՝ կարգէր ի զի-
նուորութիւն զաւրավարին Ճունայ, և անդ
բարիոք երևէր։ Աշակերտէր Կարապետին,
ոչ զկէր՝ և ոչ խըմէր, այլ ասկեալ թոշա-
կան շատանայր, և ընդ ամենայն հասակս և
արհեստս անարատութեամբ անցանէր՝ որպէս
Տէրն իմ և Աստուածն Ցիսուս։ Նա յորժամ
պիտոյ էառ ամենայնի որ ինչ հնշատալի է կեն-
ցաղոյս և ըղձալի բաղմաց, որպէս Նկէսեաս-

ա. Լուս. «Մատթէոս»։
բ. Հայ Ն. Հ. Բ.։
1. Այս հատուածը նշանաւոր է հեղինակի ժամանակակից բարք ու վարքի նկատմամբ, որից պարզ երևում է, որ նորա օրով էլ արքունիքներում՝ ալն ծառայողները աղատ չեն եղել ներկայիս արատներից։
2. Կոր. «Նա առեալ զխաչն պարծանաց, և-
լանէր զինի ամենակեցոյց խաչելոյն»։

ակեան ի նախնումն, և ծանեաւ թէ ունայն և
անոտի է զոր ջանան մարդիկ ստանալ ի ներ-
քո արեգական, և յիշեաց զբանն Տեառն.
դժուարաւ մտանել փարթամաց ի սեփական
ժառանգութիւնն աղքատաց՝ վասն զի ոչ մեր-
կանան յընչիցն. և որ ոչ հրաժարէ յամենայն
ընչից իւրոց ոչ է պաշտաւնեա նորա։ Սա-
կըս որս լքեալ զամենայնն՝ և կըղկղանս հա-
մարեալ՝ և պատճառ զլրման և մահու,
գոսկի և զարծաթ՝ զակունս և զմարգարիտս,
զբեհեզն և զկերպասն, զերիւարս պահրա-
ցիս՝ ա և զջորիս երիկամազիս, ըզգէնան և
զկազմածան ոչք զբաւսանք են կենցաղոյս։
Նա և զփառս թագաւորաց և զպատիւս իշ-
խանաց և զգովութիւնս յըրաւիցէ, զծաղկա-
հոտ զինիսն, և զարուեստաւոր մատռուակ-
սըն, զքաղցրածայն տաւիղս՝ և զուշատես ջը-
նարս, և զդղոյրիկ կերակուրս, և որ ինչ
մատունք հեաւին սոցա. բ զոր յիմարեալքն
յատաս ըղձանան ստանալ՝ և երանի տան
ունաւղացն։ [Թղ. 12բ]

Սա՝ ի վայրկեան ժամանակի մերկանայր՝
զամենայն խոտան և զարշելի վարկանելով, և
խարազնատգետ՝ և հեռոտս փախուցեալ՝
անպարկ և անպաշար՝ իբրև գեղջերուս և
զթըռչունս դիմէր ի բարձունս, և խոտաճա-
րակ եղեալ՝ ոչ ցաւէր զվարիւն, լսելով ընտիր
անաւետն՝ թէ սիրոյն աշխարհի թշնամի է
Աստուծոյ։ Նա ի լքանելն՝ ոլորպես առնէր. ոչ
պաճարատաւ թողոյր զանդաստանն, և ոչ
սոկրատասիրն ցրուէր զատացուածն, այլ ըստ
գերագունին հրամանի՝ թէպէտ և ի մանկու-
թենէ պահող էր աւրինացն երկուց՝ սակայն
զկատարումն հայցէր։ Ուսանէր և զպատճա-
ռըս կենացն վասն որս վաճառէր և տայր. առ-
նոյր և հեաւէր աներկբա և անդառնալի։

Նա արդ՝ զինչ հատուցումն այսմ. զի
եթէ կենսայանքն ընդ պատասատուն վարձին
ընկալան արքայական աթոռս, քննել զորդիսն
Իսրայէլի, իսկ որ զայս ամենայն ելիք ի միում
վայրկենի՝ որչափ առնուցու։ Եթէ անա՝ ոչ
է ակնառութիւն, և ըստ չափոյն է չափին, և
այգեգործացն հատասար է ակն՝ գ նախաժամուն

ա. Հայ Ն. Հ. Բ.։
բ. Հեռ. սոցայ։
գ. Լուս. «չափին»։

և մեռասանին, ապա ա ի բազմել բանին մարդացելոյ ի բարձն փառաց՝ և սրբազան ծառնաւթքն ընդ նմա՝ բ նստուցանէ և զսիրելիս իւր յաթոռ փառաց ընդ աջմէ նորա ընդ պաւղոսի աշխարհալոյս վարդապետին զանըւանակիւրն իւր՝ քննել զնորս Հոգւոյն և տրոհել զայծիան և արտաքս հանել՝ և առնուլ զպարգև և զպսակս ի ձեռանէ Տեառն և բաշխել բեղնաւորացն և մուծանել յառաջատան։

Զի թէ դշխոյն և Տիւնըւէացիքն գատանն՝ ոչ՝ ասէ սա. և զի ոչ երկոտասան միայն աթոռ, քանզի և ոչ բաղ՝ ուստերք Յակոբայ յերկրէ, այլ յոլով աղուք ըստ լեզուացն և ըստ թըւոյ հրեշտակացն. այսպէս յոլով աթոռք ըստ համարուոյ համաւրէն սեռից ազանց։ Եւ յորժամ ժամանէր յանապատան, ոչ զղջանայր և ոչ թախծէր, կամ կեղծաւորեալ խանկարէր զդէմս, այլ լըւանայր զերեսս սրտին և խըղճէ կարծեաց մշտատեսակ գ աշխարհական հոգոյ՝ հանել զբարեղէնն և դնել զմեղէնն։ Ոնոյր զաղբիւրն, որո հոսումն ադաղադացուցանէ զմարդն, և բանայր . զներհակս նորա։ Այլ և զսփոր յուսոյն զվերսանին աւազանն՝ ջերմեռանդ բներ. աւծանէր զգլուխն նեղքին մարդոյն թափեցելոյն իւղով և աստծով գ արնանակաց. և սկիզբն առնէր պահոց ամենայն զգայարանացն, փակելով զպատուհանսն՝ զմուտս մահուն, և զմիտսն պահել ի վեր յեռեալ յարփին՝ և ոչ իջանել ի նիւթականս։ Սանձէր զլեզուն և աղեր զշրթունսն, ոչ շարժիլ և ոչ բանիլ ե ի բանս ունայնս, այլ պարապել միշտ աստուածաշունչ մատենից. յարմարեր զբերանն քնար՝ և զատամունսն լար, զշրթունսն մատուռք, և զլեզուն կնտընդոց. և զհոգին խառնեալ ընդ Աստուծոյ հոգւոյն, և լեալ երաժիշտ՝ երգել քաղցրաձայն զերգս հոգևորս ի փառս սուրբ երրորդութեանն։

Նրթեր անսըւաղութեամբ զանձն իւր՝ յոտնաւորութեամբ զցայգ և զցերեկ. ոչ նիրհէր՝ և ոչ ննջէր և ոչ ընկողմանէր ի մահիճս, [թղ. 13 ա] այլ յաւրինս Տեառն խորհէր։ Ծառ բուսեալ Աստուծոյ ի գնացս ջրոց գ յաւերժաւորև և պըտղատու, յորդորէր զանապատաւորսն ի նոյն վաստակ և ի ջանս՝ բանիւ և գործով։

Ո՞վ հոգևոր ճրպռանն. անխափան երգողին զյաւդաւորն և զոլորակն, ա որ զարդարէր զանապատան ամն յոլովս, և ինքն յինքեան ուրախ լինէր երանելին, դովէր զԱստուն՝ և զըղծուէր զամայութիւնն ասելով։ Ո՛վ թաքուն զանձ՝ և անպարապ պարգև, խաղաղութեան մայր՝ և ողջախոհութեան առիթ, երկնային քաղաք՝ և անմատչելի դղեակ, անխըռով վայր՝ և անքոյթ նաւահանգիստ, զըբնութք պատուհանից՝ և արմատահատ ախտից, բարձրադոյն տեղի՝ աստուածոյ բնակութիւն՝ և հրեշտակաց մերձաւորութիւն։ Ոչ զոյ ի քեզ աներկիւղ երկիւղ՝ և ոչ ծառայութիւն. կարծեմ թէ դու ես արքայութիւնն, վասզի ի քեզ տեսաւ անտեսանելին և երևեցաւ աներևելին, բ ծնաւ անշունչն պշնչաւորն՝ և անարիւնն զարիւնաւորսն, անըզգայն զգայուսն՝ և անշարժն զշարժուսն։ Ի քեզ վառեալ չընչին գ բանական բոցոյիւ, կոչէր զհալածեալն՝ և հալածողին գ առաքէր Աստուած, ի քեզ բարձունքն խոնարհեալ ջամբեցուցանէր զծովածին ծնունդսն, և զառինքն քաղցրացեալ՝ զիացուցանէր զգեհաբոյս մանկունսն, ի քեզ կրկին քառասուն չրածինն և աստուածաբանակ լինէր և ուսեալ բերէր աստուածապիծ մատեան՝ տառնբանեան կանոն։ Ուր և հայց անձրևանայր, վեմ աղբիւրանայր, լորամարգ խորոված թըռուցեալ ի վրանսն մըտանէր. ի քեզ մենացեալ թեղբացին գ քաղցր սքով տեսանէր զանորակն, և զծանուաթ նոյին՝ առաքէր բանիւ զԱսորին՝ նախաքարող աւազանին, և ալերր հալածէր զմահացուն՝ յաւրինակ հացին կենաց. և սգալի աչաւք տեսանէր զանմարմինն կառուաք և երիւարաւք բանակեալ։ Ի քեզ մարգարէութիւն ծայել զՍիսարա պիսխուցեալ հսկայն զգեանեալ՝ ցից ընդ ծամելիս վարէր՝ համաքատակ րդ

ա. Ձեռ. «ապա»։
բ. Ձեռ. «նմայ»։
գ. Ձեռ. «մշտատեսակ»։
դ. Ձկայ Ն. Հ. Բ.։
ե. Փոխ. «բանալ»։
զ. «գըրոց» ձեռագրինն է։

ա. Լուս. «ձայնն»։
բ. Լուս. «Լեառն Սինայ և Մովսէս»։
գ. Լուս. «մորենին»։
դ. Լուս. «Փարաւոն»։
ե. Լուս. «Մովսէս»։
զ. Լուս. «նղիա»։

ւոյ կուսին։ Եւ ամէնքին երեսնամեայ մեղրաձաշակ լինէր։ Եւ աստուածպետականն Յիսուս՝ յետ վկայութեանն հաւր և առնելոյ Հոգւոյն՝ ի քեզ դիմէր՝ և մենակուսակ՝ ընկճէր զահագին վիշապն։ Այլ և անթիւ հոյլք քաջապատեռացն քո փայլէին յՆգիպտոս. քո Հոխիսիմեանքն հոգիացան՝ և Քոհսեանք ոսկիացան, Քաշեանք և Անդոնեանք պայծառացան, և Տրդատայ արքայն գերս ճանապարհին ի քեզ առնէր։ Եւ մերն Լուսաւորիչ՝ յետ զահագան քրտանցն և նահատակութեանցն, առաքինութեանցն և ճգնութեանցն, ծածկաբար խոյս տըւեալ թաքչէր ի քեզ. պարապեալ, և ճանաչէր պՏէր, և վախճանէր ի Սեպուհ լերինն՝ և Արտսեակին ընդ քարիւ ծածկէր, վկայով առանցքոյա անկատար զամենայն առաքինութիւնն, վասն որոյ զայլ բարիսն քո պակէր։

Եւ զո՞ր ասեմ. քանզի անհամար են հըրաշակերտեալքն քո։ Վասն որոյ տափարի զտափարի և առ քեզ գիմեցի, և սիրեմ զքեզ որպէս զվերինն Երուսաղէմ։ Եւ մինչդեռ այսպէս [Թղ. 13բ] ջերմէր ի սէր անապատին, և ուրախասեալ ցընծայր զաներկեան ցընծութիւնն, ազդումն աստուածային ապրէր ի նմա, և բանն նորա գայր ի վերա նորա որպէս յորդւոյն Զաքարիայ, և մովսիսական խորհէր ըմբիռ գեղբարբք իւրովք. գի տեսանէր զնոսա յետ լուսոյն ի խաւար, և յետ բանին յանբանութիւն. հակիրճ և նախասինս ազգայ բազմաց, և գայրանալ հոգին որ ի նմա՝ և նախանձէր զբարիսք նախանձն։ Եւ թէպէտ հարեալ էր ի սէր անապատին՝ սակայն իբրև զՏարսոնացին որ ըղձայր նըշդովիլ ի Տեառնէ վասն երջանից իւրոց, և վտանգէր ի ձգմանէ երկոցունցն ի փափաքանաց և ի հոգւոյն։ Մինն պատուէր զերկինս և զամայութիւնս և զհանդարտութիւնս, ներքին և արտաքին մարդոյն, և զմտացն յինքեան երթալ գնալ, և անքնաս անդրկն դառնալ առանց ապտոյ խաւսել ընդ Աստուծոյ, և ճառագայթ հոգւոյն մաքրապէս փայլել, ոչ խառնել ընդ սաղրինս և ընդ պըղտութս. և ոչ յաստուածային լուսոյն ի բաց անգեալք՝ մինչև հասցուք զաղբիւրն և կատարեսցուք ի տենչանացն՝ լուծեալք ի հայելութս ձշմարտութեամբն։ Եւ միւսն՝ ի մէջ գալ՝ և առքառել զայլս, և ընծայել Աստուծոյ ժողովուրդ սեփհական՝ և յոլով զպատկերն մաքրել։ Վասն զի լաւագոյն է առաւելն, որպէս քան զառնել՝ դրախտ, և քան զմի ասաղ՝ երկին բովանդակ, նոյնպէս քան զմի ոք ուղղել՝ զրոլոր եկեղեցին։ Վասն զի և Աստուած ոըսւմ՝ կալ մնալն էր իշխանութիւն յիւրում փառսն, բայց Թափեաց զինքն մինչև ի ծառսի կերպ և ամենայն նախատանաց համբեր վասն բազմաց։

Այս հոգւոյն առթուճն, յորմէ յաղթեալ և ահաւոր ձգեալ, ելանէր յայրէն և վարէր յեկեղեցի, ոչ ապարասանեալ ընդվզեր և ոչ ամբարհաւաճեալ յուսայր յանձին զաւրութիւն։ Այլ հեզաբար և գիւրապէս գիմէր առ հովիւն քաջ քաջառած՝ առ հայրապետն Հայոց ասառանեայց, և հանդիպէր նմա ի գաշան Ցարաւնոյ, ի քաղաքագեղն Աշտիշատ,[1] և ողջունեալ՝ առնոյր զաջն և զողջոյնն։ Եւ տեսեալ ծաղուն՝ա ծիծաղէր, և բերկրեալ ցընծայր սուրբն ի սէր սրբոյն և ծանէր հոգւոյնն ի հոգւոյն գոլ զգալուստս նորա։ Եւ զբաւարձացեալ ի տես միմեանց՝ հոգւոյին գհոգս եկեղեցւոյ՝ որ էր հանապազ գործ նոցա։ Եւ ապա յիշեցուցանէր վեհն վեհապետին զպատասուխանիսն եկեղեցւոյ իւր։ Զոր լըսեալ և յոգւոյ հանեալ՝ թէ ով տայր ինձ տեսանել զրոշմ տառի ըստ մերում բառիս, գի հաւատալ վայելէին ի սեղանս աստուածախաւս մատանեից դնեալքս արեամբ Տեառն, և մանաւանդ ի մերում հիպատիս։

Արժան է և ոչ զանց առնել գիրագործութեանէ հրաժարման անապատին՝ թէ որքան արտաքին տարատարհեալ միանձունքն՝

ա. Լուս. «Սահակայ»։

1. Կոր. «Ցարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ . . .» բայց և ոչ մի ակնարկ չկայ կաթուղիկոսի գտնուած տեղի մասին, ներբողողը կամ Տարոնը ամէնի բարձրացնելու համար է յիշել այդ մանրամասնութիւնը, կամ հաւանականօրէն ուրիշ աղբիւր է ունեցել։

ա. Ձեռ. անհասկանալի է, գուցէ անչատ պիտի գրուին։

զի զրկեցան ի խրատէ և ի տեսո նորա. ոչ միայն ասուն[ք]՝ այլ և անասունքն, պաճարեղէնքն և շաղղակերքն, աւդանքն և ջրայինքն, բոյսքն և անբոյսքն: Քանզի երկներ երկիրն՝ և հեծեր ամային, քրքէին քարինքն՝ և լային լերինքն, սրըմրմէին առունկքն՝ և բեհէին բոյսքն, հառաչէին հաւքն՝ա և թախծէին թըռչունքն, դոռային դազանքն՝ և դորովէին գիշախանձքն, պապաչէին պոռոչէին պաճարքն՝ և արտասուէին [թղ. 14ա] անասունքն, ըչէին բըրչէին, մընչէին, մրռնչէին, և յոգւոց հանէին ի բաժանման սրբոյն. քանզի գարմանող էր նոցա և նոքա հնազանդ և ձեռասուն նմա, որպէս նախաստեղծին նախ քան զյանցանն մինչդեռ անսխալ և անշարժ էր պատկերն, և ամենայն ինչ հնազանդ ի ներքոյ ոտից նորա:

Ջինչ և զինաւորացն զատիլ ի նմանէ, և զաւրավարին պահասումն ի զաւրաց նորա. և զչաւորացն դերիլ ի նմանէ, և որքան տըխրութիւն լինէր Թագաւորին ի զընալն նորա. քանզի բազում պահասութիւն լինէր և կոտուսա արքայական հարկին՝ յաղագս ոչ գիտելո զգիրս և զհամարս նոցա:

Եւ արդ՝ եթէ մեկնիչն ի նմանէ այնքան արամութիւն էր անշնոց և շնչաւորաց՝ Թագաւորաց և զաւրավարաց՝ ո՞րչափ ևս առաւել ուրախութիւն գիւտ նորա, որպէս մեռելոց ի կենդանիս: Սակս որո զըւարճացեալ հաւատացեալին ի յայտնութիւն նորա, և փութանակի ազդ առնէ արքային զերևումն և զխորհուրդ սրբոյն: Զոր լըւեալ և լցեալ խընաւթեամբ՝ առաքէ յԱսորիս՝ կոչել զայն որ ուխտեալ էր նմա: Որոյ անյապաղ առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ՝ և ժամանեալ առ կոջողն իւր՝ Թարգմանելով զվաղուց արարեալ նշանն զկրկին տան և զերկու տանն,[1] որք ոչ բաւական[ան]այն բայից մերոց, որ ընդ խնդութիւնք՝ ժամաներ և արամութիւն:

Եւ ապա հրամանաւ Հայրապետին առնոյր երանելին Մեսրոբ զինչանագիրսն և իջաներ Ցամիթ, և տայր ի թարգմանողսն զի յարմարեսցին ըստ վանկին. զորս առեալ և ոչ կարացեալ յաւդաւորել, ամաթալից մնային: Ոմք նորա ընկալեալ՝ իջաներ յՇղեսնայ առ Պզատն Ճարտարասան և զիւանաղլուխ, որո տեսեալ՝ ուրախանայր և խոստանայր ընծայ զիղձն՝ փառս վարկանելով անձին. զի յայժ հմուտ էր հելենական մատենին. և բազում աւուրս աշխատեալ՝ դերև ելաներ յապշութիւն պարտեալ: Եւ սրբոյն յուսահատ եղեալ՝ դիմէ ի Սամոսա առ Հռոփանոս իմաստասէր և կրաւնաւոր, զոր ընկալեալ՝ դիւրաւ ասէր պատշաճել զդիրն ընդ վանկին: Եւ չան եդեալ յոլով աւուրս անվարձ ելանելով զպարտութիւն խոստովանէր:[1] Եւ այս ի խնամոյն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնիւ առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց զբովանդակ պարգևան ի ձեռն այլազանից շնորհել մեզ՝ որպէս զառաքելութիւնն, զքահանայութիւնն, և զարքայութիւնն. այլ պահէր զայսպիսի բարիս և մերով արեան զանկ[ած]ս ձիւրէր մեզ, յիմար ցուցանելով զիմաստութիւն յաւիտենից:

Ցայտ առնելով՝ թէ ոչ ըստ ազգաց է մակացութիւնն և իմաստն, այլ ի վերուստ իջեալ ի հաւրէն լուսոյ: Եւ թէպէտև ըստ տեսութեանն Աստուծոյ այսպէս անաւրինէր, սակայն նա ի սխրութիւն և ի տարակուսանս անգանէր, որպէս Մովսէս ի խորտակումն տախտակին, և զարձ առնէր առ Աստուած ի նա ընկենով զերս իրին՝ որոյ հընարաւոր էր անհնարն: Կրկին նորոգէր զպահսն և զաղաւթսն, ընթանալով զառ ի վեր ընդ ափունս Ներսատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի գըղեահն [թղ. 14բ] Պալուներաց՝[2] և անդ զկա առնոյր ի փոքրատոյն այրի յաւուրս քառասնորդացն, և զևթն եւթնեակն անսըւաղ անցուցանէր զամս և զգիշեր, երգելով զերգս երից մանկանցն, և շա-

ա. Ձեռ. հավքն:

1. Վարդ. Պատմ. «Մեսրոպ յորինէ գպրութիւն հայերէն բառն եւ եղիս առ Դանիէլի Ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց»:

Խոր. Գր. Գ. գլ. ԾԲ. Դանիէլեան գրերի մասին այս է ասում. «կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից»:

1. Ամբողջ պատմութիւնը առած է Խորենացուց Գր. Գ. գլ. ԶԳ.:

2. Վարդ. Պատմ. «Աջով իւրով գրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսէսի ի լեռնն Սինայ, ի գետն Բարուայ որպէս տակաւին ցուցանի գրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն»:

բաբան եղանակ ապաշխարութեան՝ ըստ թըւոյ աւուրց պահոցն, զոր ընկալեալ երդէ և կեղեցի սուրբ։

Եւ ի կատարման եւթն երեկոյն ի պահու կալով, այրաձև տեսանէր զհրեշտակն որպէս Ամբակումն և Հսկողն. մանաւանդ թէ գերագոյն էս՝ դանիլապէս և մովսիսաբար, զՏէրըն հրեշտակաց՝ մարգարէական աչաւք՝ որ զբեր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ [1] չորեքտասան տառ։ [2] Եւ այնքան յամեալ առ նմա Տէր, որպէս առ Սողոմոն ի քուն պիշերուոյն տալով և սմա ընդարձակութիւն սրտի և իմաստութիւն անչափ։ Եւ ուսուցեալ զգաղտիսար գրոյն որպէս և զայլ տառս որ և զաւրինակն նշաներ ի վերա քարի որ կա մինչև ցայսաւր։ [3] Ոչ միայն նմա բարգաւաճանք՝ այլ և համաւրէն սեռիս՝ գերագոյն քան զՊոլիսիկին. քանզի ի նոցա առաջին սայն խորտակեցաւ, և երկրորդն վիմաւ ծածկեցաւ՝ իսկ մերս երկոքեանս պահեցան յաւէտ։ Վասն որո պարծիմք սովաւ՝ գերագոյն զոլ ազգայ. քանզի ոչ այսպէս արար համայն ցեղից, որպէս հրաշագործեաց առ հայրապետն և առ թագաւորն մեր, երևելի առնել զգործն և զկոչումն մեր։

Եւ արդ՝ առաւել փառաւորեաց, ինքն լինել ուսուցանէր զնշանախեսոն, զի լիցուք ուսեալք յԱստուծոյ, և նորա կոչեսցուք աշակերտք և ոչ մարդոյ։ Այլև յայտնելով զսէրն իւր առ մեզ, և թէ սիրայ և պատուական եմք ն[ը]մա, վասն այնր յանձանձէ զմեզ, որպէս արար և առնէ։ Որպէս հրամայեր Մովսէսի լինել ի լեռնէն, իբրև ի վարդապետէ և ի թագաւորէ լուսաւորեալ ոգւով. և լինի մատանագիրն տառիւ, երթալ առ Ահարոն սուրբ քահանայապետն ուրախութեամբ և ցնծութեամբ։

Վասն որո յերթալն նորա լերինքն ցընծային, այսինքն արքայն և ևկեղեցին, և բըլուրքն խաչատին, ազատքն և իշխանքն, և գետքն ծափս հարկանէին՝ հաւատացեալքն և հովիւքն։ Եւ ի հասանելն նորա ի գաւառս իւր, ելանէր Ահարոն [1] ընդ առաջ նորա հանդերձ բազում կրաւնաւորաւք՝ եպիսկոպոսիւք և քահանայիւք, և համբուրէին զնա իբրև զնոյն ինքն զՔրիստոս, և կամ զաշակերտս նորա։ Եւ տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի, և հաւատային տեսլեան նորա, և ընտուննէին զմահաւանն Սողոմոնի զոր էր փոխեալ բանիւ և գրով։ Եւ ընթերցեալ՝ բերկրէին, խաղային, խայտային, խնդային և ի ձայն մեծ գոհութիւն ի բարձունս վեր առաքէին սըւրոդին վանեղրական պարգեւան, և պար առեալ՝ պատուէին զառաքեալն և զվարդապետն և զերկրորդ լուսաւորիչն։

Եւ Ահարոն տարածեալ զձեռս և հայեցեալ յերկինս, աւրհներ զառաքեցն և զառաքեալն՝ զաղբիւրն և զընդունողն, և ընդ նմա համաձայնեալ հաւաք և հովիւք՝ ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք՝ տային աւրհնութիւն լուսոյն աշխարհի որ լուսաւորեաց զմեզ ի ձեռն մեծին Մեսրովբայ [թղ. 15 ա]։ Եւ ինքն Ահարոն բարձր ձայնիւ՝ շնորհակալութիւն վերատաքեր ասելով։

Աւրհնեալ ես Հայրա բնութեամբ և շընորհաւք զովեալ Որդիդ բնութեամբ, և պարգեւաւք բաշխեալ ես Հոգիդ Սուրբ էութեամբ և ողորմութեամբ. եռակի գոյութիւն և եռակի բնութիւն. ինքնավառ ճառագայթ. եռ և մեռ, և մեռ և եռ, երեք սուրբ և մի Տէր, երեք լոյս և մի լոյս, երեք Աստուած և մի Աստուած, ոչ ներհակք և ոչ նախ և վկին. և ոչ առաւել և նըւազ, և ոչ իշխան և իշխեցեալ, այլ հաւասար ամենայնիւ, բարի և բարերար, մեծ և հզաւր, իշխան և թագաւոր, Տէր, և Արարիչ Աստուած ամենայն յամենայնի. ծանաւղ և անծին, ծնեալ [և ծնեալ] և ծնող, բնեալ և բղխումն և բղխող։ Գոհանամք զքէն, որ էնդ և եսդ և էդ, որ ոչ

1. Խոր. Գր. Գ. գլ. ԾԳ. «ի սրտի գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով՝ ի վերայ վիմի»։

2. Այս յիշատակութիւնը առանձին ուշադրութեան արժանի է, որովհետև պարզ նկատում է, որ հնդկական հետևելով Խորենացուն, ուրիշ աղբիւր էլ է աչքի առաջ ունեցել, որից օգտուում է նաև Վարդան պատմագիրը։

3. Տես Վարդ. Պատմ. վկայութիւնը։

1. Նոր. «Ընդ լիներ թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին, որոց առեալ զամենայն նախարարունդ աւագանոյն ամրոխ, ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն զափամբ ՈՒահ գետոյն»։

միայն կառուցեր զմեզ՝ այլ և կառավարեաւ կենդանացուցեր՝ և կերակրեաւ սպասեաւ և իմանալեաւ, գոյացուցեր և ճոխացուցեր՝ և սատմբակելոյն ա և բռնաւորին՝ քաղցրութեամբ սաստեցեր՝ արձակելով ի կապոյն, և սառատեղեալ ի բանդի, և ընդվզեալ սարկացըն վրիժականդիր լինելին. սակայն ոչ սպառեալ սիրոյն առլով տալ և խոնաւ և արդիւն, զի բաւականացի պիտոյիւքն՝ որոց հաւասարեաց զանգիտեալ պատրոյն. և ոչ մոռացար զցաւ ծնաւղին, վասն որո յանձանձելիր երևեալ և խաւսեալ, տալ և առնուլ, պատրուել և պատժել, ընտրել և խոտել, մինչև ի լրումն ամանակին որ եկեր զհետ փախուցելոյն մոլորելոյն և կորուսելոյն: Ու բոլոն հարեր ըզզարմ նախնոյն իմոյ, զղամբաղ լուցեր՝ և աւել ածեր և դաեր ըզքոյ նկատեալ պատկերն, և զմոլորեալ զբաւարն, եդեալ ի վերա կենսաբեր ուսոյտ՝ ածելով ի փարախն և ի շահմարանն: Հետևեցար ընդ շաւեղս մեր և կրնցեր զմեզն՝ բայց յաղաղից և ի մեղաց: Կրեցար յարդանդի՝ որ կրես զարարածս, յղացար ի հոգւոյն՝ սահեցիչդ ամենայնի, ծնար ի կնոջէ՝ կազմողդ զկինն ի կողէ, և ի կուսէ՝ ի վեր քան զբան: Կերակրեցար կաթնասուն՝ կերակրիչդ կերոցդ, հրոյ պարանաւ ձգեցեր զարքայն յերկրպադութիւն, ընծաեցար և ընծաեցեր, փախար և փախուցեր: Ամենցար անամդ, զաւրացար զաւրութիւնդ, շնորհ ընկալար շնորհգքդ, վարդապետեցար վարդապետդ, հնազանդեցար անհընազանդդ, լըեցար սուրբդ, վկաեցար ճըշմարիտդ, լըցար լիդ՝ և ընկալար անկարաւտդ, պահեցեր պաքդ, փոխձեցար անփորձդ, մաեր ի հարսանիսն անհարսնացելոյն ծընունդդ, բաժակացուցեր զինքնաբուխն, տըվիչդ սրթոյ և որթդ ճշմարիտ: Դարձար՝ մաեր՝ ընթերցեր՝ մեկնեցեր՝ ելար՝ երանեցեր, իջեր, սրբեցեր, հաներ, բացեր, յարուցեր, ընթերցար, վաստակեցար, ի վերա աւդո և ջրոյ գնացեր, ննջեցեր ննջեցուցեր, կերակրեցեր՝ արբուցեր՝ զամենայն ինչ արարեր զքոյդ և զմերս, ցուցանելով յերկուց մի զոլ բնութիւն: Աճար ի զննուին, արձակեցար ըստ մեզ՝ կապեալդ անլոյծ և կապեցար մշտական, մանաւանդ ևթէ զմեզ կապեցեր պղծեալքս ի մեղաց: Կոչեցար հարսանիս, առաքեցեր զծառայն քո կոչել զհրաւիրեալսն, որք յետս կացեալք՝ ժողովելով ի ցանկէ և յանցէ, և լցաւ առաջաստդ կաթուղիկէ հաւաքեալք ի [Թղ.15ր] բոլոր ազանց: Ոսկ այս ազդ կոչեալ երիցս և ոչ եկեալ, այլ դանալից արարեալ և սպանեալ զկոչողսն՝ հրաժարելով յանդս և ի հարկս և ի հարսանիսս՝ մընալով ի խաւարի յետ լուսոյն. քաղց և ծարաւ՝ յետ կենաց հացին և ջրոյն՝ ամն երեքհարիւր և երեք[1] դարձեալ ոչ արարեր անտես և ոչ պահեցեր ոխս, այլ առաքեր նոր առաքեալ, ի նոյն տոհմէ զհատն իմ և զհամայնից. և նոտւր զնշանս քո ի ձեռս նորա, և առաքեցեր Ասուածփարաւոնի: Որ եկն նշանաւք և արուեստիւք և հան յերկաթի հալոցէն, ի պիւսպաշտութենէն և ի մեղաց, և անցոյց յանապատն Սինոյ և մկրտեաց յամնն և ի ծովն, ի ջուրն և ի հոգին, և սուզեաց զանմարմին փարաւոնն, և եկեղեցացուցեալ հաւաքելով ի մի, և կերակրեր երկնիքակ հացիւն և արբուցանէր վիմահոս ջրովն որ բխէ յորովայնէ՝ և խաղա ի կեանսն յաւիտենից: Ցարուցեր հովիւս վեց ի ծննդոց նորա, և առ իս գնտարեցուցեր զակր զարմի իմոյ. զորս զպատճառն քեզ միայն է պիտելի:

Դարձեալ գոհանամ բարեբանեմ զքեզ՝ որ յիմոմ ժամանակի առաքեցեր նոր աւետաբեր և վարդապետ, որ զքո բանդ անխաթդաղս սերմանէ յերկիր կենդանի, և ոռոգէ զանկեալս ի տան Ցեսուն և ի գաւխթս քո. զի քեզ աճեսցին և ծաղկեսցին որպէս զարմանենի և բազմասցին քան զմասն մնուցին Սկզովմա՝ և զըւարճասցին իբրև զխոտ ջրաբիւ. և զուռ անկեալ ի գնացըս ջուրց՝ ասելով թէ Աստուծոյ եմ ես զիր հանելով և խրատ ետուսելով: Քանզի սովաւ վերսին լուսաւորեցեր զլուսաւորչին լուսաւորեալքս, պայծառացուցեր և բարձրացուցեր զրաւորական տառիւս որ ձեռամբ սորա ետուր մեզ, սակս որո պարգևողիդ փառս վերատաքեսցուք այժմ և յաւիտեան:

(Շարունակելի).

Մեսրոպ Վրդ. Ասլանեան.

ա. Լուս. «պաստամբէ»:

1. Ակնարկ Թաթէոս և Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեան վերայ, որ կրկնուեց 303 տարի յետոյ Լուսաւորչի օրով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Բացուած է առտպագրութիւն

„БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЕЦКИ АРМЯНАМЪ“

(ԵԼԻՍԱՓԵՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ)

ԳՐԱԿԱՆ—ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ:

Ժողովածուի մէջ, ի միջի այլոց տպուած կըլինեն ոտանաւորները—պ. պ. Կ. Բ.-ի, Ա. Մ. Ժեմչուժնիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելօուսովի. Վ. Գօլովաչևսկու, Սավելիեվի, Բալմոնտի, Ֆ. Է. Կօրշի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բօրավիկովսկու, Ն. Կ. Ալիբեկեանցի, Ս. Ի. Զաքօտինի, Կօշեվիչի, Իվանդա-Մարիայի, Վ. Բելօուսովի, Կանսոնի, Կ. Ծատուրեանի, Ց. Թումանեանի և այլոց։ Նամակները—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալթիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տօլստոյի (լիակատար ֆակսիմիլէ)։ Ձրոյցներ.—Գ. Ն. Մամին Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի, Վ. Գ. Կօրօլէնկոյի, Ն. Ն. Զլատովրատսկու, Աստախովի, Ն. Գ. Տելեշովի, Ա. Ա. Վեսելօվսկու և այլոց։ Հետեւեալ պրօֆեսօրների յօդուածները.—Պ. Ի. Մելիւկովի (Գրանովսկու դասախօսութեանց անյայտ դասընթացը), Ի. Բ. Թարխանովի, Մ. Մ. Կովալեվսկու, Կ. Ա. Թիմիրազիեվի, Ա. Ն. Կարիշեվի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Ստօրօժենկօ, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելօվսկու. Գ. Ա. Խալաթեանցի, կոմսուհի Պ. Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վէնեվիտինովի, Մ. Վ. Նիկօլսկու, Գ. Ե. Քանանեանցի, Վ. Ա. Գօլցեվի, Բուկվայի, Դիօնէօի, Պ. Ա. Բելօգօլօվիի, Բարօն Շտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, գեներալ Պօտտոյի, Պ. Ն. Օբնինսկու, Ա. Ն. Սազանովի, Ա. Ս. Խախանովի, Զորաեանի, Վ. Ե. Երմիլովի, Վ. Վ. Վերեշչագինի, իշխան Է. Է. Ուխտոմսկու, Վ. Ա. Գօլմստրէմի, Ս. Գ. Մախալովի. Լ. Զ. Մսերեանցի, Վ. Ե. Երմիլովայի, Գ. Ա. Զանչեանի, Իւ. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և այլոց։

Իրրև յաւելուած կըլինեն Ց. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի ծաղկանկարները, աւելի քան 100 տեսարան և տիպեր Անդրկովկասի և Տաճկական—Հայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, պատկերներ, ի միջի այլոց Բելինսկու, նրա ընտանիքի, Գրանովսկու, Սալտիկովի, կոմս Լօռու—Մելիքեանի, Բելօգօլօվիի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զարուդնու, Մկրտիչ Ա. Կաֆտուղիկոսի, Հայր Ալիշանի, Ագամեանի, գեներալ Լազարեանի, Տ. Ղուկասեանի, Շելկովնիկեանի, Ց. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանեանի և այլոց։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆՈՒՈՒՄ Է. «Ռուսկիյա Վեդոմոստի» լրագրի գրասենեակում, նոյնպէս կարբասնիկովի (Մախովայա) «Տրուդ» (Տվերսկայա), «Նովոյէ Վրեմիայի» և Վօլֆի (Կուզնեցկիյ Մօստ) «Ռուսսկայա Միսլի» (Նիկիտսկայա) գրավաճառանոցներում։

Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 4 *ռուբ.*, *շրկղ տրի վրայ* 5 *ռուբլի, գրքի լոյս տեսնելուց յետոյ գինը կաւելանայ։*

Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6, кв. 1.

Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւնները բարեհաճեն արտատպել ներկայ յայտարարութիւնը։

Տպագիր—Գր. ՋԱՆՇԵԱՆ.

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաճառուում են
ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ·

		Ռ.	Կ.
1·	Վկայաբանութիւն ԳՈՐԻԱ և ՇՄՈՆԻ· (Նգաթանգեղոսի աղբիւրներից)· —գրեց Գ. ՏԷՐ—ՄԿՐՏՉԵԱՆ	—	50
2·	ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ· (Գ· գրքույկ) —գրեց ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ	—	20
3·	ՍԲԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ· ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՑԵԱՆՑԻ . . .	1	—
4·	ՆՈՅՆ, ՆՈՐ ՈՒԽՏԻ (Պատկերազարդ) ·	—	50
5·	ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ, թարգմանեց Գերմաներէնից ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ Ա—ժ· գիրք, իւրաքանչիւր գիրքը ·	—	20
6·	ՍՈԿՐԱՏԱՑ ՍՒԼԼԱՍՏԻԿՈՍԻ եկեղ· պատմ· Աշխատ· ՄԵՍՐՈՊ Վ. Տ. ՄՈՎՍԻՍԵԱՆ	2	—
7·	ՍՈԿՐԱՏԱՑ (փոքր) պատմ եկեղ· Մ·Վ·Տ·Մ·	—	60
8·	ՏԷՐ—ՊԵՏՐՈՍ Ա·ԳԵՏԱԴԱՐՁ·Կ.ԿՈՍՏԱՆԵԱՆ—	—	10
9·	ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ· Դ· գրքույկ· . . .	—	20
10·	ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ Մ· Գիւլէռ-ի, թարգմանեց Ս. Մ.	—	60
1·	ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս· ԿԱՐԳԸ, ԱՐՇԱԿ ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆԻ . .	—	60
2·	„ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԷՏԻՑ“ ԳՐԻԳՈՐԻ ԽԱԼԱԹԵՑՒՈՅ, հրատ· ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆ	—	15

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

1· Պարթեւները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները Հայոց հետ, Ն. Քարամեան·

2· Նկարագրութիւն վարուց Յովսաւոփու որդւոյ Թագաւորին Հնդկաց, ալեխատ· Մեսրոպ Վարդապետի:

5· Գիրք Մնացորդաց· Գր· Խալաթեանց:

Գնահատված գիրքերին 20% զեղչ·ով:

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ
Տպագրութեան համար
ՄԱՏՋԵԼԻ ԳՆԵՐՈՎ
Ընդունուում են
Դասական, Գրական, Գիտական
ԳՐՔԵՐ·

ԳՐԱՄԵՆՆԵՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Տօմարներ, Հաշուեցոյցեր, Հաշուեմղրներ,
Ծառա-յայտերէ:
Վերնատպութիւն նամակի և մրարի·
ԻՒՐ
ԿԱԶՄԱԲԱՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ
Ընդունուում են կազմելու
Տօմարներ, Տետրակներ, Գրքեր,
ՊԱՐԶ ԵՒ ՈՍԿԵԶՕԾ·

Պայմանների համար պիտի դիմել Տպարանական Ժողովին:

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԴՀԻՆ
ՉԱՆԳԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԻՆԺԵՆԵՐՆԵՐ
ԵԱՐԱԼԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ՏՓԽԻՍՈՒՄ
ՁՈՒԼՈՒՄ Է ՆՈՐԵՐԸ ԵՒ ՎԵՐԱՁՈՒԼՈՒՄ Է ՀՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ
(մինչև 1000 փութ կշռով)·

Գործարանում ձուլուած զանգակները յայտնի են իւրեանց գեղարուեստական ձեւերով և հիանալի ձայնով· զանգակի վերայ նկարուում են սրբերի պատկերներ համաձայն պատուէր տուողների ընտրութեան: Մանրամասնութիւնների՝ ամեն լեզուներով:

Խնդրում են պատուէրները ուղղել՝ Въ контору чугунно—литейнаго, машино—строительнаго и колокольнаго заводовъ инженеровъ Яралова и Алиханова, Тифлисъ, Александровская ул., собственный домъ, вблизи вокзала.